



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	1
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.....	3
ՏԱՐԵՎԵՐՁԻ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ	3
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ.....	6
ԱՐԺԱՆԱՊԱՏԻ ԱՊԱԳԱՅ ԵՆՔ ՈՒՆԵՆԱԼՈՒ.....	6
ԿԻՊՐԱՀԱՅ	8
ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՀԱՄԵՐԳ.....	8
ԲԱԺՆՈՒԱԾ ԿՂԶԻՆ	12
ԳԻՆԵՁՕՆ ԵՒ ՏԵՍԱՖԻԼՄԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ	12
ՎԱՐԴԱՆ ԹԱՇՃԵԱՆԻ ՏԱՂԱՆԴԻ ՆՈՐ ԲՈՆԿՈՒՄԸ.....	14
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԵԿՈՅ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՆԵՐՄԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ 850-ԱՄԵԱԿԻՆ	16
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ.....	17
ԹՐԱՄՓԸ...«ԹՐԱՄՓ»ԵՅ ԵՒ ՅԱԶՈՂԵՑԱԻ.....	17
ՔԱՌԱՄԵԱԿԸ ԿԸ ԼՈՒՍԱԻՈՐՈՒԻ ԹԷ՞՞ ԿԸ ՄԹԱԳՆՈՒԻ.....	17
ՀԱԼԷՊԸ ԴԱՐՁԵԱԼ Կ'ԱՐԻՒՆԻ.....	22
2023-24 ԱՐԱԲ-ԻՄՐԱՅԷԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ՄԷԿ ՏԱՐԻ ԵՏՔ, ՀԱՅ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԻՆ ՀԱՍԱՐ ՔԱՂԵԼԻՔ ԴԱՍԵՐ	24
ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻՒՌՔ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՈՒՂԻՆԵՐ.....	30
ՀԱՅԵՐԷՆԸ՝ ԱՆԿԼԵՐԷՆԻ ԵՒ ՖՐԱՆՍԵՐԷՆԻ ԲԱԽՈՒՄԻՆ ԸՆԴՄԷՁԷՆ	32
ՏԵՍԱԿԷՏ	37
ՑԼԱՄԱՐՏ. «ՑՈՒԼ»Ի ՈՒ «ՔՈՒՐԶԻ ԿՏՈՐ»Ի՞ ՄԻՁԵԻ՝	37
ՄԻՁԻՆ ԱՐԵԻԵԼՔԻ ՔՈՒՐԱՅԻՆ ԸՆԴՄԷՁԷՆ	37
ՄԵՍՐՈՊԵԱՆ ԴԱՍԱԿԱՆ ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ	41
ՇԱՐՈՒՆԱԿ ԳԵՏԻՆ ԿԸ ԿՈՐՄՆՑՆԷ - (Ա. մաա)	41
ԼԱԻԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԻ ՓՆՏՈՏՈՒՔԸ ՏՕՆԱԿԱՆ ԱՅՍ ՕՐԵՐՈՒՆ	45
ՊԱՏԵՐԱԶՄ	48
«ՆՈՐ ՄԻՁԻՆ ԱՐԵԻԵԼՔ»Ի ՍՏԵՂԾՄԱՆ ՍԿԻՁԲԸ ՍՈՒՐԻՈՅ ԱՍԱՏԻ ԱՆԿՄԱՄԲ	50
ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ.....	53
ՓՈՒՆՁ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ.....	53
ԿԵԱՆՔԸ՝ ՈՒԹՍՈՒՆԷՆ ՎԱՐ ԵՒ ՎԵՐ	57
ԵՐԿՈՒ ՌՈՒԲԷՆՆԵՐ՝	59
ԶԱՐԴԱՐԵԱՆ ԵՒ ՈՐԲԵՐԵԱՆ - 150	59



ԼԵԶՈՒՆ ԵՒ ԱՅԼ ՀԱՐՑԵՐ	62
ՕԼԿԱ ԲԱԴԱԼ ՄԱՃԿԱԼԵԱՆ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՄԱՍԻՆ.....	65
ԱԿՆԹԱՐԹՆԵՐ	67
ՔԱՌԵԱԿՆԵՐ.....	70



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՏԱՐԵՎԵՐՁԻ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ



Տարին կ'աւարտենք աշխարհաքաղաքական խառնաշփոթ, բարդ պայմաններու տակ՝ պատերազմներ, ցեղասպանութիւններ, բռնագրաւումներ, ւաւերածութիւններ...Այս բոլորը «գերքաղաքակիրթ» մեր դարուն, ուր կան հրաշագործ գիտահնարքներ, արհեստական բանականութիւն, եւայլն: Բայց կան նաեւ ու մանաւանդ ոյժի ցուցադրութեամբ արբեցած, աշխարհի տիրակալութեան տենդով մոլեգնած ոյժի կեդրոններ եւ անոնց հետ ածանցեալ մութ ոյժեր, որոնց համար չկան մարդկային իրաւունքներ ու արժէքներ, կայ միայն շահը, իշխելու անյագուրդ կիրքը...: Ահա թէ ինչո՞ւ անոնք կը հրահրեն պատերազմներ, ինչ որ քաղաքակրթութեան ահաւոր պարտութիւնն է բարբարոսական բիրտ ոյժին:

Տակաւին, ԱՄՆ նոր նախագահի անակնկալ ընտրութեամբ, անկանխատեսելի ժամանակահատուած մը կը թեւակոխէ աշխարհը, քանզի Տոնալտ Թրամփը անգուշակելի անհատականութիւն է: Աւելի ճարպիկ եւ խորամանկ գործարար է ան, քան քաղաքական գործիչ: Հարցադրումները շատ են: Արդեօ՞ք ի վերջոյ ան վերջ պիտի դնէ Ուքրանիայի պատերազմին, ինչպէս խոստացեր էր իր նախընտրական խոստումներուն ընթացքին: Արդեօ՞ք ան պիտի կարենայ Նաթանիահուի ցեղասպան ձեռքը բռնել եւ վերջ դնել Կազայի հրթիռակոծումներուն...: Պիտի կարենա՞յ Էրտողանի, Ալիեի նուաճողական, ծաւալողապաշտ ախորժակները զսպել, որոնք անյագուրդ կը թուին ըլլալ: Ի՞նչ ընթացք պիտի կարենայ տալ Սուրիոյ բռնագրաւումին ու մասնատումին ... Բայց հաստատապէս, ներկայ աշխարհակարգը կրնայ կտրուկ փոխուիլ Թրամփի պաշտօնավարութեամբ որպէս ԱՄՆ նախագահ եւ դարակազմիկ իրադարձութիւններ կրնան տեղի ունենալ՝ աշխահաքաղաքական, քաղաքակրթական թէ այլ: Ինչ լուծումներ ալ կիրարկէ ան, մէկ բան վստահաբար պիտի մնայ անփոփոխ.- ԱՄՆու գերակայութեան հզօրացման ուղղուած իր պաշտօնավարութեան գերնպատակը՝ AMERICA FIRST:



Ինչ կը վերաբերի մեր երկրին՝ Հայաստանին, Թրամփը իր նախընտրական ելոյթներուն ընթացքին եւ ի պատասխան Քամալա Հարիսի մէկ հայանպաստ արտայայտութեան ըսած էր, թէ եթէ Պայտըըն այնքան հայամէտ է, ինչո՞ւ ան աջակցութիւն ցոյց չտուաւ քրիստոնէայ հայերուն, երբ Արցախը շրջափակման մէջ էր, կամ երբ հայերը բռնի կը տեղահանուէին Արցախէն: Արդեօ՞ք Թրամփը պիտի կամենայ կամ կարենայ դեմ դնել Ալիեւի լկտի ոսնձգութիւններուն, մանաւանդ ինչ կը վերաբերի «Զանգեզուրի միջանցք»ի թուրք-ազերի վերահսկողութեան յաւակնութեան, մանաւանդ որ ան ամէտորական մեծ գործառնութիւններ ունի Ատրպէյճանի մէջ:

Եւ ի՞նչ հեզմանք որ բնապահպանման համաշխարհային մեծ Համաժողովը կայացաւ Պաքուի մէջ՝ ընթացիկ տարուան Նոյեմբեր 11-22 օրերուն...Արեւմուտքը արդեօ՞ք իրաւամբ կը կարծէր թէ Ալիեւին կը հետաքրքրէ կլիմայի հարցը այնքան, որ ան արժանի ըլլար հիւրընկալելու COP 29 Համաժողովը՝ կլիմայական փոփոխութիւններու գլխաւոր օրակարգով: Իսկութեան մէջ, Ալիեւը կլիմայէն ոչ մէկ գաղափար ունի: Ան այդ հարթակը օգտագործեց իր քստմնելի յանցագործութիւնը կոծկելու, քաղաքական առաւելներ (dividends) շահելու նպատակով եւ նոյնիսկ սոնքաց որ ինք հակա-ահաբեկչական գործողութիւն իրականացուց, այդպէս մեկնաբանելով Արցախէն 120,000 մեր հայրենակիցներու բռնի արտաքսումն ու տեղահանումը իրենց հայրենի բնօրրանէն: Ան ոչ մէկ գաղափար ունի յայտնապէս բնապահպանական եւ կլիմայական փոփոխութեան հարցերուն մասին, համարելով որ նաւթը, կազը Աստուծոյ պարգեւն են, այնպէս ինչպէս արեւն ու հողը...Ալիեւի ցեղասպան եւ մարդկային իրաւունքները կոխկոտող պահուածքը հազիւ թէ կոծկուէր դրամի, կեղծիքի եւ ոյժի նման ցուցադրութեամբ: Վկայ որ աշխարհի հզօր երկիրները իրենց առաջին դէմքերով ներկայ չեղան եւ տեսակ մը պոյքոթեցին նման կարեւոր միջոցառումը, լաւ գիտնալով Ալիեւի յանցագործ վարքն ու կերպարը: Հայաստանը անշուշտ ճիշդ գործեց չմասնակցելով այս Համաժողովին, երբ տակաւին հայ գերիներ կը խոշտանգուին Պաքուի բանտերուն մէջ, երբ մեր պատմամշակութային կոթողները կը պղծուին շարունակաբար Արցախի տարածքին...եւ անպատիժ մնացած Ալիեւը կը յոխորտայ նորանոր «քաջագործութիւն»ներով, միշտ իր թիկունքին ունենալով իր ասագ եղբօր՝ Թուրքիոյ Էրտողանի աջակցութիւնը, թուրանական գաղափարախօսութեան անշեղ գործադրութեամբ:

Այս պայմաններու տակ, «ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»ը ցնորք է պարզապէս, երբ Ալիեւը նոր-նոր նախապայմաններ կը դնէ Հայաստանի առջեւ՝ Եւրամիութեան խաղաղապահ դիտորդներու հեռացումէն մինչեւ հայոց բանակի ապասպառազինում... մեր երկրի Սահմանադրութեան փոփոխութիւն, Ցեղասպանութենէն եւ մեր Պահանջատիրութենէն, նոյնիսկ Արարատի տեսլականէն հրաժարում: Զիջումներու պահանջները կանգ պիտի չառնեն ընդհուպ մինչեւ յերիւրածոյ «Արեւմտեան Ատրպէյճան»ի պահանջը ու դեռ աւելին: Քանզի Ալիեւի բուն նպատակը Հայաստանի ոչնչացումն է: Յստակ ու մեկին: Մենք մեզ չիարենք: Խաղաղութեան պայմանագրի գինը Հայաստանի չգոյութիւնն է:

Իրաւ խաղաղութիւնը կը հաստատուի հզօրանալով ռազմականօրէն, կրթութեամբ, գիտութեամբ, տնտեսութեամբ, ամուր դիւանագիտութեամբ եւ պետական հաստատութեանց



հզորացմամբ եւ արդիւնաւետութեամբ: Մենք մեր մէջէն պէտք է դուրս վանենք վախի, յանձնառողականութեան եւ նման յուսալքման ու բարոյալքման ամէն տրամադրութիւն: Ըլլանք սթափ եւ զգօն: Մեր ժողովուրդին վրայ գործադրուած ու դեռ գործադրուող ոտնձգութիւններուն գուցէ ամէնէն սհաւորը՝ զայն հոգեւոր ցեղասպանութեան ենթարկելն է, իրմէ իլելով իր ինքնութիւնը, պատմութիւնը, մշակոյթը, իր տեւականը, իր հայրենասիրութիւնը, իր բարոյական արժէքները, իր խիզախ ու արժանապատիւ վարքագիծը...: Մենք անչափ զգոյշ պիտի ըլլանք եւ օդին մէջ պիտի չնետենք անհեթեթ միտքեր ու գաղափարներ, որոնք ազգային մեր ինքնութեան ժխտումն են, մանաւանդ ՀՀ վարչապետին իսկ բերնով...Արարատի մասին, Արեւմտեան Հայաստանի մասին եւ այսպէս շարունակ:

Մենք պիտի չկորսնցընենք ազգային մեր ինքնաճանաչումն ու ինքնագիտակցութիւնը, մեր զգօնութիւնը: Մեր արժանապատուութիւնը:

Չուզահեռարար, Մենք համայն հայութեան ՄԻԱՄՆԱԿԱՆ ԿԱՄՔՈՎ, ՄԻԱՄՆԱԿԱՆ ՈՅԺԵՐՈՎ պիտի պաշտպանենք մեր երկիրը, անոր անվտանգութիւնը, անոր պաշտպանողականութիւնը: Համահայկական ոգիով, վերկուսակցական, վերհատուածական գիտակցութեամբ ու կամքով պիտի ՀԱՄԱԽՄԲՈՒԻՆՔ հայրենիքի փրկութեան, մեր պետականութեան հզորացման շուրջ: Միաժամանակ՝ ռազմական դաշնակիցներ պիտի գտնենք ու անհրաժեշտ ռազմական պայմանագիրներ կնքենք՝ Իրանի հետ, Ֆրանսայի հետ, Հնդկաստանի, ԱՄՆու հետ կարելի փութով, անյապաղ: Առանց, սակայն, ապաիւնողականութեան կամ փրկիչներ որոնելու մեր ախտագին մտայնութեան:

Հայաստանի եւ հայ ժողովուրդի փրկութիւնը մեր հաւաքական ոյժին մէջ է գերազանցօրէն: Մեր պետականութեան հզորացման մէջ: Մեր կազմակերպուած, նպատակասլաց, արիակորով եւ ամբողջանուէր ոյժին մէջ, զոր կերտելու ենք քրտնաջան, հետեւողական եւ ծրագրուած աշխատանքով: ՄԷԿ ԱԶԳ, ՄԷԿ ԱԶԳԱՅԻՆ ՈԳԻ, ՄԷԿ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ համահայկական մտածողութեամբ ու տեսլականով:

Այս խորին գիտակցութեամբ եւ յանձնառութեամբ հրաժեշտ կ'առնենք 2024-էն եւ կը դիմաւորենք Նորը՝ 2025-ը:

Բարի եւ խաղաղ Նոր Տարի եւ Ս. Ծնունդ բոլորին, հայոց աշխարհին:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՀԱՐՑԱԶԲՈՅՑ

ԱՐԺԱՆԱՊԱՏԻ ԱՊԱԳԱՅ ԵՆՔ ՈՒՆԵՆԱԼՈՒ



Զրոյց ակադեմիկոս ՌՌԻԲԷՆ ՍԱՖՐԱՍՏԵԱՆԻ հետ

-Պարո՛ն Սաֆրաստեան, հոկտեմբերի 24-ին ՀՀ գիտութիւնների ազգային ակադեմիայում կնքուեց համագործակցութեան յուշագիր ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտի և ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի միջեւ: Համագործակցութեան ի՞նչ շրջանակ է ենթադրում յուշագիրը:

-Յուշագիրը ստորագրող կողմերը նախատեսում են ընդլայնել գիտակրթական համագործակցութիւնը, ինչպէս նաև ընդգրկել հետազոտական նոր ուղղութիւններ: Այս համատեքստում կարելու է հիմնարար և կիրառական հետազոտութիւնները Հարաւային Կովկասի, Մերձաւոր և Միջին Արեւելքի անվտանգային հարցերի վերաբերեալ, ինչպէս նաև Իրանի, Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի քաղաքական համակարգերի ուսումնասիրութեան ոլորտում: Հետազոտութիւններ են իրականացուելու զինուած ուժերի, արտաքին քաղաքականութեան հայեցակարգային շրջանակների և ռազմավարական, տնտեսական, էթնիկական ու կրօնական ուղղութիւններով: Համատեղ տեղեկատուական-վերլուծական աշխատանքներ են իրականացուելու՝ Մերձաւոր Արեւելքում տարածաշրջանային և արտատարածաշրջանային ուժային կենտրոնների շահերի և դերակատարման թեմաներով, Հայաստանի Հանրապետութեան քաղաքականութեան առանցքային ուղղութիւնների, համաշխարհային և տարածաշրջանային հակամարտութիւնների և ռազմական գործողութիւնների վերաբերեալ և այլն: Կողմերին հասանելի կը լինի միջազգային գիտատեղեկատուական շտեմարանների նիւթերի փոխանակումը, նրանք կը կարողանան համատեղ օգտագործել գրադարանային ֆոնդերը: Նաև իրականացուելու է երկուստեք հետաքրքիր թեմաների և խնդիրների վերաբերեալ մասնագիտական խորհրդատուութիւն:

-Դուք համագործակցում էք նաև Վազգէն Սարգսեանի անուան ռազմական ակադեմիայի հետ:



-Այո՛, իմ կապը բանակի հետ առաջին հերթին գիտական է: Այս տարի Վազգէն Սարգսեանի անուան ռազմական ակադեմիայում ես մասնակցել եմ գիտաժողովի, գիտական զեկուցումով եմ հանդէս եկել:

-Նոյեմբերի 8-ին պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեանի ուղեկցութեամբ՝ ՀՀ ԳԱԱ պատուիրակութիւնը այցելեց սահմանագծովի՝ տեղում ծանօթանալու սահմանային ու թիկունքային պահպանութեան տեղամասերում իրականացուող աշխատանքների ընթացքին: Դուք նոյնպէս պատուիրակութեան կազմում էիք: Ինչպիսի՞ տպաւորութիւններով վերադարձաք առաջնագծից:

-Այցելութեան ընթացքում կարողացայ ականատես լինել կատարուած լուրջ շինարարական աշխատանքներին: Տեսածս յոյս է ներշնչում, որ մեր բանակը ուժեղացնում է իր պաշտպանական հնարաւորութիւնները:

-Վերջին շրջանում մտաւորականների, լրագրողների այցելութիւնները առաջնագիծ դարձել են պարբերական: Նման միջոցառումներն այնքան են կարեւորում, որ անձամբ պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեանն է ուղեկցում հրաւիրուածներին: Ձեր կարծիքով՝ այս հաշուետուողականութիւնն ու թափանցիկութիւնը որքանո՞վ է արդիւնաւէտ և ի՞նչ շարունակութիւն է ենթադրում...

-Կարծում եմ՝ կարեւոր են, քանի որ այցելութեան ընթացքում սեփական աչքերով իրականութիւնը տեսնելու հնարաւորութիւն է տրուում: Ինձ համար շատ կարեւոր է, որ ՀՀ բանակը լինի ուժեղ, ունենայ հզօր ազգային ոգի: Յաղթահարելով բոլոր դժուարութիւնները՝ մեր բանակը պիտի զինուի ժամանակակից զենքերով, որ կարողանայ պաշտպանել Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը: Մեր ժողովուրդը անցել է շատ ծանր պատմական փուլերով, հարիւրամեակներով ինքնիշխանութիւն չի ունեցել, բայց կարողացել է վերականգնել իր պետականութիւնը: Մենք պէտք է պահպանենք, փայփայենք, գուրգուրենք մեր պետականութիւնը: Հայերը հզօր ու հետաքրքիր քաղաքակրթութիւն ստեղծած ժողովուրդ են, նրանք շատ բան են տուել աշխարհին: Մենք երկար ճանապարհ ունենք անցնելու եւ բազմաթիւ ազգային նպատակներ ունենք իրագործելու, բայց այս փուլում մեր ամենակարեւոր խնդիրը բանակը հզօրացնելն է ու մեր պետականութիւնն ու տարածքային ամբողջականութիւնը պաշտպանելը:

-Ո՞րն է ամենակարեւոր քայլը այս ճանապարհին:

-Համախմբուելը՝ որպէս հայութիւն: Պիտի մէկտեղել բոլոր ուժերը՝ և՛ Հայաստանի, և՛ Սփիւռքի հնարաւորութիւնները օգտագործել: Ես հաւատում եմ մեր ժողովրդի կենսունակութեանը, ուժին ու իմաստութեանը, վստահ եմ, որ արժանապատիւ ապագայ ենք ունենալու:

ԳԱՅԻԱՆԷ ՊՕՂՈՍԵԱՆ
ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐ

ԿԻՊՐԱՀԱՅ

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՀԱՄԵՐԳ



Նիկոսիոյ Ս. Աստուածածին Մայր եկեղեցւոյ Երգչախումբերը Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան տօներուն առթիւ հոգեպարար Համերգ մը հրամցուցին կիպրահայութեան՝ Շաբաթ 14 Դեկտեմբեր 2024-ին, երեկոյեան ժամը 19:00-ին Ս. Աստուածածին Մայր եկեղեցւոյ մէջ: Համերգը կը վայելէր հովանաւորութիւնը Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ Գերաշնորհ Տ. Կոմիտաս Ալեքեայիսկոպոսի եւ նախագահութիւնը Պետական Ներկայացուցիչ Տիար Վարդգէս Մահտեսեանի:

Չորս երգչախումբերը՝ Երեցներու, Պարմանուհիներու եւ Երիտասարդներու, Կրտսերներու եւ Փոքրիկներու՝ իրենց Ս. Ծննդեան երգերով՝ հայերէն, անգլերէն եւ յունարէն, տօնական ջերմաջերմ մթնոլորտ մը ստեղծեցին, լուսեղէն եւ ոգեղէն: Տիկ. Վիքի Գույումճեան եւ Տիկ. Զարա Բարխուդարեան փոխն ի փոխ եւ ձեռնհասօրէն ղեկավարեցին երգչախումբերը: Դաշնակի նուագակցութիւնը կատարեցին երեցկին Թամար Հապէշեան եւ Տիկ. Ալիսա Ոսկանեան: Զուրակի ընկերակցութիւնը կատարեց Յասմիկ Մարգսեան, Ֆլութի ընկերակցութիւնը՝ Խրիստինա Էֆտիմիուն, իսկ քանոնի ընկերակցութիւնը՝ Տիկ. Ալիսա Ոսկանեան:

Խմբերգերը ընդգրկեցին Ս. Ծննդեան սիրուած երգեր, ինչպէս «Լուս Գիշեր»ը, «Ծնունդ»ը, «Carol of the Bells»ը, «Նոր Տարի»ն, «Ով Սուրբ Գիշեր»ը եւ այլ: Շատ տպաւորիչ եւ աղօթաբոյր հնչեցին վերջին երկու երգերը յատկապէս՝ «Ուրախ Աշխարհ»ը եւ «Աւետիս»ը, որոնք կատարուեցան բոլոր երգչախումբերու կողմէ միասնաբար, ղեկավարութեամբ Տիկ. Վիքի Գույումճեանի, յուզելով եւ ոգեշնչելով ներկաները:



Երգչախումբերու Կազմակերպիչ Յանձնախումբի ատենապետ Տիար Ալէք Ալթունեան իր շնորհակալութեան խօսքին մէջ բարձր գնահատեց Երգչախումբերու անդամ-անդամուհիները, դեկավարները, ծնողները, որոնց տքնաջան աշխատանքին շնորհիւ կայացաւ տօնական հոգեպարար Համերգը: Ան յատկապէս ըսաւ. «Տարիներ շարունակ սերունդներ եկան ու գացին, բայց նոյն նուիրումով շարունակեցին պահպանել հայ երգի հրաշալիքը: Այս ծառայութիւնը մէկ մասն է մեր եկեղեցական ու ազգային նուիրումին, եւ մենք զայն կը կատարենք յանուն հայ արուեստի շարունակականութեան: Երգչախումբի 4 տարբեր խումբերու ներկայութիւնը կը հաստատէ, որ երգն ու մշակոյթը ունին զօրութիւն սերունդները կապելու»: Ան անուն առ անուն յիշատակեց այն բոլոր անդամ-անդամուհիները, որոնք տանամեակներով ջանք ու եռանդ չեն խնայած շէնցնելու մեր եկեղեցին իրենց երգերով եւ անսակարկ նուիրումով:

Մասնաւոր գնահատանքի արժանացաւ յատկապէս՝ յիսուն տարի անընդմէջ եկեղեցւոյ անխոնջ ծառայած, անոր բոլոր աշխատանքներուն իր աշխոյժ եւ բոլորանուէր մասնակցութիւնը բերած Տիկ. Անահիտ Էսքիճեանը: Պրն. Ալթունեան յատկապէս նշեց. «Ան աւելի քան յիսուն տարիներէ ի վեր, միշտ ներկայ է երգչախումբէն ներս: Օրինակելի մայր մը, տիկին մը, ազգային ու եկեղեցական կեանքին անձնագոհ նուիրեալ մը, որ բոլոր սերունդներուն համար եղած է հոգատար հարազատ մը: Ուսուցիչ Նարեկ վարժարանէն ներս: Դաստիարակ Կիրակնօրեայ դպրոցներու, պատասխանատու պաշտօններ ստանձնած գաղութին եկեղեցական ու վարչական մարմիններէ ներս: Գործօն մասնակից Հայ Եկեղեցւոյ տարբեր միջոցառումներու, համագումարներու եւ ժողովներու, միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական յարաբերութիւններու մասնակից եւ Հայ Եկեղեցւոյ ու Քրիստոնէութեան գիտակ եւ պաշտպան: Եռանդուն կերպով մասնակից գաղութի տիկնանց եւ բարեսիրական շարժումներուն: Իր քաղցր եւ հրապուրիչ լեզուով եւ լայն կապերով սրտամօտ բոլորին: Կիպրահայ ազգային-մշակութային եւ եկեղեցական կեանքի տրոփներուն հետ քայլ պահող, ներկայութեամբ քաջալերող, անկեղծօրէն գօտեպնդող եւ սատարող: Հայրենիքի նկատմամբ խոր ու լաւատեսօրէն սէր ու յարգանք ունեցող: Ամէն Կիրակի պատարագին իր թոռներուն հետ եկեղեցին շէն պահող եւ տիպար մայր ու մեծ մայր, որ մեծապէս սիրուած ու յարգուած է շրջապատէն: Ո՞վ չի ճանչնար, ինչպէս կ'ըսենք՝ տիկին Անօն: Նոյնիսկ գաղութէն հեռու շատ մարդկանց ու ազգայիններու հանրաճանաչ անուն մըն է ան: Այս առթիւ մեր խորին երախտագիտութիւնն ու շնորհակալութիւնները վաստակաշատ եւ միշտ երիտասարդ տիկին Անահիտ Էսքիճեանին: Թող Աստուած Իր ամենազօր շնորհքով՝ առողջ եւ երկար կեանք պարգեւէ ձեզի՝ ի փառս մեր եկեղեցւոյ ու գաղութին»:



Իր օրհնութեան խօսքին մէջ, Կոմիտաս արքեպիսկոպոսը ըսաւ թէ եկեղեցին ցնծութեան մէջ էր, շնորհիւ Երզնայի մերձակա հրամցուցած քացրահունչ երգերուն, անոնց ղեկավարներուն, նուագակցողներուն, ծնողներուն եւ ներկաներուն: Արդարեւ, բոլորը միասնաբար կրցան ստեղծել տօնական օրերու խորհուրդն ու շունչը, աւելցուց ան, կոչ ընելով որ մեր տաճարները պէտք է լեցուին հաւատացեալներով Կիրակի օրերը եւ բոլոր տօներուն: Արքեպիսկոպոսը մասնաւորապէս գնահատեց եւ գնահատանքի Գիրով պատուեց ազգային-եկեղեցական կեանքին իր ամբողջական եռանդն ու աշխատանքը մատուցած Տիկ. Անահիտ Էսփիճեանը, որ հարազատ մօր մը նման գուրգուրանք տաճած էր մեր Մայր եկեղեցոյ:



Երեկոյեան աւարտին, բոլոր ներկաները միասնաբար երգեցին Տէրունական աղօթքը խանդավառ մթնոլորտի մը մէջ:



Բիր յարգանք ու պատիւ Ս. Աստուածածին Մայր եկեղեցւոյ Երգչախումբերու վարչութեան, անոնց անդամներուն, խմբավարներուն, մասնակիցներուն, ծնողներուն, նուագակցող երաժիշտներուն եւ բարեկամներուն:

Բիր յարգանք ու պատիւ բոլոր անոնց, որոնք երկար տարիներ սիրով եւ անձնուիրութեամբ մասնակցած են Ս. Աստուածածին Երգչախումբին:

Եւ վերջապէս, պատիւ մեծ երախտաւորին՝ Տիկ. Անահիտ Էսքիճեանին, իր յիսունամեայ ազգանուէր եւ եկեղեցաշէն ծառայութեան համար:

Ե.Գ.

ԲԱԺՆՈՒԱԾ ԿՂԶԻՆ

ԳԻՆԵԶՕՆ ԵՒ ՏԵՍԱՏԻԼՄԻ ՑՈՒՑԱՂՈՒԹԻՒՆ

ՍԱԳՕ ԱՐԵԱՆ, ԳՐԱՊՈՐԿԱՍՏ, ՄԵԿՆՔԱՆ (ԳՆԱԿԻՐԵ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ)

Սագո Արեան (բուն անունով՝ Սարգիս Ղազարեան), ծնած է 1972 թուականին՝ Լիբանան: Ուսումը ստացած է Լիբանանի «Քառասուն Մանուկ» եւ «Սուրբն Խանամիրեան» Ազգային վարժարաններուն մէջ: Գեոնած է Պէյրութի Դամազգային Դպրատան Բարձրագոյն Գիւմարդի դասընթացներուն: 1997-ին տաաղած է բանաստեղծութիւններու առաջին ժողովածուն՝ «Տարտամ տորթ» խորագրով, իսկ 2000-ին՝ երկրորդ գիրքը՝ «Վանայի հարսանիքը»: 2022-ին հրատարակած է «33 ճպն Խթանակուլէն. Ինչպէս ճանչցայ պոլսահայերը» իր առաջին լրագրողական գիրքը, ուր հարցազոյցներու ճամբով փորձած է ներկայացնել այսօրուայ «հայկական Պոլիս»-ը: Աշխատած է Կիպրոսի Սեպտեմբեր վարժարանին մէջ: Թրքական է եւ կը թղթակցի «Գարուն», «Նոր դար», «Լաթիֆ», «Գրական թերթ», «Քաղիկ», «Գոյիզուն», «Ազատ», «Միջին», «Անարատ», «Դայաբա», «Մանուկ», «Յուսարէր», «Ապագայ» եւ հայրենի ու արտասահմանային թերթերու եւ ամսագիրներու:

2012-ին ընտանիքով հայրենադարձած է եւ հիմնած «Արեւելք լրատուական» կայքը: 2018-էն որպէս հեռուստամենարան աշխատակցած է «Շանթ», «Առաջին լրատուական» կայաններուն: 2024-ին հիմնադրած է «Արեւելք» կայքի «Եւրօ Սակեղծ Խօսակց» podcast-ը: Իրեն անկախ մեկնարան, իրատարանան թարգմանական իրատարածութիւններն արտաբերելով կը մեկնարանէ BBC, RT, Al Jazeera եւ մօտ 25 արարական, իրանեան եւ միջազգային արբանեակային լրատուամիջոցներով:

Ամուսնացած է, ունի երկու որդի:

Ուրբաթ 29 Նոյեմբեր 2024-ին, կ.ե. ժամը 7:30-ին, Նիկոսիոյ Առաջնորդարանի «Վահրամ Իւթիւճեան» սրահին մէջ, տեղի ունեցաւ շուրջ տասը տարիէ ի վեր հայրենադարձուած լրագրող, հրապարակախօս Սագո Արեանի «ԲԱԺՆՈՒԱԾ ԿՂԶԻՆ» գիրքի զինեձծօնը եւ նոյն գիրքին մէջ տեղ գտած զրոյց-վկայութեանց վրայ հիմնուած «ՎԻՐԱԻՈՐ ԿՂԶԻՆ» տեսաֆիլմի ցուցադրութիւնը: Տեսաֆիլմը կամ ժապաւէնը պատրաստուած է Սագո Արեանի, Arevelk Production-ի եւ Artsakank media-ի համատեղ գործակցութեամբ եւ նուիրուած է Կիպրոսի թրքական ներխուժման 50-րդ տարելիցին:

Զեռնարկը կը վայելէր հովանաւորութիւնը Թեմիս Կաթ. Փոլի. Տէր Կումիտաս Արք. Օհանեանի եւ նախագահութիւնը կիպրահայ համայնքի Պետ. Ներկ. Տէր եւ Տիկ. Վարդգէս Մահտեսեանի:

«Արձագանգ» մետիայի անունով, բացման խօսքով հանդէս եկաւ Պրն. Յակոբ Գագանճեան, նշելով օրուան իմաստն ու բովանդակութիւնը եւ ողջունելով Պրն. Սագո Արեանը իր կատարած արդիւնաւէտ աշխատանքին համար:

Ապա ներկաները մեծ հետաքրքրութեամբ դիտեցին «ՎԻՐԱԻՈՐ ԿՂԶԻՆ» տեսաֆիլմը, որ կը բաղկանայ Կիպրոսի թրքական ներխուժման շուրջ՝ կիպրահայ համայնքի քսան ճանչցուած անդամներու ապրած փորձառութիւններէ՝ իրենց իսկ վկայութեամբ: Ինչպէս կը գրէ Սագո



Արեան իր գիրքի «Երկու Խօսք»ին մէջ, «Առօրեայ լրագրողական նիւթերէն դուրս ինկած Կիպրոս ներխուժման թեման շատ արագ մարմին ստացաւ, շարադրուեցաւ ու Կիպրոսի մէջ ի մի բերուած բոլոր զրոյցները վերածուեցան զրքոյկի մը»: Նաեւ՝ վաւերագրական տեսաֆիլմի մը հիմնուած հաւաքուած տեսագրութիւններու վրայ:

Հեղինակը արդարեւ ընթացիկ տարուան մէջ հարցազրոյցներ կատարած է 1960-70-ականներու կիպրական դէպքերու ականատես խումբ մը հայերու հետ, որոնք կը պատմեն այդ օրերուն մասին, կը խօսին կիպրական հարցի լուծման իրենց պատկերացումներուն, ինչպէս նաեւ՝ յոյներու եւ թուրքերու հետ համատեղ նոյն կողմին մէջ ապրելու կարելիութիւններուն մասին: Կան նաեւ մասնագէտներու եւ այլոց տեսակէտները:

«ԲԱԺՆՈՒԱԾ ԿՂԶԻՆ» գիրքին գինեձօնը կատարեցին Գերաշնորհ Կոմիտաս Արք. Օհանեան, Արժանապատիւ Հայրեր Տէր Մովսիկ քինյ. Հապէշեան, Տէր Մաշտոց Քինյ, Աշգարեան, հիւրաբար Կիպրոս գտնուող Գերաշնորհ Տ. Թորգոմ Ս. Արք. Տոնոյան և Լիմասոլէն Գերապատիւ Յովհաննէս Ծ. Վրդ. Սաղտըճեան:

Իր շնորհակալութեան հակիրճ խօսքին մէջ, Սազօ Արեան անդրադարձաւ գիրքին ծննդոցին, շնորհակալութիւն յայտնեց գիրքին մեկենաս Պրն, Սեպուհ Արմենակեանին, Արձագանգ մետիային եւ հարցազրոյցի մասնակիցներուն:

Իր օրհնութեան եւ սրտի խօսքին մէջ, Թեմիս Կաթ. Փոխ. Տէր Կոմիտաս Արք. Օհանեան շեշտեց որ հայութիւնը ամէնուր պահանջատէրը պէտք է մնայ իր իրաւունքներուն, այդ ոգին փոխանցէ իրերայաջորդ սերունդներուն, քանզի նշեց ան, կայսրութիւններ կրնան փլուզուիլ, աշխարհաքաղաքական իրավիճակներ կրնան փոխուիլ, բայց կարելոր է որ մենք պատրաստ ըլլանք որպէս մէկ ու միասնական ժողովուրդ, որ տէրն է իր իրաւունքներուն: Ապա շնորհակալութիւն յայտնեց հեղինակին, մաղթելով անոր նորանոր յաջողութիւններ:

Հուսկ, գիրքի օրհնակները վաճառուեցան՝ հեղինակին մակագրութեամբ:

Ե.Գ.

ՎԱՐԴԱՆ ԹԱՇՃԵԱՆԻ ՏԱՂԱՆԴԻ ՆՈՐ ԲՈՆԿՈՒՄԸ

Հինգշաբթի 21 Նոյեմբեր 2024-ին, Նիկոսիոյ Սթրովոլոյսի Մշակութային Կեդրոնին մէջ, տեղի ունեցաւ տաղանդաւոր արուեստագէտ ՎԱՐԴԱՆ ԹԱՇՃԵԱՆԻ կեանքին ու գործին նուիրուած գիրքին շնորհանդէսը եւ իր նոր ցուցահանդէսի բացումը: Այս եզակի ձեռնարկին պաշտօնական բացումը կատարեց Կիպրոսի Հանրապետութեան Խորհրդարանի Նախագահ Ն.Վ. Տիկ. Անիթա Տիմիթրիու, որ բարձր գնահատանքով անդրադարձաւ Վարդան Թաշճեանի բացառիկ ներդրումին Կիպրոսի արուեստի ու մշակոյթի բնագաւառէն ներս: Ձեռնարկը իրենց ներկայութեամբ պատուեցին Թեմիս Կաթ. Փոխ. Գերաշնորհ Տէր Կոմիտաս Արք. Օհանեան եւ կիպրահայ համայնքի Պետական Ներկայացուցիչ Տէր եւ Տիկ. Վարդգէս Մահտեսեան:



Ցուցահանդէսը լայն արձագանգ գտաւ Կիպրոսի մամուլին մէջ եւ արժանացաւ դրուատիքի բազում խօսքերու, որպէս Վարդան Թաշճեանի նկարչական արուեստին նոր որակ ու մակարդակ բերող գործերու ցուցահանդէս: Անիկա անգամ մը եւս եւ նորովի արտայայտութիւն տուաւ Վարդանի ոգեշնչող արուեստին, հոգիներ կամարող անոր յաւերժախօս ոյժին գաղութ գաղութ եւ երկրէ երկիր...



Իր նկարագարդ, հոյակապ գիրքին մէջ, Վարդան Թաշճեան կը գրէ. «Ներշնչումներու գլխաւոր աղբիւրը Կիպրոսի բնութիւնն է, անոր պարզութեան, անմեղութեան ու գեղեցկութեան փնտռութիւնը»:

Յատկանշականօրէն, արուեստագէտը կ'արձանագրէ. «Կը նկարեմ ա՛յն ինչ կը զգամ, ոչ ա՛յն ինչ կը տեսնեմ»:

Գիրքը ձօնուած է իր սիրելի կողակիցին՝ Սիլվային:

ԱԶԱՏ ԽՕՍՔը ջերմօրէն կը շնորհաւորէ ՎԱՐԴԱՆ ԹԱՇՃԵԱՆԸ այս բարեբաստիկ առիթով, իրեն մաղթելով ստեղծագործական նորանոր ներշնչումներ եւ նուաճումներ: Ե.Գ.



ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԵԿՈՅ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻԻ 850-ԱՄԵԱԿԻՆ



Համազգայինի Նիկոսիայի «Յ. Օշական» Մասնաճիղի՝ նոր տարեշրջանի առաջին Մշակութային Երեկոն, նուիրուած Մեծն Ներսէս Շնորհալիի մահուան 850-ամեակին, տեղի ունեցաւ Ուրբաթ, 6 Դեկտեմբեր 2024-ին:

Երեկոյին ներկայ գտնուեցան Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդը, Հայ Համայնքի Պետական Ներկայացուցիչը, Լիմասոլի եւ Նիկոսիայի հոգեւոր հովիւները, ազգային մարմիններու եւ քոյր միութիւններու ներկայացուցիչներ:

Բանալով յայտագիրը, Արթօ Դաւիթեան վարչութեան անունով ներկայացուց օրուան բանախօսը՝ Տէր Կոմիտաս Արքեպիսկոպոս Օհանեանը, որ հմտօրէն պատրաստուած դասախօսութեամբ մը ներկայացուց Մեծ Հայրապետին կեանքն ու վաստակը:

Սրբազանը նախ նկարագրեց Կիլիկիոյ Թագաւորութեան ստեղծումին պայմանները, ու անոր զարգացումն ու ծաղկումը, շնորհիւ մտաւորական հոգեւորականներու փայլուն հոյլի մը, որոնց մէջ իւրայատուկ տեղ ունի Ներսէս Դ. Կլայեցի Կաթողիկոսը:

Կոմիտաս Սրբազան մէկ առ մէկ ներկայացուց այն հոգեւոր եւ մշակութային բնագաւառները, որոնց մէջ Շնորհալի իր ստեղծագործ հանճարով բարեկարգիչ դերակատարութիւն ունեցաւ: Ան ըսաւ նաեւ, որ Ներսէս Շնորհալի, իր բազմատաղանդ գործունէութեամբ, կրնայ իրաւամբ Հայոց երկրորդ Լուսաւորիչը կոչուիլ:

Ներկաները մեծ հետաքրքրութեամբ ունկնդրեցին Սրբազան Հօր դասախօսութիւնը, որուն ընթացքին ցուցադրուեցան նաեւ երկու տեսանիւթեր՝ Շնորհալիի յօրինած շարական մը եւ Կիլիկիոյ Թագաւորութեան մասին փոքր երիգ մը:

Երեկոն փակուեցաւ հիւրասիրութեամբ, որուն ընթացքին շարունակուեցաւ հոգեշահ խօսակցութիւնը:

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԹՐԱՄՓԸ...«ԹՐԱՄՓ»ԵՑ ԵՒ ՅԱԶՈՂԵՑԱԻ.

ՔԱՌԱՄԵԱԿԸ ԿԸ ԼՈՒՍԱԻՈՐՈՒԻ ԹԷ՞ ԿԸ ՄԹԱԳՆՈՒԻ

Պարոյր Յ. Աղպաշեան



Տոնալտ Թրամփը, ի վերջո՛յ, իր «մուրազ»ին հասաւ.

Եւ եղաւ 47րդ նախագահը Ամերիկայի Միացեալ Նահանգներուն:

Դիրին եղաւ թէ դժուար, հարցը այդ չէ, այլ՝ իր փառամոլութիւնը ու վճռակամութիւնը. յամառութիւնը եւ անտեղիտալիութիւնը, որոնք երբեք դադար եւ ընդհատում չունեցան, անցնող չորս տարիներուն, երբ երկրորդ շրջանի մը համար, իր ընտրութիւնը ձախողեցաւ:

Ահաւասիկ, ներկայիս, ան նուաճած է Սպիտակ Տան... ոսկեայ աթոռը, նախ՝ իր համակիրներուն ու հետեւորդներուն հաստատելու, թէ ինք կը մնայ ամենէն ուժականը ու արժանատիը, ապա՝ իր հակառակորդներուն փաստելու, թէ ինք՝ անժամանցելի եւ անփոխարինելի է:

Իրաւունք ունի թէ ոչ, ատիկա ի՞նչ նշանակութիւն ունի, քանի՛ իրեն հետաքրքրողը «բարձունք»ին վրայ թառիլն ու թռչիլն է, այլեւ՝ հոն մնալ ու յամենալը, անկէ դիտելու ու վայելելու աշխարհը, հոնկէ գնահատելու ու խորաչափելու մարդկութիւնը, չէ՞ որ ան ինքզինք կը նկատէ ամենագօրը, ամենամեծը, ամենահեղինակաւորը, ամենակարողը:

Միւս կողմէ, սակայն, արդեօք կը կարծէ կամ համոզուած է ան, որ ինք պիտի կարենայ լուծումի կամ դարմանումի եզրեր գտնել, աշխարհի տարածքին կուտակուած ու տարածուած քաղաքական-ապահովական-տնտեսական հանգոյցներուն, որոնք կը վիտան ու կը խլրտան ամենուրեք:

Աւելին. ներամերիկեան տագնապները, իրենց բազմազան օրակարգերով ու բազմաբնոյթ թղթածրարներով, սկսած են հասնիլ մտահոգիչ սահմաններու, մեծապէս ահազանգային դարձնելով ժողովուրդին մեծ մասը, արդեօք, այս պարագային, ան պիտի կարենա՞յ



համահունչ ու խորաշունչ փրկութեան հնարքներ գտնել, հանգստացնելու ամերիկեան հասարակութիւնը:

Անշուշտ, Թրամփը, միշտ լուսատեսութեամբ ու գոհունակութեամբ կը շարժի ու կ'ուզէ հաւատացնել ժողովուրդը, թէ ամէն ինչ բնականոն ընթացք մը պիտի ստանայ, որովհետեւ, ըստ իրեն, իր մտածումներունու հեռանկարներուն մէջ, այլընտրանք չկայ ու չի տեսներ ուրիշ ելք:

Ըստ կարգ մը տեղեկութիւններու, Թրամփ իր յաջողութեան մէջ ոչ մէկ կասկած ունեցած է, ի յառաջագունէ նախապատրաստած ըլլալով իր պետական-քաղաքական, կառավարական-ժողովրդական ծրագիրները եւ ուղեգիծերը, եւ արդէն իսկ ինքզինք կը համարէ(ր) կազմ ու պատրաստ իշխող հզօրութիւն մը:

Այդուհանդերձ, երբ լայն եւ անմիջական ֆոնի վրայ կը դիտենք Թրամփի ընտրութիւնը, անոր դիմագրաւելի մարտահրաւերներով եւ ստանձնելի պարտաւորութիւններով, ներքին թէ արտաքին պայմանագրութիւններով, պահ մը կը ստիպուինք տարակուսիլ, տատանիլ եւ երկմտիլ, թէ ան ինչպէ՞ս պիտի տնօրինէ, կարգադրէ կամ կազմակերպէ երկրին ներքին եւ արտաքին քաղաքական կարգավիճակները եւ ո՞րքան ժամանակամիջոցի մը տեւողութեամբ:

Զէ՞ որ իր նախորդները, իւրաքանչիւրը, իր հայեցողութեամբ, տեսանելիութեամբ կամ դատողութեամբ, աւեր մը, ձախաւերութիւն մը, ձախողութիւն մը արձանագրած է ու զանոնք, կուտակած ու ժառանգած՝ իր յաջորդին, իսկ այդ բոլորը այսօր «հանգրուանած» են Թրամփի ծոցատետրին ու ձեռնապայտուսակին մէջ:

Իսկ ասոնք, այնպիսի կշիռներու ծանրութիւններ ունին, որոնք աներեւակայելի ըլլալու չափ մեծկակ են, իրենց բովանդակութեամբ, տարողութեամբ, սրութեամբ, կարեւորութեամբ ու պատասխանատուութեամբ, առանց մոռնալու կամ անտեսելու, որ այս հրատապութիւններն ու հրամայականութիւնները, առաջնորդելու համար դէպի ապահով ու բարւօք ափեր, կարիքն ունին գերբնական ճիգերու, ջանադրութիւններու, հետեւողութիւններ ու գործադրութիւններու:

Վստահաբար, մեզ եւ ընդհանրապէս ընթերցողին համար, ամենէն աւելի կը հետաքրքրեն, թէ Պրն. Թրամփը եւ իր վարչակարգը, որոնք խոստումներ բաշխած են, յանձնառութիւններ կատարած, օգնելու այս կամ այն կողմին, զօրավիճ կանգնելու ասոր կամ անոր սուր ճգնաժամին, փրկելու անոնց, որոնք կը կարօտին հզօր ուժի մը օժանդակութեան, այսօր բազմագոյն երկընտրանքներու մէջ կը գտնուին:

Նման իրավիճակներու մէջ գտնուողները շատ-շատ են, որոնց գլխաւորները կը հանդիսանան Կովկասը, Ուքրանիան, Միջին Արեւելքը (Պաղեստին ու Լիբանան), իսկ այս տագնապներու ետին կայ (պէտք չէ զարմանալ) Ամերիկան, իր նուաճողական, յարձակողական ու կողմնակալական մոլուցքներով:

Նոյնիսկ եթէ անոր դերակատարութիւնները, ազդեցութիւնները եւ յարաբերութիւնները, այս կամ այն ձեւով կամ եղանակով, բացայայտ ու տեսանելի չեն, ասոնք տակաւին ո՛չ արդարացումներ են, ոչ ալ չքմեղանքներ, որովհետեւ բոլոր նախանշանները եւ տուեալները կան, որ Ուաշինկթընը, իր «թունաւոր մատ»ը ունի ու «ցնցող թաթ»ը, այդ



անկայունութիւններուն եւ անապահովութիւններուն մէջ, որոնք տեղի կ'ունենան նման մարզերէ ներս, իսկ ատոնք ոչ՝ քիչ են, ոչ նուազ, ոչ ալ արուեստական, այլ ընդհակառակը, ատոնք զգալիօրէն ու կարծրօրէն կը կիրարկուին:

Պահ մը մեր հայեացքը կեդրոնացնենք հարաւային Կովկասի վրայ, ուր կան Հայաստանի, Վրաստանի եւ Ատրպէյճանի հանրապետութիւնները, որոնք, ճիշդ է, իւրաքանչիւրը ունի իր պատմական ու տարածքային սահմանները, բայց, ունի նաեւ, իր մշտանորոգ խախտողները, որովհետեւ զանոնք գրգռողներ ու մղողներ կան, «ռուսական գօտի»էն ձեռքազատուելու կամ թօթափուելու անոր ներկայութենէն, իսկ նման նախափորձութիւն մը բացառուած է, պատմականօրէն, այդ տարածքը դարերէ ի վեր գտնուելով ռուսական կայսրութեան գօտիէն ներս, ինչ որ Ամերիկայի համար անընդունելի վարկած մըն է, զայն պահելու համար, մեղմ ըսած, իր հովանիին տակ:

Ասկէ՝ տիրող ապակայունութիւնները եւ անորոշութիւնները այդ շրջագիծէն ներս, որուն «գոհ»երէն մէկն ալ, ՉԵՆՅ Հայաստանն է, մերթ այս, մերթ այն հորիզոնականներուն վրայ ձօճուելով, առանց յստակ ու համոզիչ քաղաքական ուղեգիծի մը:

Պրն. Թրամփը, որ իր «պրիսմակ»ին տակ կ'ուզէ առնել (կամ պահել) այս գոյավիճակը, հաւանաբար, միջին եզր մը գտնելու ճիգով, արդէօք ի՞նչ հիմունքներով ու սկզբունքներով, պիտի կարենայ ձիւնհալի մը հասնիլ, երբ «ռուսական արջ»ը հոն բազմած է:

Երկրորդ՝ Ուքրանիոյ ճակատագիրը ի՞նչ պիտի ըլլայ, հոն բարօրական ի՞նչ դեր կրնայ վերցնել Պրն. Թրամփը, երբ անփառունակ վիճակին հասցնողը նոյնինքն Ամերիկան է, մէկ կողմէն՝ հրահրելով ու զինելով Ուքրանիան, միւս կողմէն՝ նոր, հակառուս բեւեռ մը սնուցանելով հոն, մանաւանդ որ՝ իր նախորդը, խիստ տխուր դերակատարութիւններ ունեցաւ, պաշտպանելով ու զինելով Քիեւը, ընդդէմ Ռուսիոյ Դաշնութեան:

Երրորդը՝ պաղեստինեան-լիբանանեան ճակատն է, որ նորութիւն չէ, աւելի քան բազմամեայ տարիներու պատմութիւն ունի, իր տաք ու պաղ ջերմաստիճաններով, քաղաքական վերիվայրումներով ու տարածքային թափանցումներով, որոնք միշտ ալ, «Դամոկլեան սուր»ի ահագնութեամբ սպառնացած են շրջանի խաղաղութեան, որուն մէջ, դարձեալ Ամերիկան անբաղձալի եւ անհաշտ ոտնձգութիւններով հանդէս եկած է, ոչ անպայմանօրէն կողմ դառնալով, այլ գլխաւորապէս (եւ ատիկա աւելի քան վտանգաւոր է), բռնկող ու բորբոքող մթնոլորտներ ստեղծելով, յետոյ ալ, խաղաղարարի դեր վերցնելով:

Այնքան ատեն, որ Ուաշինկթըն, իր հրեայ վարչակարգի յաջորդական կազմերով եւ անձնատրութիւններով, տիրող ու խայթող ներկայութիւն մըն է, ի՞նչ կ'ակնկալուի նման մեծապետական քաղաքակիրթներէ, բացի այն խաւարամարութիւններէն, խոշտանգութիւններէն ու լկութիւններէն, որոնք մինչեւ օրս կը շարունակուին ու կը գործադրուին:

Սակայն, ամենէն աւելի տագնապեցնողն ու մտատանջողը Հայաստանն է, Ատրպէյճանական նախայարձակումներով ու Լիբանանը, իսրայէլեան միջամտութիւններով, երկուքն ալ, մնալով ծայր աստիճան հակառակորդներ ու բռնագրաւողներ, որոնց դէմ, ոչ ՄԱԿը, ոչ ալ ազդեցիկ պետութիւններ անխստաբարոյ եւ անտարբեր վարքագիծեր որդեգրած են, թերեւս ալ աւելին՝ երկու բռնագաւթիչներու նկատմամբ կը տածեն հանդուրժողական ու համաձայնական վերաբերմունքներ, բնական է, իրենց ՇԻԼ հաշիւներէն մեկնելով:



Ամերիկայի ընտրեալ նախագահը, գէթ այս երկու հրատապութիւններու, նաեւ Ուքրանիոյ պարագային, ինքզինք այնպէս ներկայացուցած ու ձեւացուցած է, թէ յաջողութիւն արձանագրելուն պէս, իր գլխաւոր գործերէն պիտի ըլլան, նման տագնապներու եւ առճակատումներու գծով զբաղիլ, առնուազն մեղմացնելով հակամարտութիւնները, հասնելով հասարակաց յայտարարներու:

Անիկա չնշեց կամ չանդրադարձաւ թէ ի՞նչ պիտի ըլլան իր վարչակարգին կեցուածքները եւ ինչպէ՞ս դրական կամ ընդունելի արդիւնքներ կրնայ ձեռք ձգել, անգամ մը եւս, ինդրոյ առարկայ կողմերը (յատկապէս իրաւատերերը եւ արդարապահանջները) չմատնելու համար անորոշութեան եւ տատամտութեան, որովհետեւ՝ բոլոր պարագաներուն ալ (իմա՝ Լիբանան, Պաղեստին, Հայաստան) ան չի կրնար անտեսել Իսրայէլը եւ Ատրպէյճանը, որոնք եթէ ոչ դաշնակից, գէթ բարեկամներ են, հետեւաբար, ան չի կրնար հրաժարիլ անոնցմէ, յանուն Հայաստանի մը կամ Լիբանանի մը:

Չենք գիտեր, թէ Լիբանանցիները ու հայաստանցիները ինչպէ՞ս ընդունեցին Թրամփի «փափկանկատ» արտայայտութիւնները, ո՞րքան հաւատացին անոր եւ իրենց քուէները ինչպէ՞ս զետեղեցին, բայց, մեկնելով ամերիկեան ԲԱԶՄԱԼԱՐԵԱՆ աւանդոյթներէն, ո՞վ կ'երաշխաւորէ որ «բան մը» կրնայ փոխուած ըլլալ կամ Թրամփը ի վիճակի կ'ըլլայ ամերիկեան թմբիբէն դուրս թռնելով, նոր եւ ուշագրաւելի աշխարհաքաղաքականութեան ուղի մը հարթել:

Թրամփի մերձեցումը Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին, հեռաձայնային ջերմ հաղորդակցութեան մը ընդմէջէն, անտարակոյս, բարացուցական է, երբ կ'ողջունէր ամերիկահայութեան շինիչ դերը եւ առհասարակ սփիւռքահայութեան, իր համակրանքը ցոյց տալով անոնց, իսկ Արամ Ա. Կաթողիկոսը, առիթը պատեհ գտնելով, յիշեցումներ կը կատարէր հայ ժողովուրդի բռնագրաւեալ հողերուն մասին, դիտել տալով թէ՛ անոնք պէտք է վերանայոյին ու նոր հունաւորումով զարգանան, յաչս արդարութեան եւ ճշմարտութեան:

Իսկ Լիբանանի խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիի ակնարկութիւնը, ուղղուած Թրամփին, թէ Միշիկընի (ԱՄՆ) Լիբանանցիներուն մեծ մասը (Շիիթ) է եւ ի նպաստ իրեն քուէարկած է, անուղակի ձեւով իր մտերմական դիրքորոշումը փոխանցելով անոր եւ առ որ անկ է:

Այս երկու վկայութիւնները բաւարա՞ր են, գոհացնո՞ղ, յուսալու ու հաւատալու, որ Թրամփին կարելի է... «հրաշք» մը ակնկալել, թէ՞ այս ալ իր նախորդներուն կրկնութեան կը վերածուի, «ձայն բառբարոյ յանապատ»ի տրամաբանութեամբ:

Բաց աստի, հետաքրքրական պիտի չըլլա՞ր որ հրապարակուի, մօտաւոր կամ մասնակի տուեալներով, ամերիկահայութիւնը ի՞նչ դիրք բռնած էր նախագահական ըտրութեանց ընթացքին. կա՞ր միասնական թեկնածուի մը շուրջ համախմբուելու հաւանականութիւնը, թէ՞ ձայները, առաւել կամ նուազ արդիւնքներով, բաժնուած էին:

Յամենայն դէպս, ժամանակն ու պայմանները ցոյց պիտի տան, թէ ամերիկեան վարչակարգը ի՞նչ դիրք պիտի բռնէ այս (կամ այլ) հիմնահարցերու շուրջ, որոնք շահագրգռող կողմերու համար կենսական ու ճակատագրական կրնան ըլլալ:



Այդուհանդերձ, «մետալ»ին ո՞ր երեսով ու կողմով պետք է նայիլ այս նորօրեայ եւ յետագայ իրադարձութեանց թաւալքին, որովհետեւ հիասթափութիւնը եւ յուսախաբութիւնը միշտ ալ աքցանած են ազատութիւնները եւ ժողովրդավարութիւնները, իսկ անարդարութիւնները ու կողմնակալութիւնները միշտ... «յաղթանակած» են:

(Պէյրութ)

26/11/2024

«Մեր Դիտարկումով ու Դատումով» Շարքէն:

ՀԱԼԷՊԸ ԴԱՐՁԵԱԼ Կ'ԱՐԻՒՆԻ

Յակոբ Միքայէլեան

06/12/2024

- 6 Դեկտեմբերի, 2024 ԱԶԳ շաբաթաթերթ



Երկու տարի առաջ հատընտիր ակնարկներու հաւաքածոյ մը կազմեցի տպագրութեան յանձնելու համար, անոր առաջին բաժինը վերնագրած էի «Սուրիական հայրենիք, խաչեալ Հալէպ», որուն մէջ ամփոփուած ակնարկներուն մեծամասնութիւնը Հալէպի մասին էր, Հալէպի կրած չարչարանքներուն, ցաւերուն, տագնապներուն, դժուար օրերուն: Գիրքը ցարդ չտպագրուեցաւ, թէև Հալէպ սկսաւ յարաբերական խաղաղութեամբ մը վերապրիլ, միշտ յուսալով որ վերջապէս սա սանձազերծուած պատերազմը վերջ կը գտնէ ու Հալէպ կը վերագտնէ իր փառքի օրերը: Մենք ի՛նչ յոյսերով սպասեցինք այդ բախտաւոր օրուան եւ ի՛նչ եղաւ անցեալ շաբաթ...

Անցեալ շաբաթուան անակնկալը տակաւին կը շարունակէ ցնցել մեր ուղեղն ու հոգին. մէկ զիջերուան մէջ Հալէպ հեքիաթային կախարդական ցալիկի մը ցնցումով կար ու չկայ դարձաւ, արդարեւ երկար տարիներ Հալէպի շրջակայքը հաստատուած ընդդիմադիր զինեալ կազմակերպութիւնները առանց որեւէ դիմադրութեան մտան Հալէպ... Մի հարցնէք ինչո՞ւ առանց դիմադրութեան, ոչ ոք գիտցաւ ինչու, ո՞ր էր բանակը, ոստիկանութիւնը, վերջապէս ո՞ր էին պետական մարմինները: Մէկ զիջերուան մէջ չքացեր էին, ոչ իսկ մէկ հատիկ փամփուշտ:

Հեռատեսիլէն ցոյց կու տան «Պասէլ Ասատ» հրապարակը, որ Հալէպի Արեւմտեան դարպասը կը նկատուի, փաթթոցաւոր, մօրութաւոր զինեալներ կը պարեն, կը ցատքեն, գետինը կը համբուրեն եւ իրենց զենքերէն փամփուշտներ կ'արձակեն դէպի երկինք: Յաջորդ օր արդէն հասած էին Սաատալլա Ճապրի հրապարակ, կեղդոնական նամակատան դիմաց, ապա հասան բերդ: Իրենց խանդավառ ցոյցերուն ընթացքին զինեալ մը Թուրքիոյ դրօշակը ցուցադրեց բերդի պարիսպին վրայէն:

Ըսին՝ «Շամի ազատագրութեան խորհուրդ» կազմակերպութիւնը եւ ընդդիմադիր զինեալ խմբաւորումներն են, որոնց անունները չհրապարակուեցան սկիզբը, բացի քրտական «Սուրիոյ տեմոքրաթիք ոյժեր» կոչեցեալներէն, որոնք իրենց հսկողութեան տակ առին



Հալէպի միջազգային օդանաւակայանը: Այս կազմակերպութիւնը Սուրիոյ հիւսիս արեւելեան նաֆթով հարուստ շրջանին վրայ կը տիրապետէ ԱՄՆ-ի հետ գործակցաբար:

Դէպքերը շատ արագ կը յաջորդեն իրարու: Զինեալները կ'ուղղուին դէպի հարաւ, նպատակ ունենալով գրաւել Համա քաղաքը, ընթացքին կը մտնեն Մաարրաթ Նուման (Ապու Ալ Ալաա Ալ Մաարրիի ծննդավայրն ու գերեզմանավայրը): Յաջորդը կը գրաւեն Խան Շէխունը ու կը հասնին Համայի մուտքին: Ըստ ենթադրեալ քարտէսին, Հալէպ նահանգին հարաւային սահմանը Համան է, քանի Հոմսը արդէն Դամասկոսի նահանգին մէջն է:

Երրորդ օրը՝ Ռուսական-Սուրիական օդուժը կ'անցնի գործողութեան, կը հրթիռակոծեն Հալէպի մուտքին հաւաքուած զինեալները, կը սպանուի 15 զինեալ: Յաջորդ մեծ հրթիռակոծումը կ'ըլլայ Իտլիպի վրայ, որ վաղուց արդէն Ճապիէթ Նուսրային, ներկայ անունով՝ «Շամի Ազատագրման Խորհուրդ»ին կեդրոնն էր: Կռիւները 320 մեռեալ կ'արձանագրեն, յաջորդ օրերուն սպանուածներուն թիւը հինգհարիւրը կ'անցնի:

-Ասիկա ամերիկա-իսրայէլեան խաղ է... Հազիւ Լիբանանի հետ զինադադար կնքած՝ անցան Հալէպը գրաւելու:

-Արդէն ծախուած է, թէ չէ առանց դոյզն դիմադրութեան չէին կրնար Հալէպ մտնել...

-Շատոնց գծուած աշխարհի նոր աշխարհակարգի առաջին փուլն է...
-Սուրիան պիտի մասնատեն, արդէն քարտէսը կազմուած է՝ Հիւսիս-արեւմտեան մասը՝ «Հալէպի նահանգ»՝ ընդդիմադիրներուն. Հիւսիս-արեւելեան մասը՝ Քիւրտիստան, հարաւը՝ Դամասկոսին: Ասոնց որքանը իրաւ է, որքանը սուտ՝ առայժմ յայտնի չէ: Խոստովանիմ որ լրատուական դաշտը այնքան խճողուած է տարատեսակ լուրերով, որոնք այնպիսի խճճուած պատկեր մը կը ստեղծեն ակնդիր-ունկնդիրին համար, որ յստակութենէ շատ հեռու է, այնպէս որ մեր ըրածը ընթերցողին մօտաւոր իրավիճակի մը պատկերը հաղորդելն է:

Չորրորդ օրը՝ կը սաստկանան հրթիռակոծումները Իտլիպի վրայ, հեռատեսիլէն ցուցադրուածները ուղղակի կը փշաքաղեն մարմինդ. ու կը մտածես, այս մարդիկը ձեր ընդդիմադիր թշնամիներն են, եթէ պիտի հարուածէիք զանոնք, ինչո՞ւ Հալէպն ու միւս երկրորդական քաղաքներուն պետական ու զինուորական մարմիններուն հրահանգեցիք լքել քաղաքն ու հեռանալ՝ եկուորներուն առիթ տալով ազատօրէն մտնելու եւ գրաւելու քաղաքը: Մարդ բան չի հասկնար:

Սուրիան յենած է Ռուսիոյ եւ Իրանի վրայ, որոնք շարունակեցին իրենց զօրակցութիւնը յայտնել Դամասկոսին, անոնց միացաւ Չինաստանը... Թուրքիան իր սովորական խաղը կը խաղայ, կ'ըսէ՝ ես պատրաստ եմ՝ հարցը կարգաւորելու եւ կռիւները դադրեցնելու համար միջամտելու: Մարդ ըլլայ անոր ըսող՝ նախ դո՛ւն քու գրաւած սահմանի երկայնքին հողերէն քաշուիր, յետոյ բարեկամաբար խօսիր: Տարիներ ամբողջ զինեալ կազմակերպութիւններն ու ահաբեկիչները հովանաւորեց, իսկ հիմա կ'ըսէ՝ եղած իրադարձութեանց մէջ ես մատ չունիմ:

Յաջորդ օրերը ինչ նորութիւններ պիտ բերեն՝ յայտնի չէ: Կ'ապրինք՝ կը տեսնենք ու կը գրենք յաջորդիւ:

ՅԱԿՈՒՄ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

2023-24 ԱՐԱԲ-ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ՄԷԿ ՏԱՐԻ ԵՏՔ, ՀԱՅ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԻՆ ՀԱՄԱՐ ՔԱՂԵԼԻՔ ԴԱՍԵՐ

ՐԱՖՖԻ ԱՐՏԱԼՃԵԱՆ



Հոկտեմբեր 2023ին, «Համաս»ի, «Հըզպալլա»ի եւ Իսրայելի միջեւ բռնկած հակամարտութիւնը ցնցեց միջազգային հանրութիւնը՝ հետեւանքներ ունենալով Միջին Արեւելքէն շատ անդին:

Հայաստանի պէս բարդ աշխարհաքաղաքական մարտահրաւերներ ունեցող երկրի մը համար այս պատերազմը կարեւոր դասեր կը պարունակէ: Իբրեւ հակամարտութիւններով եւ գերիշխանութեան պայքարներով յատկանշուող պատմութիւն ունեցող երկիր մը՝ հայ քաղաքական միտքը կարեւոր դասեր կրնայ քաղել Լեւանտի մէջ տեղի ունեցող իրադարձութիւններէն՝ արաբ-իսրայելեան պատերազմէն մէկ տարի ետք, մանաւանդ որ 2020ի աղէտալի պատերազմին մասին իր սեփական յանձնաժողովները նշանակալի բարեփոխումներու չեն առաջնորդած բանակին կամ երկրի պաշտպանական վարդապետութեան (doctrine) մէջ:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՆԱԿՆԿԱԼ

«Համաս»ի 7 Հոկտեմբերի յարձակումները բոլորովին անակնկալ էին, մանաւանդ երբ զայն համեմատենք Ուքրանիոյ դէմ Ռուսիոյ ներխուժումին նախորդող ամերիկեան հետախուզական նախազգուշացումներուն հետ: Աւանդական կարողութիւնները յայտնաբերելու վրայ կեդրոնացած ժամանակակից հետախուզական գործակալութիւնները պատրաստ չէին յայտնաբերելու «Համաս»ի ստորգետնեայ զենքի գործարանները եւ զօրքերու



տեղաշարժները: Ասիկա կարելոր կը դարձնէ Հայաստանի համար զարգացնելը հետախուզական կարողութիւնները, որոնք կրնան բացայայտել ոչ-աւանդական սպառնալիքները եւ կանխատեսել հնարաւոր հակառակորդներու նորարարական մարտավարութիւնները:

ԹԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄԻՆ ՎՏԱՆԳԸ

Հակամարտութենէն քաղուած ամենէն ցայտուն դասերէն մէկը հակառակորդները թերագնահատելու վտանգն էր: Իսրայէլ սխալ գնահատեց «Համաս»ի կարողութիւնները եւ մտադրութիւնները, որոնք յանգեցուցին 7 Հոկտեմբերի աղետալի յարձակումին: Նոյնպէս, «Հրզպալլա»ն թերագնահատեց Իսրայէլի վճռականութիւնը եւ գերագնահատեց Իրանի՝ իրեն արդիւնաւետօրէն աջակցելու կարողութիւնը: Հայ քաղաքական գործիչներուն համար ասիկա կարելոր է թէ՛ հակառակորդները եւ թէ դաշնակիցները շարունակաբար եւ առարկայական մօտեցումով վերագնահատելու կարելորութիւնը: Հայաստան պէտք է խուսափի ինքնագոհութենէն եւ կանոնաւորապէս թարմացնէ իր ռազմավարական գնահատականները:

ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԵԱՆ ՈՒԺԸ

Աշխարհը ականատես դարձաւ դիմադրութեան շարժումներու առաջնորդներուն՝ իրենց դատին համար ծայրայեղ գոհողութիւններ կատարելու պատրաստ ըլլալուն: Յանձնառութեան այս մակարդակը կրնայ հզօր ուժ դառնալ հակամարտութեան իրավիճակներու մէջ: Հայաստանի համար տարածաշրջանային վէճերու մէջ զաղափարախօսական դրդապատճառներու խորութիւնը հասկնալը կարելոր է: Հայ առաջնորդները պէտք է իրենք օրինակ ըլլան՝ ճանչնալով եւ անդրադառնալով հակամարտութիւններ սնուցանող հիմնական բողոքներուն եւ համոզումներուն:

ԵՐԿԱՐԱԺԱՄԿԷՏ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԷՁ

Արաբ-իսրայէլական ընթացող պատերազմը ցոյց տուաւ, թէ ինչպէ՛ս երդուեալ թշնամիներու միջեւ հակամարտութիւնները կրնան տասնամեակներու նախապատրաստութիւն պահանջել: Թէ՛ Իսրայէլ եւ թէ «Համաս»ը եւ «Հրզպալլա»ն տարիներ անցուցած էին ռազմավարութիւններ մշակելով, հետախուզական տեղեկութիւններ հաւաքելով եւ ռազմական կարողութիւններ կառուցելով: Հայաստանի համար ասիկա իբրեւ օրինակ՝ կարելոր կը դարձնէ ազգային պաշտպանութեան եւ ռազմավարական ծրագրաւորման մէջ երկարաժամկէտ, կայուն ներդրումներու անհրաժեշտութիւնը, ներառեալ ռազմական



պատրաստուածութիւնը, դիւանագիտական, տնտեսական եւ կիպեռապահովութեան միջոցառումները:

ԱՐՀԵՍՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՎՃՌՈՐՈՇ ԴԵՐԸ ԱՐԴԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Հակամարտութիւնը ցոյց տուաւ 21րդ դարու պատերազմներուն մէջ արհեստագիտութեան վճռորոշ դերը: Երկու կողմերն ալ օգտագործեցին յառաջացած արհեստագիտութիւններ՝ մարտավարական եւ ռազմավարական առաւելութիւններ ձեռք բերելու համար: Հայաստանի համար ասիկա կը շեշտէ ժամանակակից ռազմական արհեստագիտութիւններու մէջ ներդրումներ կատարելու անհրաժեշտութիւնը, ներառեալ անօդաչու թռչող սարքերը/հակաանօդաչու համակարգերը, կիպեռ կարողութիւնները եւ յառաջացած հաղորդակցութեան համակարգերը: Առաջնահերթութիւնը պէտք է ըլլայ զարգացնել տեղական արհեստագիտական արդիւնաբերութիւն մը, որ կրնայ աջակցիլ պաշտպանութեան կարիքներուն:

ՄԱՐՏԱԴԱՇՏԻՆ ՅԱՐՄԱՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՆՈՐԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հակամարտութեան իւրաքանչիւր կողմ ուսումնասիրեց եւ յարմարեցաւ իր մարտադաշտի իւրայատուկ բնութագրութիւններուն: Գլխաւոր դասերէն մէկը կը կեդրոնանայ թերզինուած ոչ-պետական դերակատարներու համար փապուղիներու (tunnels) պատերազմի կարեւորութեան վրայ: «Համաս»ի փապուղիներու ընդարձակ ցանցը Կազայի մէջ թոյլ տուաւ անոր ցրուելու ուժերը եւ շարժիլ մարտադաշտին մէջ՝ երկարաձգելով իր դիմադրութիւնը Իսրայէլի գերակշիռ կրակի ուժին դէմ: Հայաստան պէտք է սորվի ասորմէ՝ շարունակաբար գնահատելով իր ռազմավարական մարտադաշտի միջավայրը եւ մշակելով նորարարական լուծումներ ապահովական հնարաւոր մարտահրաւերներուն դիմաց:

ԿԱՅՈՒՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՇԱՐՄԱՆ ՄԷՋ

Հակամարտութիւնը բացայայտեց «Համաս»ի յատկանշական կարողութիւնը՝ պաշարման տակ պահպանելու իր գործողութիւնները, ինչ որ կարեւոր դասեր կը պարունակէ Հայաստանի համար: «Համաս»ը ցուցադրեց նորարարական կայունութեան ռազմավարութիւններ, ներառեալ՝ չպայթած զինամթերքի վերամշակումը եւ մարտադաշտերէն պաշարներ հաւաքելը: Հայաստանի համար ասիկա օրինակ է՝ դիմացկուն եւ յարմարող մատակարարման շղթաներու զարգացման ու ոչ-աւանդական միջոցներու օգտագործման մեթոտներ նկատի ունենալու կարեւորութեան:



ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹԵԱՆ ՎՃՌՈՐՈՇ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Պատերազմը ընդգծեց հետախուզական տեղեկութիւններու հաւաքման եւ գործողութիւններու վճռորոշ դերը: «Համաս»ի 7 Հոկտեմբերի յարձակումը Իսրայէլի համար հակայական հետախուզական ձախողութիւն մըն էր, մինչդէռ Իսրայէլի յաջորդող գործողութիւնները ցոյց տուին արդիւնաւէտ հետախուզութեան ուժը: Հայաստանի համար ասիկա կարելոր կը դարձնէ իր հետախուզական կարողութիւնները զգալիօրէն բարելաւելու անհրաժեշտութիւնը՝ թէ՛ պաշտպանութեան եւ թէ՛ ռազմավարական որոշումներ տալու համար:

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԽՈՒՆՔԻ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Հակառակ Միջազգային Քրէական դատարանի որոշումներուն եւ համաշխարհային բողոքներուն, աշխարհաքաղաքական շահերը մեծապէս գերակշռեցին հնարաւոր պատերազմական յանցագործութիւններու մասին մտահոգութիւնները: Հայաստանի եւ Սփիւռքի հայկական լոպիին համար ասիկա յիշեցում է, որ միջազգային իրաւունքը եւ հասարակական կարծիքը միշտ չէ որ կը վերածուին յստակ գործողութեան կամ աջակցութեան: Հայկական դիւանագիտութիւնը պէտք է բազմակողմանի ըլլայ՝ միջազգային կառոյցներու հետ յարաբերելու ընթացքին կեդրոնանալով երկկողմ յարաբերութիւններու եւ իրապաշտ նկատառումներու վրայ:

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՀԵՐՈՒ ԴԻՄԱՑԿՈՒՆՈՒԹԻՒՆԸ

Հակամարտութիւնը ցոյց տուաւ, որ հաստատուած աշխարհաքաղաքական շահերը յաճախ կը գերակշռեն հասարակական կարծիքը եւ բողոքները: Հայաստանի համար ասիկա կարելոր կը դարձնէ իր ռազմավարական նպատակները տարածաշրջանային եւ գերտէրութիւններու շահերուն հետ համահունչ դարձնելու անհրաժեշտութիւնը, նոյն ատեն աշխատելով այդ շահերը զարգացնելու առաւել արդիւնաւէտ դիւանագիտութեան եւ ռազմավարական գործընկերութիւններու միջոցով:

ԵՐԿԱՐԱՏԵՒ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պատերազմը ցոյց տուաւ, թէ ինչպէ՛ս երկարատեւ հակամարտութիւնները կրնան լարել տնտեսութիւնները եւ մատակարարման շղթաները: Հայաստանի համար ասիկա կարելոր կը դարձնէ նախ՝ պատերազմէն խուսափելը, դիմացկուն տնտեսութիւն կառուցելը, միջազգային գործընկերութիւնները բազմազանեցնելը եւ վստահելի դաշնակիցներ ապահովելը, որոնք կրնան շարունակական աջակցութիւն տրամադրել ճգնաժամային պահերուն:



ԱՊԱՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԵԴԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԴԵՐԸ

Հակամարտութիւնը ցոյց տուաւ ընկերային ցանցերու, քարոզչութեան եւ ապատեղեկատուութեան արշաւներու լայնածաւալ օգտագործումը բոլորին կողմէ: Հայաստան կրնայ սորվիլ հզօր հակա-ապատեղեկատուութեան ռազմավարութիւններ եւ արդիւնաւէտ հանրային հաղորդակցութեան ուղիներ մշակելու կարելորութեան մասին:

ՄՓԻՒՌՔԻ ՆԵՐԳՐԱԻՈՒՄԸ

Թէ՛ Իսրայէլ եւ թէ՛ պաղեստինեան խմբաւորումները աջակցութեան համար, հաւանաբար օգտագործեցին իրենց համաշխարհային սփիւռքները: Հայաստան, իր մեծ Սփիւռքով, կրնայ սորվիլ ճգնաժամային պահերուն իր համաշխարհային համայնքը արդիւնաւէտ կերպով ներգրաւելու եւ զօրաշարժի մէջ դնելու մասին՝ նախապատրաստուելով այդպիսի պարագաներու:

ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՇԵՐՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈՒԺԸ

Հակամարտութիւնը ցոյց տուաւ իսրայէլացիներուն, պաղեստինցիներուն եւ լիբանանցիներուն՝ գոյութենական սպառնալիքներու դիմաց միասնական ըլլալու յատկանշական կարողութիւնը՝ հակառակ իրենց ներքին բաժանումներուն: Հայաստանի համար ասիկա օրինակ է ազգային համախմբուածութիւն խթանելու կարելորութիւնը, յատկապէս ճգնաժամերու ընթացքին:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԲԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Հակամարտութեան մէջ որոշ կողմերու, ինչպէս՝ Իրանի, ցուցաբերած ռազմավարական համբերութեան դերը կարելոր կը դարձնէ երկարաժամկէտ խաղ խաղալու կարելորութիւնը: Ասիկա կրնայ արժեքաւոր դաս ըլլալ Հայաստանի համար, իր երկարատեւ վճարը կառավարելու գործին մէջ:

Ասոնք մինչեւ հիմա քաղուած դասերէն մի քանին են: Չենք գիտեր, թէ որքան պիտի տեւէ այս հակամարտութիւնը, կամ որքան աւելի պիտի ընդլայնի: Վստահ եմ, որ շատ մը բանակներ, ներառեալ՝ Հայաստանի թշնամիները, պիտի շարունակեն դիտել եւ սորվիլ այս ժամանակակից մեծ հակամարտութեան զարգացող մարտավարութիւններէն եւ ռազմավարութիւններէն:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ



2023-2024 թուականներու արաբ-իսրայէլեան պատերազմը, հակառակ աշխարհագրականօրէն հեռու ըլլալուն՝ կարեւոր դասեր կը պարունակէ Հայաստանի համար: Այս դասերը դէպի ներս հայելացնելով՝ թերագնահատման վտանգներէն մինչեւ արհեստագիտութեան եւ հետախուզութեան կարեւորութիւնը՝ Հայաստան կրնայ աւելի լաւ դիրք ունենալ 21րդ դարու բարդ աշխարհաքաղաքական դաշտին մէջ: Յառաջ ընթանալու ճանապարհը կը պահանջէ խոհեմ ռազմավարութիւն եւ նպատակի միասնականութիւն:


Հայկական բանակին՝ այս գաղափարները իւրացնելը եւ անոնց յարմարիլը կարեւոր են: Հայաստանի ապագան եւ ապահովութիւնը կախեալ են այս դասերու կիրարկումէն: Կազային քաղուած փորձառութիւնը կենսական է ոչ միայն Միջին Արեւելքի, այլ նաեւ Հայաստանի եւ համայն աշխարհի համար:

9/10/2024

ԱՂԲԻԲ՝ ԱՍՊԱՐԷԶ



ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻՒՌ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՈՒՂԻՆԵՐ



TUMO, ARMATH, COAF, FAST... տասնամեակ մըն է որ Հայաստանի կրթական մարզին մէջ ի յայտ եկած են նորայայտ անուններ, որոնք կը յատկանշեն առաջատար արհեստագիտութեան առնչուող ծրագրեր, ուղղուած դպրոցական տարիքի մանուկներու: Առաջին երկուքը՝ TUMO-ն եւ ARMATH-ը ծանօթ են որպէս միջազգային ճանաչում ու համբաւ վաստակած արտադպրոցական նախաձեռնութիւններ, որոնք կը կիրարկուին աշխարհի տարբեր երկիրներու մէջ: TUMO-ն թուային արհեստագիտութեան արտադպրոցական աշխատանոց է, որ Ֆրանսայի մէջ երեք մասնաճիւղեր ունի՝ Փարիզ, Լիոն, Մարսիլիա... ARMATH-ը՝ նոյնպէս, ճարտարագիտական աշխատանոցներ ունի ԱՄՆ-ու, Եւրոպայի, Հնդկաստանի մէջ... COAF-ը Հայաստանի Տաւուշի սահմանամերձ գիւղերու մանուկներուն եւ ծնողներուն արդիական գիտութիւններ ու մասնագիտական փորձառութիւն ջամբող կեդրոն է, որ Հայաստանի այլ շրջաններու մէջ ալ կեդրոններ կը բանայ: Այս հաստատութիւններու նորագոյնը FAST-ն է, որ Նոյեմբեր 16-ին Փարիզ հանրաձանօթ Ֆրանսայի ինքնաշարժի ակումբին մէջ կազմակերպեց ճաշ-կալա մը ի նպաստ իր ծրագրին, որ Հայաստանի դպրոցներուն մէջ հաստատելն է արհեստական բանականութեան ուսուցումը, Կրթութեան նախարարութեան հետ գործակցաբար:

Ինչ որ հասարակաց է այս չորս նախաձեռնութիւններուն, այն է որ բոլորն ալ կրթական ասպարէզին կը վերաբերին, արհեստագիտութեան ու նորարարութեան: Անոնցմէ երկուքը անհատական հիմնադրամներու ներդումի արդիւնք են, իսկ յատկապէս վերջինը FAST-ը (Foundation for Armenian Science and Technologie) հաւաքական հիմնադրամի, որուն գլխաւոր երկու հիմնադիրներն են՝ Նուպար Աֆէեան եւ Ռուբէն Վարդանեան, երկուքն ալ ունեւոր, միասնաբար մարդասիրական, տնտեսական զարգացման, զբօսաշրջային, արհեստագիտական ու ընկերային շուրջ տասը նախաձեռնութիւն իրագործած են, ինչպէս՝ Աւրորա մրցանակը, Ապագայ Հայաստանը, Դիլիջան միջազգային դպրոցը ... եւ FAST-ի Generation AI High School-ը (AI=Artificial intelligence):

Բոլոր այս հաստատութիւնները նորահաստատ կառոյցներ են, ծրագրերը երկարաժամկետ եւ նիւթական մեծ միջոցներ պահանջող, ընդհանրապէս Հայաստանի մէջ իրականացուող սփիւռքեան նախաձեռնութիւններ, դրամագլուխը՝ ամերիկեան եւ հազուադէպ պարագայի՝ ռուսական, որոնք հիմնականին մէջ ունին ազգային բարեսիրական նկարագիր, բացառութեամբ ARMATH-ի, որուն նախաձեռնողը տեղական «Առաջատար Տեխնոլոգիաների ձեռնարկութիւնների միութիւն»-ն է, որ կը վայելէ Հայաստանի կառավարութեան օժանդակութիւնը, որովհետեւ հանրակրթական բոլոր դպրոցներուն կը վերաբերի:



FAST-ի պարագային՝ նորութիւնն այն է որ առաջին անգամ ըլլալով Ֆրանսան ներառուած է անոր Generation AI ծրագրի յաջողութեան հոլովոյթին մէջ: FAST-ի հիմնադիրները եւ նախաձեռնողները ֆրանսահայութեան եւ եւրոպահայութեան ալ ապաւինած են իրենց ծրագրի յաջողութեան համար:

Նկատի ունենալով որ Generation AI High School-ը ուղղուած է աշակերտութեան, արդէօք կարելի՞ է գայն ակնկալել նաեւ Սփիւռքի հայկական վարժարաններուն համար, որոնց հայկական ուսումնական ծրագիրը դժբախտաբար կարիքը ունի բարելաւման եւ արհեստագիտական գիտութեան ներառման, հայերէնի ուսուցումը սահմանափակուած ըլլալով լեզուական, գրական ու կրօնապատմական նիւթերով:

Սփիւռք-Հայաստան գործակցութիւնը հարթ չէ եղած. կան բազմաթիւ յաջող նախաձեռնութիւններ, ինչպէս որ եղած են նաեւ բազմաթիւ ձախող գործեր: Մեծագոյն ձախողութիւնը կ'առնչուի քաղաքականին ու լեզուամշակութայինին: Քաղաքականին ածանցուած է նաեւ Արցախի կորստեան կապուած՝ կրթական, ընկերային, կառուցողական ու տնտեսական ներդրումային բոլոր նախաձեռնութիւնները:

Որքանո՞վ արհեստական բանականութիւն, նորարարական արհեստագիտութիւն ուսանած նոր սերունդը կրնայ ժամանակի քաղաքակրթական, մշակութային մարտահրաւերները դիմակայել, սրբագրելով անցեալի սխալները: Հակառակ գիտական ու արհեստագիտական բոլոր յառաջդիմութիւններուն, երկրագունդը ականատես է ամենէն քստմնելի ցեղասպանութեան, առանց որ քաղաքակիրթ պետութիւնները իրենց մատը կարենան շարժել: Ուսումը առանց քննադատական մտածողութեան միշտ պիտի մնայ պակասաւոր:

ԺԻՐԱՅԸ ՉՈՒԱՔԵԱՆ

ՆՈՐ ՅԱՌԱՋ

20/11/2024

ՀԱՅԵՐԷՆԸ՝ ԱՆԳԼԵՐԷՆԻ ԵՒ ՖՐԱՆՍԵՐԷՆԻ ԲԱԽՈՒՄԻՆ ԸՆԴՄԷՋԷՆ

Դոկտ. Հրայր Ճեպէճեան



«Երանի ձեզի որ երկու լեզու կը խօսիք»:

Նոյեմբեր 2024, Լոս Անճելոս:

Արի Աղպապեանը ծնած է Լոս Անճըրլըս: Ան մեծ քրոջս որդին է: Արին կարելիութիւն չունեցաւ հայկական դպրոց յաճախելու, բայց ծնողքին հետեւողական եւ բժախնդիր հոգածութեան տակ ան սորվեցաւ մայրենին: Արին հետ Լոս Էնճըրլըս նստած սուրճ կը խմէինք եւ կը գրուցէինք՝ եթէ հայերէնով բայց նաեւ ատեն-ատեն անգլերէնով:

Չի նշմարեցի թէ մեր մօտ նստած էր տարեց ամերիկացի մը: Երբ ոտքի ելանք երթալու համար, այս տարեց ամերիկացին ընդմիջեց մեզ: Յստակ էր թէ կ'ուզէր բան մը ըսել. «Ինչ հաճելի էր որ երկու լեզուով կը խօսէիք», ըսաւ ան: «Մէկը անգլերէն էր իսկ միւս լեզուն չի գիտցայ»:

«Միւս լեզուն հայերէն է», ըսի ես: «Մեր մայրենի լեզուն է»:

«Երանի ձեզի որ երկու լեզու կը խօսիք», ըսաւ ան: «Ես չի կրցայ անգլերէնի կողքին ուրիշ լեզու մը սորվիլ: Կը նախանձիմ ձեզի որ դուք կրնաք երկու լեզուով արտայայտուիլ»:

Սփիւռքահայ մեր իրականութեան համար, երկու լեզու կիրարկելը հիմնական մարտահրաւեր է: Եթէ մեր ապրած երկիրներու տեղական լեզուն պիտի սորվինք, կը մնայ մայրենին սորվիլ: Մեր մայրենին եւ զայն պահելը կարելորդ հիմք է սփիւռքեան իրականութեան մէջ՝ հայապահպանումի եւ հայակերտումի գործընթացին մէջ: Բայց կայ ներկայ օրերու ապրած մեր իրականութիւնները:

Մոնթրէալ՝ նոյեմբեր 2024:

Գանատա աշխատանքային այցելութեանս ընթացքին կարելի չէր չի հաղորդակցիլ հայկական իրականութեան հետ: Այս պարագային նաեւ Մոնթրէալը՝ Գանատայի այս



Ֆրանսախօս Քէպէք նահանգի կարեւոր քաղաքը: Կարելի չէ զանց առնել այն իրականութիւնը որ Քէպէքի մէջ անգլերէն եւ ֆրանսերէն լեզուները բախումի մէջ են: Այն ինչ որ ուշադրութիւնս գրաւեց հայկական իրականութիւնն է այս քաղաքին մէջ: Մոնթրէալի գաղութին կազմաւորումը սկսած է 1950-ական տարիներուն, երբ Յունաստանէն, Եգիպտոսէն, Պոլիսէն, Լիբանանէն, Իրաքէն եւ վերջին շրջանին Սուրիայէն, հայեր հաստատուած են հոս: Նոր գաղութ մը ըլլալով հանդերձ, հոս տեսայ հայախօս գաղութ մը, եւ հայկական այժեքներով ապրող գաղութ մը:

Իսկ պատճառնե՞րը:

Յակոբ Տէր Խաչատուրեանը եկած է միջին արեւելքէն: Ան ազգային, հասարակական ու կուսակցական մեծ գործունէութիւն կը տանի: Ան ըսաւ. «Անգլերէնի եւ ֆրանսերէնի բախումը ճամբայ հարթեց որ հայը կառչի իր մայրենիին: Բայց նաեւ կայ երկրին ընկերային կարգ ու սարքը, որ կը քաջալերէ փոքրամասնութիւնները որպէսզի պահեն իրենց լեզուն եւ մշակոյթը»:

Այս տեսակի երեւոյթներ սկսած եմ տեսնել երբ տարբեր երկիրներ կ'այցելեմ: Կ'ապրինք ժամանակներու մէջ, ուր համակարգեր նախանձախնդիր են պահելու ազգային փոքրամասնութիւններու լեզուն եւ մշակոյթը՝ նկատելով զանոնք երկրին համար հարստութիւն: Երեւի անցած ենք «մեծ կաթսայի» մէջ «ձուլուելու» ռազմավարութենէն: Մշակոյթներու պահպանումը սկսած է դառնալ այժմեական եւ առաջնահերթ մտահոգութիւն:

Վահագն Գարագաշեանը եկած է Լիբանանէն: Ան մամուլի գործիչ է: Անոր տեսանկիւնէն, Մոնթրէալի ազգային փոքրամասնութեան քաղաքացիներու 35-40 տոկոսը կը նախընտրէ իսպիլ իր մայրենի լեզուն: Բայց այս նոյնքան արդիւնք է Գանատայի դաշնակցային կառավարութեան կողմէ ընդունուած բազմամշակութային օրէնքի ընկալումին: «Քէպէք նահանգը վերապահութեամբ կը մօտենայ բազմամշակութային գաղափարին՝ վախճալով կորսնցնել ֆրանքոֆոնեան մշակոյթը», ըսաւ Վահագն: «Անգլերէնի եւ ֆրանսերէն լեզուներու եւ մշակոյթներու բախումներուն դէմ ազգային փոքրամասնութիւններ կը նախընտրեն փարած մնալ իրենց մայրենիին», շարունակեց ան:

Եթէ Գանատայի ու յատկապէս Մոնթրէալի այս համակարգի «բախումը» պիտի որակել որպէս «պատուհաս», բայց կը տեսնենք դարձեալ որ այդ կրնայ դառնալ «պատեհութիւն»: Պատեհութիւնը հայուն, որ այս պատուհասը վերածած է հայակերտումի պատեհութեան եւ ի նպաստ իր ազգային առաքելութեան իրագործման:

Աւետիս Պազգալեանը կուգայ Հալէպէն: Ան ուսուցիչ է եւ հայ մամուլի սպասարկու՝ որպէս խմբագիր եւ հրապարակագիր: Աւետիս կը կարեւորէ միջին արեւելքէն արտահոսքը դէպի Մոնթրէալ, որ նպաստած է գաղութին հայախօսութեան եւ հայապահպանումին: «Մոնթրէալահայ գաղութին հայախօս մնալը որոշ ծրագրի կամ յատուկ աշխատանքի արդիւնք չէ, այլ պատահականութեան», ըսաւ ան: «Միջին արեւելքի պատերազմները պատճառ դարձան որ նորաստեղծ հիւսիսային ամերիկայի հայ գաղութները օգտուին», շարունակեց Աւետիս:



Բայց Աւետիս կրցաւ «պատահականութիւնը» կամրջել «ինչ կրնանք ընել եւ պէտք է ընել» ընտրանքներուն հետ՝ որպէսզի գաղութը պահէ իր ազգային դիմագիծը: Ան համոզուած է որ «շատ բան պէտք է ընել որպէսզի հայախօսութիւնը եւ հայապահպանումը պատահականութեան ենթակայ չի դառնան», եզրափակեց ան:

«Շատ բան պէտք է ընել»: Ճիշդ է Աւետիսը:

Միեր Գարագաշեանը եկած է Լիբանանէն: Ան ազգային, հասարակական ու կուսակցական գործունէութիւն կը ծաւալէ՝ նաեւ կրթական առաքելութեան նուիրեալ մըն է, որպէս ուսուցիչ: «Հայկական վարժարաններ ունենալը գաղութին մէջ շատ կարեւոր է: Հայախօսութիւնը՝ եթէ ընտանիքներէն կը սկսի, բայց հայ վարժարանը կ'ամբողջացնէ», ըսաւ Միեր: «Հայ լեզուի, ինքնութեան, պահանջատիրութեան ու Հայաստան-սփիւռք յարաբերութիւններու զարգացման գործընթացը կը դրոշմուի հայկական վարժարանի մէջէն ու միջոցաւ», շարունակեց Միեր:

Լորի Ապրաքեանը Սուրբ Յակոբ երկրորդական վարժարանի տնօրէնուհին է: Ան ծնած է Մոնթրէալ: Իր ծնողքը եկած են Պելյութէն: Հայկական առօրեայ դպրոց չէ յաճախած: Լորին սորված է մայրենին շաբաթօրեայ վարժարանի միջոցաւ եւ այսօր կրթական առաքելութեան նուիրեալ մըն է: Լորիին հետ կը շրջագայէինք գեղեցիկ հայ վարժարանը իր բոլոր կարելիութիւններով: Դպրոցը օժտուած է ներկայ ժամանակներու կրթական կարելիութիւններ ստեղծող արդիական համակարգով: «Կարեւոր է որ հայերէն լեզուն հաճելի դառնայ պատիկին ու պատանիին», ըսաւ Լորի: «Մեր լեզուն դժուար է բայց պէտք է սիրցնենք», շարունակեց ան:

Դպրոցի կրթական ծրագիրը տեղական է, եւ անոնք ոչ մէկ ճիգ կը խնայեն լաւագոյն արդիական ուսուցմունքներով դաստիարակել աշակերտները՝ ներառեալ մայրենի լեզուին ուսուցմունքը: «Խօսակցական հայերէնի շատ կարեւորութիւն կուտանք: Կը ջանանք նաեւ հայերէնի ուսուցումը հաւասարեցնել ֆրանսերէնի: Ֆրանսերէնի համար հինգ գիրքեր պէտք է կարդայ՝ հայերէնի համար երեք: Կամաց-կամաց կը փորձենք կամրջել երկու լեզուներու ուսուցմունքի միջոցառումները», բացատրեց ան:

Լորիին հետ շարունակեցինք շրջագայիլ դպրոցի դասարանները եւ խաղավայրերը: Կանգ առի խումբ մը հայ աւարտական կարգի աշակերտներու մօտ եւ միասին գրուցեցինք հայերէնով: Հրաժեշտ առնելէս առաջ անոնց հարցուցի. «Հայերէնը կը սիրէ՞ք»: Պատասխանները եղան կարճ եւ հաստատ. «Շա՛տ»: Շա՛տին մէջ կար զգացում, սէր եւ նուիրում: Ու տակաւին հպարտութիւն: Շա՛տին մէջ տեսայ հայակերտումի եւ մարդակերտումի առաքելութեան արդիւնքները եւ անոր յաջողութիւնները:

Սուրբ Յակոբ վարժարանը ունի մօտաւորապէս հազար հայ աշակերտ: Ու տակաւին կան աշակերտներ, որոնք կը սպասեն իրենց հերթին: «Եթէ դպրոցը վերցնենք, գաղութը կը մեռնի», ըսաւ Լորին հաստատ եւ համոզուած: «Դպրոցը կ'արտադրէ այն ինչ որ գաղութը պէտք ունի: Մեր ապագայ ղեկավարները հայ դպրոցէն կ'ելլեն»: Լորին ճիշդ է իր տեսլականին մէջ: Հայ դպրոցը կը դարբնէ հայ անհատը ու կը պատրաստէ հայուն առաջնորդները:



Մոնթրեալ մեծ քաղաք է: Շատ են հայ ընտանիքները որոնք իրենց զաւակները չեն կրնար հայկական ամենօրեայ դպրոց դրկել: Բայց շաբաթօրեայ վարժարանը՝ նոյնինքն Մուրթ Յակոբի շրջաբակի մէջ, մէկ այլ լուազոյն ապացոյցն է թէ հայը կը սորվի ու կը պահէ մայրենին՝ ամենօրեայ թէ շաբաթօրեայ դպրոցի միջոցաւ:

Շողիկ Ազարիկեանը եկած է Հալէպէն: Շողիկը եւ իր նուիրեալ ուսուցչական կազմը՝ բոլորն ալ սիրողական, հայ մանուկ-պատանիներու կը ջամբեն հայեցի դաստիարակութիւն իւրաքանչիւր շաբաթ օր: Մէկ ժամ տեւողութեամբ վայելեցի ու տակաւին ապրեցայ հոգեկան լիզքաւորումի պահ մը, երբ մտիկ ըրի աշակերտներուն երգը եւ արտասանութիւնները Բայց նաեւ հաճելի գրոյցը որ ունեցայ անոնց հետ: Եթէ հարց-պատասխանի նման ժամանակ մը ունեցայ, Բայց նոյնքան տեսայ հայ պատանիին ուշիմութիւնը եւ թէ ինչքան գիտակ են սորվելու: Շաբաթօրեայ վարժարանին մէջ անոնք կը սորվին հայերէն, պատմութիւն, մշակոյթ եւ կրօնք: Եթէ մէկ կողմէ տեսայ աշակերտներուն խանդավառութիւնը, Բայց նաեւ հայ ուսուցիչներուն նուիրական ծառայութիւնը: Հայակերտումը եւ հայապահպանումը կարելի չէ առանց մեծ գոհողութիւններու:

Սփիւռքահայ այս մեծ խճանկարին մէջ, Մոնթրեալի հայ գաղութը տուաւ մէկ կարեւոր օրինակ մը՝ հայապահպանումի եւ հայակերտումի: Սփիւռքը գունաւոր է, տարբեր եւ այլազան: Իւրաքանչիւր գաղութ ունի իր ապրելու եւ տոկալու գրաւականը: Պայմանները նոյնպէս կը փոխուին իւրաքանչիւր գաղութի հետ: Բայց կարելի է սորվիլ ու տակաւին կամրջել մէկ գաղութի փորձը միւսին հետ:

Սփիւռք(ներ) ենք որ ունինք քաղաքական, ընկերային ու քաղաքացիական տարբեր երեւոյթներ՝ մեկնելով մեր ապրած երկիրներու տեղական պայմաններէն: Այս բոլոր տարբեր ենթահողերուն մէջէն կայ միացնող օղակը՝ իմա առաքելութիւնը: Սփիւռք (ներ)ը անցողակի վիճակէն անցած են մնայուն կարգավիճակի: Այս պիտի նշանակէ թէ բոլորս պիտի լծուինք հայակերտումի եւ հայապահպանումի մեծ առաքելութեան կենսագործման: Այս վերջինը սփիւռք(ներ)ու առաքելութիւնն է եւ անխուսափելի պարտականութիւնը իւրաքանչիւր գաղութի: Եթէ մայրենին վտանգուած է, այս պիտի նշանակէ որոնել միջոցներ որպէսզի պահենք եւ վերապրեցնենք զայն:

Իսկ պահելու եւ վերապրեցնելու համար կայ մի քանի կարեւոր հիմքեր: Առաջինը՝ հայ դպրոցը: Յակոբ Տէր Խաչատուրեանն է. «Բախտաւորուած ենք, որ լաւ հայկական դպրոց ունինք»:

Պիտի համոզուինք, որ հայ ընտանիքէն ետք, հայ դպրոցը անհրաժեշտութիւն է մայրենի լեզուի պահպանումին ու հայակերտումի մեծ առաքելութեան մէջ: Պիտի փորձենք խուսափիլ վարժարան փակելու քաղաքականութենէն, որքան ալ ճգնաժամային ըլլայ դպրոցի մը բարոյական եւ նիւթական պարտաւորութիւնները «շակել»ը:

Եւ դարձեալ Մոնթրեալ: Միեր Գարագաշեանն է. «Ամէն ինչ կ'ընենք որ ժամանակին հետ քայլ պահենք: Եկեղեցի, դպրոց եւ հայ կեդրոն՝ այս եռեակ գործիքակազմը կ'աշխուժացնենք, որովհետեւ անոնք են մեր հիմքը հայակերտումի եւ նոր սերունդ յառաջացնելու գրաւականը»:



Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեանը՝ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդն է, Էջմիածնի Կաթողիկոսութիւն: Մեր հանդիպումին ընթացքին, Սրբազան Հայրը խօսեցաւ հոգեւոր եւ քրիստոնէական արժէչափերու մասին եւ մատնանշեց որոշ մտահոգութիւններ. «Արեւմտեան ապակրօն ուսուցմունքներ եւ նոր արժէչափեր արդէն Գանատան ընգրկած է եւ անոնք սկսած են մուտք գործել հայկական իրականութենէն ներս», ըսաւ Սրբազան Հայրը: Աբգար Սրբազան կ'ակնարկէր սեռային դաստիարակութեան դպրոցներուն մէջ եւ անոր ազդեցութիւնը ընտանեկան կառոյցներուն վրայ: «Մենք դէմ յանդիման ենք այս նոր ուսուցմունքներուն, որոնք կը ներմուծուին հայկական իրականութիւններուն մէջ: Եկեղեցին որքա՞ն պիտի կարենայ հանդուրժել եւ դիմադրել այս իրականութիւնները: Այս լուրջ մտահոգութիւն է մեզի համար»:

Եթէ հայակերտումի համար լեզուն եւ մշակոյթը անհրաժեշտ են, բայց հայակերտումի անքակտելի մասնիկն է նաեւ մեր քրիստոնէական հաւատքը ու անոր ուսուցմունքը: Ներկայ օրերու նոյնքան մեծ մտահոգութիւնն է այս նոր ալիքը, զոր դիմագրաւելու համար պէտք ունինք մեր եկեղեցիներուն եւ բոլոր ազգային միաւորներու ուժեղացումը:

Մոնթրէալի հայ գաղութը՝ անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներու բախումին առջեւ: Գաղութը այս բախումի մէջէն կրցած է պատուհասը վերածել պատեհութեան: Պատեհութիւն՝ ուր ստեղծուած իրավիճակը կարելի է օգտագործել՝ պահելու մայրենին ու զօրացնել հայկական կառոյցները:

Պիտի պահել հայ դպրոցը: Պիտի պահել հայկական կառոյցները: Եւ պիտի ուժեղացնել զանոնք:

Պիտի խօսինք անգլերէն: Պիտի խօսինք ֆրանսերէն ու տակաւին այլ լեզուներ, ինչպէս որ պէտք է եւ ստիպուած ենք՝ մեկնելով մեր սփիւռքեան իրավիճակներէն:

Բայց պիտի պահենք մայրենին:

Քուէյթ, 6 Նոյեմբեր, 2024

ՏԵՍԱԿԷՏ

ՅԼԱՄԱՐՏ. «ՅՈՒԼ»Ի ՈՒ «ՔՈՒՐՁԻ ԿՏՈՐ»Ի՞ ՄԻՋԵԻ՝

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՔՈՒՐԱՅԻՆ ԸՆԴՄԷՋԷՆ

Պարոյր Յ. Աղպաշեան



Իսրայելի մղած արշաւանքները Լիբանանի վրայ, ո՛չ պատերազմ է, իր աւանդական հասկացողութեամբ, ո՛չ ալ արկածախնդրական է, իր ընթացիկ կատարողութեամբ, որովհետեւ, որքան անոնք խորացան ու մխրճուեցան այս քառսին մէջ, այնքան սկսան դիմագերծ դառնալ, նախ՝ իրենց հակամարդկային ատելավառ պատկերը պարզելով, ապա՝ հետզհետէ իրենց հետապնդած ծրագիրներու հրէշտիւնը բացայայտելով:

Առաջին հերթին, այն տպաւորութիւնը ձգուեցաւ, թէ իրենք որոշած են ահաբեկիչները չեզոքացնել եւ ահաբեկչութիւնը ճզմել, որուն իրականացման համար, ձեռնարկած են դիմադրական շարժումի (իմա՝ «Հըզպըլլայ»ի) պարագլուխները հալածելու ու մահափորձելու, զանոնք նկատելով իրենց ոխերիմ թշնամիները եւ իրենց գոյութեան սպառնացող վրիժառու տարրերը:

Այս առումով, առաւել կամ նուազ եղանակներով, կրցան հասնիլ իրենց նպատակներուն, հաշուեյարդարի ենթարկելով իրենց հակառակորդներուն մեծ մասը, ոմբահարելով ու հրթիռարձակելով անոնց գտնուած բնակելի վայրերը կամ ապաստարանները, այս նշանակէտերու կողքին, բազմահազար անմեղ զոհեր, վիրաւորներ եւ աւերներ սփռելով համարեա ամէն կողմ եւ ամէնուն վրայ:

Եթէ սկիզբը միայն հարաւի որոշ շրջաններն էին թիրախները, սակայն շուտով տարածուեցան բազմաթիւ այլ տարածքներէ ներս, ընդհուպ հասնելով հարաւի արուարձանները, զանոնք առնելով անխնայ հարուածներու տակ, մարդկային թէ ինչքային ահաւոր կորուստներ պատճառելով:

Մինչեւ հոս արդէն տեսանելի ու զգալի էին Թել Աւիւի ոճրամետ յառաջխաղացքներուն տխուր հետեւանքները եւ ազդեցութեան գոտիները եւ այն վարկածը կար, որ կործարարները իրագործած են իրենց այս «փլան»ը, հետեւաբար, իրենց կը մնայ անցնիլ յաջորդ մարդասպանական ու հակաբնակչային ծրագրին գործադրութեան, որն էր տեղոյն բնակիչները ֆիզիքապէս ու հոգեպէս ահաբեկել ու սարսափեցնել:



Եւ այնքան մարդասեր (՞) էին հրոսակները, որ իրենց կոչերով ու թռուցիկներով, ձայնասփիւռներով ու հեռատեսիլներով, կը պահանջէին տեղոյն բնակիչներէն, ընդհուպ լքել իրենց բնակարանները ու հեռանալ իրենց գիւղերէն ու գաւառներէն, որպէսզի... չվնասուին կամ չվտանգուին. միայն ողորմելի տրամաբանութիւն:

Աւելին՝ ի՛նչ գաւեշտ, ի՛նչ հեզնանք, ամենէն աւելի շարտուած միջազգային ընտանիքներուն ու դէտերուն անպատիւ եւ անբարոյ ճակատներուն, երբ կը հետեւէին իսրայէլեան ճամարտակութիւններուն, որոնք սակայն ուղղուած էին, նոյնիսկ անտղնաշար եւ անպատուաբեր միջազգային կողմերուն, որոնք ոչ միայն սառսասփրտ ականատեսներ դարձան այս (եւ այլ) նախճիրներուն, բայց ծպտուն չհանեցին, իսկ Բենիամինին նման բազմազուլի ճիւղ մը, գոեհկօրէն ու լկտիօրէն շարունակեց (ու կը շարունակէ) մարդ սպաննելու եւ երկիր քանդելու իր ճարտարապետութիւնը:

Բենիամինական միւս դաւադրական քայլը, հիմնայատակ կործանելն էր Լիբանանը, ատոր փաստը, աւելի քան յստակ չէ՞, երբ արդէն իսկ աւերուած շրջաններն ու քաղաքները կը մոխրացնէր, փորձելով աշխարհը կլլեցնել, թէ ինք տակաւին վճռած է իր թշնամիները լրիւ ոչնչացնել, ինչ որ բացարձակ ստախօսութիւն եւ անհեթեթութիւն է, քանի այդ տարածքներուն մէջ չկան իր կարծեցեալ տարրերը, բայց, իր ստորնաքարչ նպատակը քարուքանդել եւ անբնակելի դարձնելն էր, Լիբանանը պարպելով ու մերկացնելով իր եութենէն եւ ինքնութենէն:

Այս առիթով, կ'արժէ հարց տալ, միջազգային աստեաններուն ու դատական կառոյցներուն, ինչո՞ւ չեն գար, չեն քննէր, չեն խուզարկէր ու չեն պարզէր, որ դիմադրական շարժումները ո՞ր կը գտնուին կամ ի՞նչ դերակատարութիւններու մէջ կը յայտնուին, իսկ անոնց զինապահեստները ու զինամթերքները ո՞ր կը պահուին, որպէսզի ճշմարտութիւնը բացայայտուի ու ցոյց տրուի, թէ ո՞վ է զազրախօսը, խախտակիրը, յերիւրածոն, իսկ ո՞վ է իրաւախօսը, իրապաշտը, իրատեսը:

Ասիկա տարրական եւ օրինական իրաւութիւն մըն է, մէկ կողմէն՝ միջազգային կառոյցներու լիազօրութիւններէն, միւս կողմէն՝ արդարադատութեան նժարները ճշդելու ու պարզելու տեսակետէն:

Սակայն, ասիկա կրնա՞յ կեանքի կոչուիլ, նոյնիսկ երբ ատոր գործադրութեան իրաւացիութեան հասցեատէրերը ունին իրենց բացարձակատիրութեան հեղինակութիւնները:

Դժբախտաբար, հակառակ այդ դրուածքներու ճշգրտութեան ուղիին, միջազգային ուժերը չեն գտնուիր իրենց արժանի պատուանդանին վրայ, ընդհակառակը, այսպէս ըսած, «կը դաւաճանեն» իրենց առաքելութեան երդմնառութեան պահպանումին ու կիրարկումին:

Անշուշտ, այս թղթածրարը խոր ու բարդ հանգոյց մըն է, որ միջպետական արահետներուն մէջ կը մշուշուի (կամ կը կորսուի), իսկ անկէ օգտուողները կ'ըլլան այն փառատեսչիկները ու փառամուլները, որոնք գիտեն սպրդիլ մեծերու արանքին մէջ եւ իրենց բութ ծրագիրները կեդրոնացնել, բայց, մարդկութեան ու բնակչութեան հաշուոյն:

Միւս (կամ յաջորդ) խորամանկութեան-ստորութեան խաղքն է, զոր կը փորձեն իսրայէլացիք իրականացնել (եւ արդէն իսկ ձեռնարկած են անոր), ասիկա իրենց փճացուցած ու բնաջնջած տարածքներէն լրիւ հեռացնել կամ ի սպառ արգիլել տեղոյն սեփականատէր բնակչութեան



երբեք չվերադառնալ իրենց օճախներն ու արտերը, իսկ աւելի վտանգաւորը ու մտահոգիչը այն է, որ բռնի տեղահանուածը մնայ հոն՝ ուր «Ժամանակաւոր» հանգրուանած է:

Մէկ խօսքով, այս դիւապետական միջոցառումով, անոնք «կարմիր գիծ» կը քաշեն, գաղթականները պահելու իրենց բնակավայրերուն եւ այժմ իրենց ապաստանած վայրերուն մէջ, որպէսզի չհամարձակին անցնիլ այդ սահմանը կամ նոյնիսկ չմտածեն այդ մասին:

Այս է լռելեայն, բայց բացայայտ պատճառը, որ իսրայէլացի չարագործներ, անդադար եւ անընդհատ կը ուժեղանան ու կը ուժեղանան, առանց այդ ալ բնակչութենէ պարպուած շրջանները, ոչ միայն ահաբեկչական ճգնաժամեր պահելով, այլեւ՝ առ որ անկ է հասկնալու, թէ ետդարձը անկարելի եւ անհնար է, միանգամայն, բոլոր կասկածամտներն ու թերահաւատները... համոզելու նման ՉՈՐ իրականութեան մը անվիճելիութենէն ու անփոխարինելիութենէն:

Ասկէ կը բխի լրացուցիչ որոգայթը, որ արդէն իսկ, որոշ շրջաններու մէջ սկսած է զգալի դառնալ. ատիկա, «ապաստանեալներու» եւ «հիւրընկալներու» միջեւ լարուածութիւն ու պրկուածութիւն ցանելու չարագործ մարմաջն է:

Իսկ այս բռնագրօսիկութիւնը, որքան ալ հրահրուած, դրդուած կամ կազմակերպուած ըլլայ (հինգերորդ զօրասիւնէ մը կամ այլ դարանակալ անկիւնէ մը), անտարակոյս, խիստ աղիտաբեր կրնայ ըլլալ, մանաւանդ նման անբաղձալի եւ ձգտուած կացութեան մը մէջ: Բարեբախտաբար, լիբանանեան բանակը ու հետախուզական կառոյցները, աչալուրջ են ու հետեւողական, որ այդպիսի թեժ պայմաններ չառաջանան, որուն համար, իրենց շրջագայութիւններով ու հսկողութիւններով, կանխարգիլական ու հսկողական դերի մէջ են:

Այդուհանդերձ, որկրամով թշնամին, առանց հանգստանալու հետամուտ է ծուղակներ գտնելու ու ճեղքեր բանալու ամենուրեք, օգտուելով իր տմարդկային սովորութիւններէն, պատնէշներ ստեղծելու իրարու միջեւ, պառակտումներ սերմանելու, թակարդներ հիւսելու, որպէսզի լիբանանցիներու միջեւ առաջանան ոխակալութիւններ ու վրէժխնդրութիւններ, հաւատալով որ՝ այդ ձեւով եւ ընթացքով, ինք աւելի կը շահի, աւելի կը հզօրանայ, բայց, ամենէն աւելի, նորովի Կ՝ԱՆԱՄՆԱՆԱՅ, իր մարդասպանական մոլուցքով ու թունաւորումով:

Ահա թէ ինչո՞ւ՝ կ'ըսէինք, տեղի ունեցող հակադրութիւնները, իրենց ահաւորութեամբ, կատաղութեամբ եւ ամեհութեամբ, երբեք «պատերազմ» չեն կրնար կոչուիլ ու նկատուիլ, որովհետեւ անոնք կը միտին՝ մարդակերութեան, մարդասպութեան, մարդախցողութեան, մարդաորսութեան, մարդապղծութեան, այնքան ատեն որ՝ դիմացի կողմին արիւնը պղտոր է, խառնակ, ժահր ու մաղձ եւ չունի, գուրկ է մարդկային նուագագոյն առաքիւնութիւններէ ու հասկացողութիւններէ:

Ո՞վ կրնայ, կը համարձակի, ուրիշ ձեւով մեկնաբանել այս անմարդկային մերկապարանցութիւնը, անհանդուրժողային այլամերժութիւնը, անպաճուճային ողբերգութիւնը:

Դժուար թէ՛ պարզապէս անոր համար, որ ամէն ինչ որ կը պատահի կամ տեղի կ'ունենայ վերոյիշեալ մակարդակներու վրայ, աւելի քան պարզ եւ յստակ է ու կը հաստատէ, թէ Իսրայէլ կոչուած օճաբարոյ պետութիւնը, ինքզինք յանձանառու ու կամակատար կը նկատէ շարժելու



ու գործելու, սակայն, միշտ քանդողական եւ ոճրասպանական առօրեայով, գործընթացով եւ յաջորդականութեաւ մը:

Տարօրինակ է այս ռազմաքաղաքականութեան տիրահռչակութիւնը, նորութիւն է այս քարասրտութեան անբարոյականութիւնը, բնական է այս արտառոցութեան ձեւակերպութիւնը:

Պետք է դիտել ու դատել, ճշդել ու մատնանշել:

Ներկայիս, ցնոր տնօրինում (եւ մինչեւ ե՞րբ), շրջանը կիանցնի ու կը թեւակոխէ նոր ու իրամատային տարբեր ականապատումներէ, որովհետեւ Իսրայէլ կը շարունակէ բարբաջել եւ ոռնալ, թէ՛ ինք տուժողն է եւ թէ՛ ինք պետք է ըլլայ յաղթողը:

Սակայն, որո՞ն է որո՞նց հաշուոյն, արդեօք հարցնող կամ պահանջող կա՞յ, հրապարակը ձգելով զազանաբարոյ ու վայրենահիբէշ «ՅՈՒԼ»ի մը առջեւ, որ ամէն ինչ եւ անհատ կոտորածներու եւ անկիւնատրելու հեւքի մէջ կը գտնուի, կը փորձէ ինքզինք ցուցամուլել, բայց, ի վերջոյ, չկրնալով ինքզինք պարտադրել կամ դիմացինը պարտութեան մատնել:

Այսօրուան իսրայէլեան «ՅՈՒԼ»ը եւս կը գտնուի նման տխրեղծ պատկերի մը առջեւ, որ մարդկութիւնը կը շփոթէ «կարմիր քուրջ»ի մը հետ, մինչդեռ ատիկա պատրանքային բեկոր մըն է, իսկ ինք՝ չունի նոյնիսկ ՅՈՒԼային շնորհք մը, յատկութիւն մը, մօտեցում մը կամ արդեօ՞ք... զգացմունք մը:

(Մէկը ըսաւ, միւսը՝ փսփսաց. կ'ապրինք ու կը տեսնենք: Ուրեմն, քիչ մըն ալ սպասենք):

(Պէրութ)

« Դիտարկումով ու Դատումով» Շարքէն:

ՄԵՍՐՈՊԵԱՆ ԴԱՍԱԿԱՆ ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՇԱՐՈՒՆԱԿ ԳԵՏԻՆ ԿՐ ԿՈՐՄՆՑՆԷ - (Ա. մաս)



Մփիւռքի մէջ, յաճախ, ահագանգ կը հնչեցնենք արեւմտահայերէնի նահանջին մասին, որովհետեւ գրեթէ ամէն օր տխրօրէն ականատես կ'ըլլանք, թէ ի՛նչպէս այս փառաւոր լեզուին գործածութեան ծիրը հետզհետէ կը կծկուի, օղակը կը նեղնայ: Արեւմուտքէն ետք՝ հիմա այլեւս միջինարեւելեան մեր գաղութներն ալ սկսեր են թերանալ արեւմտահայերէնին տէր կանգնելու, զայն բծախնդրօրէն պահպանելու, անոր վրայ գուրգուրալու եւ զայն դէպի ապագայ փոխանցելու իրենց բնական պարտականութեան մէջ: Եւ ուստի, կը գունաթափի լեզուն, կ'աղճատի, կ'աղաւաղուի՝ գրաւոր թէ բերանացի իր զոյգ արտայայտութեանց մէջ, մ'ամուլով թէ բեմերէն: Ո՛ր մնաց նախաեղեռնեան Գեղապաշտ Մերունդի շքեղ հայերէնը, ո՛ր մնաց սփիւռքի հին շրջաններու գրողներուն կամ հրապարակագիրներուն պերճափայլ հայերէնը: Չկայ:

Ասիկա մետայլին մէկ երեսն է միայն: Կայ միւս երեսն ալ, որ կը վերաբերի արեւմտահայերէնի ուղղագրութեան: Հո՛ւ եւս շատ թերացած ենք:

Մեր մեծագոյն դժբախտութիւններէն մէկն է հայերէնի ուղղագրութեան երկուութիւնը, երկփեղկեալ վիճակը: Ահա արդէն շուրջ հարիւր տարիէ իվեր հայերէնի ուղղագրութիւնը միասնական չէ: Կայ սփիւռքի մէջ կիրարկուող դասական բազմադարեան ուղղագրաձեւը, զոր կը կոչենք մետրոպեան ուղղագրութիւն, եւ կայ Խորհրդային Հայաստանի առաջին տարիներուն (1922-ին) որդեգրուած ու յետոյ ալ Հայաստանի Հանրապետութեան ժառանգ թողուած կերպարանափոխեալ նոր ուղղագրաձեւը, որ առաւելաբար ծանօթ է արեւելեանական ուղղագրութիւն անունով: Սովետ վարչակարգի շրջանին այս խեղաթիւրեալ ուղղագրութիւնը պարտադրուեցաւ ոչ միայն Խորհրդային Միութեան տարածքին ապրող ամբողջ հայութեան (Վրաստան, Ատրպէյճան, Ռուսաստան եւ այլուր), այլեւ Պուկկարիոյ եւ Ռումանիոյ նման արեւմտահայ պատմական հին գաղութներու, որոնք Բ. Աշխարհամարտէն ետք ինկած էին Սոսկուայի շուքին տակ...: ՍոՖիայի «Երեւան» (1944-էն) ու Պուքրէշի «Նոր Կեանք» (1950-էն) հայկական զոյգ շաբաթաթերթերը առաջին իսկ օրէն հրատարակուեցան ու դեռ կը շարունակեն հրատարակուիլ արեւելեանական ուղղագրութեամբ:

Հայ սփիւռքը, որ մինչեւ անցեալ դարավերջ կամ 2000-ական թուականներ իրեն ընձեռուած կարելի բոլոր միջոցներով հաւատարմօրէն տէր կանգնէր էր իր աւանդական



ուղղագրութեան, այսօր ձեռնարկ է արդէն: Ան այլեւս տէրն ու պաշտպանը չէ՛ իր ուղղագրութեան: Արեւմտահայերէն լեզուի նահանջին կողքին ու անոր քովն ի վեր՝ այսօր ականատես վկաններն ենք մեսրոպեան դասական ուղղագրութեան նկատմամբ ցուցաբերուած ընդվզեցուցիչ անտարբերութեան մը, -- պիտի ըսենք նոյնիսկ՝ անտեսումի մը, -- որ կու գայ նո՛յն այդ լեզուին եւ ուղղագրութեան բնական պաշտպանն ու վահանը կարծուած 4 մայր հիմնարկութիւններէ. մամուլ, միութիւններ, դպրոց եւ եկեղեցի:

Ի՞նչ ըսել կ'ուզենք:

Բացէ՛ք արտասահմանեան հայ մամուլը (Պէրթոթէն մինչեւ Ամերիկա) ու տեսէք թէ ուղղագրական սխալագրութիւնները ի՞նչ ահաւոր համեմատութեամբ կը վխտան մեր թերթերու էջերուն վրայ...: Փաստօրէն, արեւմտահայ մամուլը (քիչ բացառութեամբ) այլեւս հոգածու չէ մեր լեզուին:

Մօտէ՛ն հետեւեցէք մեր մշակութային միութիւններուն: Մա՛նաւանդ Արեւմուտքի մէջ՝ անոնց լեզուն հայերէնը չէ արդէն: Անոնց ծանուցումներն իսկ, մեծ մասամբ, տեղական լեզուով են (կարդացէ՛ք Փարիզի «Նոր Յառաջ»-ին ծանուցումներու էջերը):

Մտէ՛ք միջինարեւելեան մեր ամէնօրեայ դպրոցներու (Հալէպէն մինչեւ Պոլիս, Քուէթթ ու Գահիրէ) դարպասներէն ներս ու փորձ-քննութեան ենթարկեցէք բարձր կարգերու մեր աշակերտութեան ուղղագրական կարողութիւնը: Յուսախաբ պիտի ըլլաք. պիտի վհատիք ու շշմի ք, որովհետեւ անձամբ պիտի հաստատէք, թէ մեր վարժարաններուն շուքին տակ հասակ առնող նոր սերունդը (մէկ քանի անհատ բացառութիւններէ դուրս) բնաւ չի տիրապետեր հայերէնի ուղղագրութեան, անոր ծանօթ կանոններուն եւ օրէնքներուն, յաճախ՝ դոյզն չափով ու տարրական մակարդակով իսկ...: Փաստօրէն, սփիւռքեան մեր դպրոցները, լայն չափով, կը թերանան կամ չեն յաջողիր հայ պատանի-պատանուհիին տոկուն հայերէն մը սորվեցնելու իրենց բնական առաքելութեան մէջ:

Մամուլէն ու դպրոցներէն ետք, ընկրկումի նշաններ ցոյց կու տայ նաեւ եկեղեցին: Երոպայի ու Ամերիկայի մեր եկեղեցական թեմերէն կամ ծուխերէն ոմանք, տեղական լեզուին առընթեր, հիմա սովորութիւն դարձուցեր են իրենց պաշտօնական հաղորդագրութիւններն ու լրատուութիւնները իմբագրել ու հրատարակել... արեղեանական ուղղագրութեամբ: Ի՞նչ դրդապատճառով կամ ո՞ր տրամաբանութեամբ՝ յստակ չէ:

ԼԵԻՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ

ՄԵՍՐՈՊԵԱՆ ԴԱՍԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ՇԱՐՈՒՆԱԿ ԳԵՏԻՆ ԿԸ ԿՈՐՄՆՅՆԷ - (Բ.մաս)

Ընդգծեր էինք, թէ սփիւռքեան 4 մայր հիմնարկութիւններ՝ մամուլ, միութիւններ, դպրոց եւ եկեղեցի, յաճախ կը թերանան արեւմտահայերէնն ու անոր դասական ուղղագրութիւնը պաշտպանելու, պահպանելու, նոր սերունդին համար զանոնք կենդանի ապրում դարձնելու իրենց բնական պարտականութեան եւ առաքելութեան մէջ:

Սփիւռքը հիւծումի առաջնորդող երեւոյթներէն մէկն է այս:



Պետք չէ մտահան ընել, թէ հայերէն լեզուն մեր ինքնութիւնը պաշտպանող գլխաւոր գրա՛հն է սփիւռքի համայնակուլ ափերուն վրայ: Եթէ հրաժարեցանք այդ գրահէն, կը նշանակէ թէ բռնեցինք անձնատուութեան ու կորուստի սեւ ճամբան...:

Հիմա տանք քանի մը կենդանի օրինակներ:

-- Կը բանանք Աթէնքի «Նոր Աշխարհ» շաբաթաթերթի վերջին թիւը (11 Նոյ. 2024): Թերթը լոյս կը տեսնէ 1968-էն ի վեր ու կը պատկանի ԱրարատՄարզական-Մշակութային Միութեան (Ռամկավար Ազատական Կուսակցութեան կողմէ հովանաւորեալ): Ա. Էջին գլխաւոր լուրը կը կրէ սա՛ խորագիրը.«Եպիսկոպոսական ձեռնադրություն [ուշադիր եղէք բառին ուղղագրութեան -- Լ.Շ.] եւ օծում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում»: Գրեթէ լման երկու էջի վրայ փոռած այս արեւելահայերէն ծաւալուն լրատուութիւնը ծայրէ ի ծայր շարուած է աբեղեանական ուղղագրութեամբ...: Փաստօրէն, Աթէնքի մեր յարգելի խմբագիրները չեն ուզած ձանձրոյթը յանձն առնել Էջմիածնէն դրկուած թղթակցութեան ուղղագրութիւնը փոխելու: Տպած են գայն այնպէս ինչպէս որ է...: Անտէ՛ր հայ մամուլ: Ո՛չ հաշուետու կայ, ո՛չ հաշուեպահանջ...:

-- Պոլսէն հայ խմբագիր մը Նիւ Եորք ժամաներ էր վերջերս (Հոկտեմբերի սկիզբը), հանդիպումներ ունենալու համար համայնքային շրջանակներու հետ: Հոն գործող Պոլսահայ Օգնութեան Միութիւնը (C.A.R.S.) ամերիկահայ մամուլին դրկեր էր հայատառ ծանուցում-հրաւիրագիր մը, որ կը վիտար ուղղագրական ու շարահիւսական ամօթալի սխալներով...: Այսպիսի ընդվզեցուցիչ պարագաներու դիմաց անխուսափելի կը դառնայ հարցումը.-- Մեր միութիւնները ինչո՞ւ համար իրենց վարչական կազմերուն մէջ չեն ընդգրկեր գէթ 1-2 հայերէնագէտ տարրեր, որոնք կարենան հայերէն անսխալ նամակ մը գրել, հայատառ ծանուցում մը պատրաստել կամ... հայերէնով ստեղծագրութիւն պահել: Անկարելի՞ քան մը կը պահանջենք արդեօք:

-- Յունաստանի Թեսաղոնիկէ (Մելանիկ) քաղաքին մէջ տասնամեակներէ ի վեր կը գործէ Հայ Գթութեան Խաչի (մեզի ծանօթ ՀՕՄ-ի տեղական մասնաճիւղն է) Մալաքեան-Գասպարեան շաբաթօրեայ դպրոցը: Դիմատետրի վրայ երեւցած անոր նորագոյն մէկ յայտարարութիւնը կ'ըսէ.«Հարգելի ծնողներ, ցանկանում ենք ձեզ տեղեկացնել, որ Նոյեմբերի 16-ին շաբաթօրյա դպրոցում տեղի կունենա 2024-2025 թթ. ուսումնական տարվա առաջին ծնողական հանդիպումը: Խնդրում ենք բոլորին ներկա գտնվել» (ուղղագրաձեւը թողած ենք նոյնը): Ինչպէս կը տեսնէք, շարադրանքը արեւելահայերէնով է եւ աբեղեանական ուղղագրութեամբ...: Ի՛նչ ըսել...:

-- Հիմա ալ ուստում մը կատարենք դէպի Հարաւային Ամերիկա՝ Պրագիլ: Տեղւոյն Հայոց Առաջնորդարանը, տարիներէ ի վեր, չի վարանիր փորթուկալերէն իր հաղորդագրութիւններուն հայերէն տարբերակները հրամցնելու... աբեղեանական ուղղագրութեամբ: Առաջնորդարանին կից՝ Սան Փաւլոյի Դուրեան Ազգ. վարժարանին մէջ էւս աբեղեանականով կը դասաւանդուի հայերէնը արդեօք, կ'անգիտանանք: Ամէն պարագայի, երեւոյթը խորթ է ու դատապարտելի: Ահա՛ Առաջնորդարանի վերջին հաղորդագրութենէն քանի մը տող.«Նոյեմբերի 10-ին Ամենայն Հայոց կաթողիկոսի տնօրինությամբ Բրազիլիայի Սուրբ Գեորգ եկեղեցում՝ հանդիսապետությամբ թեմակալ առաջնորդ Տ. Նարեկ եպս. Բերբերյանի կատարվեց "համահայկական աղոթք" արցախահայերի իրավունքների պաշտպանության, մասնավորապես Ադրբեջանի կողմից առեւանգված, գերեվարված եւ Բաքվում շինծու մեղադրանքներով ապօրինաբար պահվող



Արցախի Հանրապետության ղեկավարության ներկայացուցիչների համար» (ուղղագրածելը թողած ենք նոյնը):

Չենք շարունակեր ու կը բաւարարուինք այսքանով:

Ինչպէս կը տեսնուի, արեւմտահայերէնն ու անոր դասական մեսրոպեան ուղղագրութիւնը անխղճօրէն դո՛ւրս շարտուած են մեր արեւմտահայ ազգային կարգ մը հաստատութիւններու գրագրութենէն:

Այս գնացքով, դէպի ո՞ւր կ'ընթանայ Սփիւռքը: Հարցին ողբերգականութեան անդրադարձող կա՞յ:

ԼԵՒՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ



ԼԱԻԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԻ ՓՆՏՈՏՈՒՔԸ ՏՕՆԱԿԱՆ ԱՅՍ ՕՐԵՐՈՒՆ



ՎԱՐՈՒՇ ԹԵՆՊԵԼԵԱՆ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2024



Տօնական օրերը, հակառակ մեր ժողովուրդին դիմագրաւած բազում դժուարութիւններուն, որոշ ջերմութիւն եւ ուրախութիւն կը բերեն իրենց հետ, իսկ ուրախութեան լաւագոյն արտայայտութիւնը՝ նուիրելու հաճոյքն է անկասկած, որ միախառնուելով տօնակատարութիւններուն, խնճոյքներուն, մեր մանուկներու ծիծաղին, մեր պատանիներու խանդավառութեան եւ մեր երիտասարդներու ու չափահասներու ձգտումներուն ու երագներուն՝ կը սահմանէ ու կը խթանէ տօնական ոգին: Տարեթիւր, ոչ ալ անոր փոփոխութեան տօնը՝ Նոր Տարին իմաստ ու արժէք ունի, երբ բացակայ է վերածնունդի եւ վերանորոգման յանձնառութեան այդ ոգին՝ անձնական թէ հաւաքական կեանքի մէջ:

Ամէն մարդ կ'ուզէ լաւագոյնը նուիրել իր հարազատին, եւ ամէն մարդ ազա՛տ է իր ուզած բանը նուիրելու եւ պիտի՝ նուիրէ, բայց մեր մաղթանքն է, որ նուիրաբերելու ատեն չմոռնանք մեր մեծ հարազատը՝ մեր մեծ ընտանիքը՝ մեր հաւաքական կեանքը եւ զայն կենսաւորող կրօնանները:

Թէեւ հիւանդ, բայց երբ լիբանանեան հայրենիքի սիրտը կը բաբախէ տօնական օրերու կշռոյթով, մենք կը պատկերացնենք, որ հայ համայնքն ալ կը համախմբուի նուիրաբերութեան ոգիով: Տուները, փողոցներն ու վաճառատունները զարդարող լոյսի շողերէն անդին, մեր մաղթանքն է, որ Լիբանանի հայ համայնքը տօները կ'ընդունի իբրեւ հանդիպելու, բարութիւն տարածելու եւ բարերարութիւն կատարելու առիթ մը: Հակառակ տնտեսական դժուարութիւններուն եւ շարունակուող մարտահրաւերներուն, ներառեալ պատերազմի ուրուականը Լիբանանի հարաւին մէջ, մենք հաստատակամօրէն կը հաւատանք, որ յոյսը, ի վերջոյ, պիտի յաղթանակէ: Մեր համայնքը տասնամեակներու ընթացքին զարգացուցած է մարտահրաւերներուն ու փոփոխութիւններուն յարմարելու եւ տոկալու հաւաքական կարողութիւն մը, որ դարձած է մեր առաջնորդը դժուարին ժամանակներու մէջ:



Եկեք պահ մը մտածենք ամենէն արժէքաւոր նուէրին մասին, որ կարելի է տալ այս օրերուն: Բնականօրէն, ամէն անհատ ունի իրը՝ իր ամենաթանկը անձնական կեանքի մէջ, բայց ի՞նչ է այն հաւաքական կեանքի մէջ. մեր երիտասարդները եւ անոնց դաստիարակութիւնն ու կրթութիւնը անկասկած: Յարափոփոխ այս աշխարհին մէջ, որեւէ ներդրում երիտասարդութեան ուղղութեամբ՝ կը հանդիսանայ ամենէն կարեւորը վերանորոգ ու բարգաւաճ ապագայի համար:

Այս տարի՝ կեդրոնանանք մեր երիտասարդութեան վրայ՝ զանոնք ներգրաւելով նուիրելու բերկրանքին եւ կամուրջ մը ստեղծելով անցեալի աւանդութիւններուն եւ ապագայի սպասումներուն միջեւ: Բարեգործութեան ոգիով, եկեք ոչ միայն մեր ձեռքերը երկարենք կարիքաւորներուն, այլեւ զօրացնենք նորահաս սերունդի ներգործուն դերակատարութիւնը Լիբանանի հայ համայնքին կազմակերպական կեանքին մէջ:

Տօնական այս օրերուն եկեք որոշենք զնահատել իւրաքանչիւր հայ երիտասարդի մտքին ներուժը, եւ առաջադրենք այդ ներուժը զարգացնող միջոցներ: Կրթական, մշակութային եւ ընդհանրապէս երիտասարդներու ձայնը լսելի ու ամուր դարձնող այլ ծրագիրներու մէջ ներդրումներ կատարելը նման է սերմնացանքի, որ հետագային պիտի ծաղկեցնէ մեր ապագան:

Երիտասարդ սերունդին հանդէպ մեր նուիրուածութիւնը շատ աւելին է քան նիւթեղէն նուէրը: Ան կ'ընդգրկէ երկխօսութեան համար պայմաններու ստեղծումը, միտքերու այլազանութեան, ընդհանրապէս այլակարծութեան հանդէպ լայնախոհութիւնը եւ երիտասարդներուն մէջ տոկունութեան, բարեգործութեան եւ համայնքային ծառայութեան արժէքներու սերմանումը: Երբ այս օրերուն կը խմբուինք աւանդական սեղաններու շուրջ, եկեք նաեւ աւանդութիւն դարձնենք երիտասարդական սեղաններու սարքումը, ուր առատօրէն նորահաս սերունդին կը հրամցուին հաւաքականութեան ծառայելու, անոր տէր դառնալու, զայն ղեկավարելու եւ ի վերջոյ՝ բարգաւաճելու բոլոր միջոցները: Այսպիսով մենք ոչ միայն կը զօրացնենք մեր համայնքին փոխկապակցութիւնն ու ներդաշնակութիւնը, այլեւ կ'երաշխաւորենք անոր գոյատեւումը:

Տօնական եռուզեռի այս օրերուն եկեք մտածենք նաեւ մեր տարեցներուն մասին՝ ոչ միայն հոգատարութեան ոգիով, այլեւ գտնելով ձեւերը մեր երիտասարդները ներգրաւելու եւ զանոնք կամրջելու մեր տարեցներուն հետ: Հաւատացէ՛ք, տատիկի ու թոռան կապը որքան կարեւոր է ազգային դիմագիծի ձեւաւորման մէջ: Այդ կապով է որ «հինին» հայաբոյր համը կը շաղախուի «նորին» նորարարական թռիչքներուն հետ: Լիբանանի հայ համայնքը այսօր կը ներկայացնէ բազմազան ու բազմագոյն մետաքսեայ հիւսուածք մը, ուր գիծերն ու գոյները կորսնցուցած են իրենց կառոյցն ու ներդաշնակութիւնը եւ հետեւաբար՝ իրենց գրաւչութիւնը, եւ այդ մետաքսեայ հիւսուածքը կրնայ ամողջովին փտիլ, եթէ կարելի չըլլայ մեր երիտասարդներու ներուժով ու գաղափարներով վերանորոգել զայն: Գիծերն ու գոյները դրած են մեր տարեցները, կը մնայ նոր ու ժամանակակից ճաշակով վերակենդանացնել զայն: «Տատիկի ու թոռնիկի» այս կապը՝ անցնելով միջին սերունդի բովէն՝ կրնայ ստեղծել տարածքներ, ուր կարելի կ'ըլլայ զարգացնել ու ամրապնդել իւրաքանչիւրին հաւաքական հայաշունչ պատկանելիութեան զգացումը: Տարբերութիւնները կը դառնան նրբաթելեր, որոնք կը զարդարեն մեր համայնքին հիւսուածքը:



Մէկը բոլորին համար, բոլորը Լիբանանի հայ համայնքին համար: Տօնական այս օրերու լաւագոյն մաղթանքը, խոստումն ու յանձնառութիւնը պիտի պիտի ըլլայ համախմբուիլ հաւաքական գործի շուրջ: «Մէկը բոլորին համար, բոլորը Լիբանանի հայ համայնքին համար» կարգախօսը կարելի չէ իրականացնել առանց սերունդները կամբջող համագործակցութեան ոգիի զարգացման, առանց երիտասարդները ներգրաւելու համայնքային աշխատանքներուն մէջ՝ ստեղծելով նախաձեռնութիւններ, որոնք միաժամանակ կ'արձագանգեն անոնց ձգտումներուն:

Նոր տարուան նախօրեակին եկէք ոչ միայն տօնենք առիթը, այլեւ մարմնաւորենք անոր իսկական ոգին՝ վերանորոգման բազինին ընծայելով խոստումը զօրացնելու նորահաս սերունդներուն դերակատարութիւնը գաղութապահութեան եւ ընդհանրապէս սփիւռքապահութեան մէջ: Նոր տարուան հետ փակենք էջը հինգաձ կառոյցներուն եւ նորին ստեղծումը վստահինք մեր երիտասարդներուն:

ՊԱՏԵՐԱԶՄ

«Խաղաղութիւնը քաղաքակրթութեան առաքինութիւնն է, պատերազմը՝ նրա յանցագործութիւնը՝ չարիքը»:

Վ. Հիւզօ



Բնական երեւոյթ չէ պատերազմը: Կենդանիները չեն պատերազմում, նրանք որսում են սնունդու պահանջը յագեցնելու: Այն մարդկային յղացում է եւ այնքան հին է, որքան մարդ արարածը: Ըստ էութեան այն տեղի է ունենում, երբ մի մարդ, մի խումբ, մի պետութիւն ընդհարում է մէկ այլ խմբի կամ պետութեան հետ ծագած որեւէ վէճ զենքի ուժով լուծելու, մինչեւ իսկ իրար ոչնչացնելու ձգտումով: Յաճախ, որոշ հրոսակներ ասպատակում էին այլ երկրներ թալանի, կողոպուտի նաեւ արօտավայրի տիրանալու նպատակով: Յիշենք հեռաւոր անցեալում եղած թաթար մոնղոլական վայրի ցեղերի արշաւանքները, որոնց առաջնորդներն էին Աթիլան, Չինգիզ խանը, Լենկ Թեմուրը եւ այլն, ինչպէս նաեւ, հռոմէացի զօրավար Լուկուլիոսը հասաւ մինչեւ Հայաստան, հիւսիսի վիկինգները եւ շատ ուրիշներ՝ չնոռանալով Հաննիբալն ու Մեծն Ալեքսանդրը:

Միսլ չեն պատմաբանները, երբ նշում են թէ մարդկութեան պատմութիւնը իրականում պատերազմների պատմութիւնն է եւ աշխարհի եօթ հրաշալիքներից շատ աւելի քիչ մանրամասնութիւնների ենք ծանօթ, քան բազում պատերազմների ու ճակատամարտերի մասին: Գաղտնիք չէ նաեւ, որ պատերազմները մեծ քանակով մարդկային կորուստների հետ են կապուած, բայց ի վերջոյ նրանք շահաբեր են թէ աւարի ձեռով եւ թէ երբեմն տարածքներ գրաւելու տեսակետով, իսկ անհամար զոհերի քանակը անհանգստացնող հանգամանք չէ յաղթողի համար, մինչ պարտուողը կարող է ողբալ իր ճակատագիրը ըստ ցանկութեան:

Անհնար է յիշել բոլոր պատերազմները, քանզի իրականում երկրի որեւէ անկիւնում միշտ բախումներ եղել են դարերից ի վեր՝ մեծ ու փոքր կարեւորութեան, բայց անդադար մէկը միւսի շարունակութիւնը լինելով, աւելորդ չէ նշել Անգլիոյ եւ Ֆրանսիայի միջեւ ընդհատումներով պատերազմը, որ տեւեց հարիւր տարի (1337-1453):

Բոլոր պատերազմները անտրամաբանական են ըստ էութեան, քանզի նրանց աւերելու եւ սպանելու մոլուցքը բնութեան սկզբունքներին յարիր չեն եւ տանում են մինչեւ իսկ ինքնառնչացումի, իսկ մարդու հիմնական դերը բարգաւաճուելն է: Պատերազմի գնալու փափաքը երբեմն առաջնորդի ինքն իրեն զերագանցելու կիրքն է (mégalomanie), որ անսանձելի նպատակ է, մտամոլութիւն: Սյոպիսին չէ՞ր Բոնապարտը իր ձեռնարկած արշաւանքներով: Բանակի տասնապետից հասնելով ֆրանսիական կայսրի գահին, թերեւս մոլորուել էր իր իսկ յաջողութիւններից եւ իր դրացի երկրներին թէպէտ մասամբ տիրելուց



յետոյ, մինչեւ Եգիպտոս¹ հասնելով չքաւարարուեց եւ դէպի Ռուսաստան արշաւեց, որ ոչ մէկ տրամաբանութեան չէր համապատասխանում, նախ որ երեք հազար կմ.պէտք էր քայլել առանց անհրաժեշտ քանակութեամբ կօշիկ ունենալու եւ խիստ ձմեռուայ պատճառով զինուորները քայլում էին ոտքերը լաթով փաթաթած: Արշաւանքը աւարտուեց ինչպէս ծանօթ է բոլորին:

Նոյն տրամաբանութեամբ, նոյն սխալը գործեց Հիտլերը, երկրորդ համաշխարհային պատերազմում (1939-1945) Բախումների ասպարէզ ներքաշելով աշխարհի երկրների մեծ մասը, որից զերծ չմնաց նաեւ մեր աւետեաց երկիրը՝ տալով երեք հարիւր հազար զոհ խորհրդային բանակի կազմում, թէպէտ լինելով Բեռլին մտնող առաջին ջոկատներից եւ յաղթանակի դրօշը խորհրդարանի տանիքին ամրացնողներից:

Անյաջող նկարիչ Հիտլերը քաղաքական ոլորտում կարողացաւ թաքնուած ուժերի մասնակցութեամբ ընտրուել վարչապետ (kanzler), որ մեկնակէտը եղաւ աշխարհով մէկ սփռուած չարիքի՝ միլիոնաւոր զոհեր, աւերակ դարձած երկրներ: «Կենսական տարածք» փնտռելու պատրուակով ասպատակեց կենտրոնական Եւրոպան եւ Ֆրանսիայի հիւսիսային կէտը եւ Բաքուի նաւթին տիրանալու նպատակով, որոշեց յարձակուել Ռուսաստանի վրայ նկատի չառնելով նրա հետ խաղաղ դրացիութեան դաշինք կնքած լինելու փաստը, որ եղաւ իր կործանման որոշիչ քայլը:

Ի՞նչ է կատարւում այսօր երկրագնդի վրայ: Տիրում է ամենուրեք նոյն պատերազմելու մոլուցքը, որի հիմնական դերակատարն է ԱՄՆ ՆԱՏՕ-ի մասնակցութեամբ եւ ձեռամբ, որոշ երկրների մասնակցութեամբ, երբեմն Իսրայէլի, քանի որ վերջինս մութ ուժերի ջանքերով տիրացաւ միջուկային զենքին եւ իրաւունք է համարում սանձարձակ յոխորտանքի:

1945-ի մեծ պատերազմի աւարտին ԱՄՆ զինամթերքի արտադրութիւնը այնքան էր զարգացել, որ անհրաժեշտ էր այդ հսկայական «բիզնէսը» փրկելու եւ իրացնելու համար նոր միջոցներ գտնել, իմա՝ Բախումների նոր օջախներ ստեղծել եւ թերեւս այդ տրամաբանութեան հիմքով էր, որ տեղի ունեցան Ֆորմոզայի, Վիետնամի, Կամբոջայի, Ադվանստանի, Իրաքի եւ այլոց աւերիչ քայլերը տասնեակ հազարաւոր ոչ ոքի չանհանգստացնող զոհերով, չմոռանանք մեր 44-օրեայ դժոխքը եւ մօտ հարիւր քսան հազար արցախցիների արտագաղթը պապենական իրանց օրրանից:

Արդեօք նոյն տրամաբանութեան շարունակութիւնը չէ՞ն արդի բախումները Ուկրաինայում, Սիրիայում ու Լիբանանում, իսկ Գազայի անվերջանալի դժոխքը դեռ որքան տեսելը ոչ ոքի է յայտնի: Արեւմուտքի Զելենսկուն տրամադրած միլիարդաւոր դոլարները համազօր չէ՞ ջուրը նետելուն, երբ անօթի եւ բուժում չունեցողների թիւը աճում է ամէն օր ի սփիւռս աշխարհի:

Ժամանակն է միջազգային հանրութիւնից ակնկալել աւելի լուրջ դիրքորոշում եւ հաւկուր լինելուց զերծ մնալ, երբ խնդիրը միւսների լինել չլինելուն է վերաբերում:

13-11-2024

Ռուբեն Յովակիմեան

«ՆՈՐ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔ»Ի ՍՏԵՂԾՄԱՆ ՍԿԻՋԲԸ ՍՈՒՐԻՈՑ ԱՍԱՏԻ ԱՆԿՄԱՄԲ

Յարութիւն Իսկահատեան – Պէյրութ



Իրանի եւ Սուրիոյ նեցակցութեամբ, Եմէնի եւ Իրաքի զինեալ ուժերու օժանդակութեամբ, իբրեւ Կազայի պաղեստինցիներու նեցուկ փութալով, Իսրայէլի դէմ Լիբանանեան Իսլամական Դիմադրութեան- Հզպալլայի պայքարը անհամեմատ յաջողութիւն եւ յառաջացում արձանագրած էր մինչեւ այն ատեն, երբ անգլիական ու ամերիկեան արհեստագիտական օգնութիւնը փութաց Իսրայէլի, որ յաջողեցաւ Լիբանանեան Իսլամական Դիմադրութեան մօտ 4000 անդամներու «փէյճըր»ներու եւ «ուոքի թոքի»ի էլէքթրոնիք կապի գործիքները ականահարել եւ կոտորները կամ կիսահաշմանդամ դարձնել եւ կամ լրիւ անդամալուծել:

Երբ Հզպալլա շումած կը փորձէր իր վերքերը դարմանել, յանկարծ Իսրայէլ կրկին արեւմտեան օգնութեամբ կարողացաւ միջազգայնօրէն արգիլուած զէնքերով սպաննել անոր ղեկավարներէն շատեր եւ վերջապէս կազմակերպութեան ղեկավարը՝ Հասան Նասրալլան: Սակայն եւ այնպէս Դիմադրութիւնը կրկին իր վերքերը դարմանեց եւ սաստիկ պայքար տանելով Իսրայէլեան բանակին դէմ, ստիպեց զայն ստորագրելու զինադադար մը, որովհետեւ տարիէ մը ի վեր իսրայէլեան բանակը այլեւս շատ յոգնած էր եւ զինուորները յուսալքուած: Այս զինադադարէն ետք արեւմտեան թոյլտուութեամբ Իսրայէլ հարիւրէ աւելի խախտումներ կատարեց՝ լիբանանցի քաղաքացիներու սպանութիւնն ու քանդումի արարքները շարունակելով:

Նախ քան վերոյիշեալ իսրայէլեան հատու հարուածները, Հզպալլա այնքա՛ն մեծ յաջողութիւններ նուաճած էր, որ Իսրայէլեան Պետութեան գոյութեան կը սպառնար, ինչ որ Անկլօ-Սիոնիզմը իր ծրագիրներուն իրականացման դիմաց մեծ խոչընդոտ կը նկատէր: Վերջինիս հիմնական նպատակը իրագործել է մեծ թիւով մարդկային հոգիներու կորուստը եւ Մեծն Իսրայէլի ստեղծումը, ապա աշխարհի գրաւումը: Ան միշտ կը ձգտի իրար դէմ հանել



ուժեր եւ անոնց միջեւ նենգաբար «հաւասարակշռութիւն» պահպանել՝ անոնց մաշեցնելու գործընթացը ապահովելու համար:

Այս բոլորէն ետք Անկլօ-Սիռնիզմը կը տեսնէր, թէ վերջերս հաստատուած զինադադարով Հրզպալլա կարճ ժամանակի ընթացքին պիտի կարողանայ իր նախկին ուժը վերագտնել եւ կրկին Իսրայէլի Պետութեան գոյութեան սպառնալիք դառնալ: Այս անգամ ան գործի լծեց իր տարբեր լծակները՝ տկարացնելու Իրանն ու Ասասի Սուրիան, այս միջոցով կասեցնելու համար Հզպալլայի հասնող զենքերու հոսքը Իրանէն Լիբանան, անցնելով իրաքեան եւ սուրիական հողերէն:

Այս դաւադիր գործը սկսաւ կատարել առերես իբր թէ հակառակորդ, սակայն իրականին մէջ Իսրայէլի հաւատարիմ գործակալ Էրտողանի Թուրքիան, Սուրիոյ հիւսիսային Իսլիպ նահանգին մէջ հաւաքուած ծայրայեղական զինեալ խմբաւորումները յարձակումի մղելով նախ Հալէպի վրայ եւ ապա դէպի հարաւ մինչեւ Դամասկոս: Այս յարձակումներուն դիմաց Սուրիոյ զինեալ ուժերը, այնտեղ գտնուող իրանեան եւ ռուսական ուժերը գրեթէ ձեռնաձուլ մնացին: Ասոր պատճառը կը վերագրուի այն իրողութեան, թէ վերէն՝ Անկլօ-Սիռնիզմէն եղած տնօրինումով, Ռուսիա, Իրան եւ Թուրքիա իրար միջեւ բաժնած են Սուրիոյ տարածքը: Այս հրամանը մեզի կը յիշեցնէ Հայաստանի Հանրապետութեան նախկին նախագահ Սերժ Սարգսեանի ստացած հրամանն ու յայտարարութիւնը, թէ «Ես սխալած էի եւ Նիկոլ Փաշինեանը ճիշդ է» ու անմիջապէս իշխանութիւնը լքելը:

Այդ անյայտ վերերէն այնպէս դասաւորուած էր որ Սուրիոյ մէջ անկարելի դառնար առանց արինահեղութեան յեղաշրջում: Սակայն նկատի ունենալով Ասասի առանց զինեալ դիմադրութեան արագ հեռացումը, քիչ եղաւ մեռեալներու թիւը այս դէպքերու ընթացքին եւ ընդդիմադիր զինեալ ուժերը արագ տիրացան իշխանութեան: Այլ կարելոր ազդակ մըն ալ այն է, որ ժամանակի ընթացքին իբրեւ արդիւնք զինեալ բախումներու եւ ի նպաստ Իսրայէլի ու Արեւմուտքի, ժողովրդագրական (տեմոկրաֆիք) փոփոխութիւններ տեղի ունեցան եւ իրաքանչիւր համայնք մէկտեղ ամփոփուեցաւ, առ ի պատրաստութիւն յետագային ստեղծուելիք հաւանական դաշնակցային անջատ շրջաններու կամ երկիրներու:

Սուրիոյ իսլամականներու այս յեղաշրջման առաջին գործերէն արձանագրուեցան նոր (երկրի նախկին) դրօշակիին զետեղումը պետական շէնքերուն վրայ, Ասասի նկարներու եւ արձաններու քանդում, բանտերու եւ կալանավայրերու արգելափակեալներու ազատ արձակում (որոնց մեծամասնութիւնը իրենց կադմնակից են), ոգելից ըմպելիներու մթերանոցներու փճացում, կնոջական զգեստաւորումներու նախնական յատկորոշում (գլխու եւ մարմնի ծածկոյթ) եւ այլն:

Այս միջոցին Իրան իր բացայայտ ներկայութիւնը չէզոքացուց Սուրիոյ տարածքին, իսկ Ռուսիա իր զինուորական ներկայութիւնը ամփոփեց Լաթաքիոյ մօտ Հըմէյմիմի ռազմաօդային եւ Թարթուսի ռազմածովային խարիսխներուն մէջ: Իսլամականներու ուժերը իրենց յարձակումները շարունակեցին դէպի հիւսիս արեւելքի քրտական շրջանները, թրքական անօդաչու սարքերու այդ շրջանները ռմբակոծելուն առընթեր: Իսկ Իսրայէլ օգտուելով ներկայ վիճակէն Կոլանի մէջ յաւելեալ հողեր գրաւեց՝ մօտաւորապէս երեք քլմ մտնելով սուրիական կողմի չէզոք հողերէն ներս եւ օդային ուժերով ռմբակոծեց ու փճացուց Սուրիոյ տարածքին գտնուող կարելոր ռազմական խարիսխներ:



Այս բոլորէն երկու օր ետք, Իսրայէլի վարչապետ Բենիամին Նաթանեահու ընդունելով դէպքերու եւ զարգացումներու հեղինակութիւնը, 9 Դեկտեմբեր 2024-ին յայտարարեց. «Ըսինք թէ Միջին Արեւելքի դիմագիծը պիտի փոխենք ու այս է որ կը կատարուի այժմ Սուրիոյ տարածքին»: Այս յայտարարութիւնը պաշտօնականացնել է «Նոր Միջին Արեւելք» ստեղծելու Անկլօ-Սիոնական հին ծրագիրին գործադրման դրուիլը:

Իսլամական ուժերու Սուրիոյ մէջ իշխանութեան գլուխ անցնելով, թէեւ առ այժմ հաւաստիացումներ կ'ըլլան որ բոլորը հաւասար են օրէնքի առաջ եւ բոլոր քաղաքացիներուն իրաւունքները պիտի յարգուին, սակայն զանազան շրջաններու քրիստոնէաներուն եւ հայ բնակիչներուն համար հետագայի աննախատեսելի դէպքերու զարգացումներ կրնան վտանգ սպառնալ ինչպէս Հալէպի, Քամիշլիի, Քեսապի, Լաթաքիոյ եւ նոյնիսկ Լիբանան՝ Այնճարի, Զահլէի եւ այլ շրջաններու մէջ:

Տակաւին իսկական պատկերը յստակ չէ շրջանին մէջ եւ դէպքերը արագ կ'ընթանան: Մպասելով գալիք օրերու զարգացումներուն, կը փափաքինք յստակացնել կարելոր կէտ մը, թէ Ամենակարող Աստուծոյն շնորհած կամքի ազատութիւնը բարիքներու մէջ, վերի խաւերէն չարաշահող ու չարիքներ գործող եւ մահասփիւռ սատանայական հրամաններ արձակող ուժերը օր մը անպայման հաշի պիտի տան իրենցմէ շատ աւելի վեր ու բարձրագոյն Վերին Սուրբ Պետութեան Արդարադատութեան, որ անսկիզբ, անհասանելի եւ անմահ է:

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈՒՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ



ԱՅԲՈՒԲԵՆԻԴ

Մէ՛րս, յո՛յզս այբուբենի՛ դ
Լեզու ելաւ ու բառ դարձաւ,
Հիւսեց տողեր արեւածին
Ու յորդեցաւ զերթ զե՛տ վարար...

Մպիտակ թուղթին՝ այբ-բեն-գիմդ
Հնչի՛ւն-հնչի՛ւն տաղեր դարձան
Ու երգեցին վարդ տառերդ,
Անոնց լոյսը յաւերժական...

Եւ բա՛ռ առ բա՛ռ ու տո՛ղ առ տո՛ղ
Մէրս շատցաւ սիրագորով,
Անհատնո՛ւմ է սէր-ակունքս,
Անսպա՛ռ է սիրոյս հեքը...

Ափերուն մէջ հոգւոյս, սրտիս
Դուն կը հոսիս ու չես հատնիք,
Զիս կը լեցնես անհուն սիրով,
Մէն մի տառիդ գուրգուրանքով...

Հոսքդ կու գայ բիր դարերէն
Եւ պիտ՛ երթայ բիր դարերուն,
Քեզմով ազգ ենք յաւերժահեւ,



Քեզ' հետ քալենք բիւր դարերուն...

2/11/2024

.....

ԲԱՌԸ ԸԼԼԱՐ

Թող բառն ըլլար «եղիցի լոյս»

Ու ճառագէր մթան մէջ լոյս,

Ճեղքէր գորշը խաւարամած

Ու ճաճանջէր լուսավարար...

Թող բառն ըլլար խաղաղարար

Հոգիներուն մրրկայոյզ,

Գգուէր զանոնք սիւքին նման

Սէր-քնքշանքովն իր թաթաւուն...

Թող բառն հնչէր աղօթքի պէս,

Փարատէր մեզը սիրտերէն,

Միւռոնած ան կաթեցներ

Լո՛յս, բարութի՛ւն երկնապարգէ...

Թող բառն հնչէր օրհնութեան պէս,

Հրաշագործէր Արարչին պէս,

Բոլոր չարեաց դէմ ան ըլլար

Բարեաց անձրեւ սիրավարար:

Բառը ըլլար կամա՛ր, ծիածա՛ն,

Սիրտէ ի սիրտ ու մարդէ մարդ,

Նարօտի պէս ան պսակէր

Սիրտերն անջատ, տառապահեւ:

23/11/2021

.....

ՀՈԳ ՉԷ ԹԷ...

Ժամանակի սլաքը դառնար,

Գարունս վառ պահ մը ետ գար,

Բոյր թոյրերով վարդաշուշան

Արբենայի կրկին անգամ:

Մեղմ զեփիւռը համբոյր մը տար,

Զիս կախարդէր վերջին անգամ,

Իր թելերուն մէջ զիս օրրէր,

Տանէր դէպ' լոյս հորիզոններ:

Արեգակներ դեռ հայեացքիս,

Հիւսէի ես նոր անուրջներ,

Մայրամուտը հեռու ըլլար,

Կէսօրուան տապն զիս հրկիզէր:



Թող բռնկէր սիրտս յուրթի
Հուր ու կրակով մը սրբագին,
Հոգ չէ թէ այդ բռնկումէն
Մնային սոսկ մոխի՝րի հետքեր...
5/9/2021

.....

ՏԷ՛Ր, ՉՄՈԼՈՐԻ՛Մ

Տէ՛ր, չմոլորի՛ մ անուշ խօսքերու ծակ ծուղակին մէջ,
Փայլփլուն ճառերու ես-ս փայփայող կոյր շղթային մէջ,
Շքեղազարդ լոյս փողոցներու լապիրիինթին մէջ,
Բիւր դիմակներու սուտ ժպիտներու կեղծ շողերուն մէջ...

Տէ՛ր, զգաստ մնամ, արթնամիտ ու սթափ, հոգիով զգօն,
Թմբիւրը դարու զիս չօրօրէ իր մեղկ նեննիմներով
Եւ խի՛ դճս, խի՛ դճս մնա՛յ անարատ, անդրդուելի,
Թող դողանջէ յար քուն թէ արթուն եւ անլռելի:

Չեմ ծախած երբե՛ք իմ հոգին անեղծ կեղծ աստուածներուն,
Որ վխտացեր են ճամբուս լպրծուն ոլորաններուն,
Չոկեր եմ ճիշդը, արդարը, բարին՝ զարկովը սրտիս,
Որ տըրոփեր է մերթ անչափ հանդարտ, մերթ տագնապալի...

Գիտեմ ուրի՛շ է մեր դարը հիմա, անողոք անչափ,
Խառնուեր են իրար ճիշդն ու սխալը, կեղծն ու անկեղծը:
Տո՛ւր ինձ ճանաչել լոյսովդ արդար ու պայծառափայլ
Զիմաստութիւնդ եւ իմաստնանալ լոյս խրատներովդ:
22/10/2017

.....

ԱԶԳ ԻՄ ՓԱՌԱՊԱՆԾ

Բիւր դարերէդ ամբարած տոկունութեան ոյժ տուր ինձ,
Որով զրահուած ու զինուած քալեմ խրո՛խտ ու արի՛
Փուշերուն մէջ, տատասկին ամենօրեայ տքնանքիս,
Զառիվերը բարձրանամ դէպի լոյսը ճշմարտիին...

Տառապանքէդ դարաւոր՝ արարումի կայծ վառած,
Ոգեղէն հուր բռնկէ երակներուս մէջ յոգնած,
Հրավառի՛ մ ցաւերէս, երգե՛ր հիւսեմ վերքերէս
Ու երգերէս սրարբած արեւանա՛մ հրակէզ...

Հարուածներէն բիւրաւոր, ցասումներէդ միշտ արդար
Դեռ կը շողայ մաքրափայլ խղճիդ խորանը անպիղծ,
Ուրկէ կու գամ քաղելու ցո՛ւլք մը անբիծ բարութեան,
Որ աշխարհիս մէջ դաժան մնամ շիտակ ու ազնիւ...



Լեռներէդ վեր կուտակուած ծուէ՛ն-ծուէ՛ն ամպերէդ
Խոհի, յոյզի պաշարներ կ'ուզեմ քաղել ես յուրթի,
Քուրայիս մէջ անոնցմէ երկնէլ տողեր լուսածին,
Անձրեւէլ գերթ քալասան ու վերքերուդ ամոքիչ:

Լեռներուդ պէս երկնապլաց անմահ Լոյսին խուզարկու,
Կ'ուզեմ ելլե լ բարձրանա լ սուտ ու կեղծի մշուշէն,
Դէպի արեւը երթալ, Լոյսի աղբիւրն անմատոյց,
Անյագօրէն ըմպելով ճաճանչներն իր բոցահէ՛ւ
Ու դեռ մնալ ծարաւի, ու դեռ այրիլ լուսատե՛նդ...

7/5/2023

.....

ՈՐՊԷՍ ՏՕՆԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ
Թող բիւր բերք, բարիք հասնի բոլորին,
Գանձեր հրաշալի, նուէրներ անգին,
Մեղաններն առատ ուտեստով յորդին,
Թող բաժակները զինիով լեցուին,
Մարդիկ խնդութեամբ լենան, արբենան,
Անցաւ հրճուանքով թող ուրախանան...

Ինձ լոկ օճախս մնա՛յ կաթոզին,
Լոյսով, բարութեամբ շնչէ սրտագին,
Օրհնութիւն տեղայ ինչպէս մանանա,
Աղօթքի բոյրով թող ցաթէ կաթ-կաթ,
Դառնայ լուսաշող ժպիտ ու բերկրանք,
Զորս քաշխեմ ինչպէս հանապագորդ հաց...

Ու մեր հայրենին տոկայ, ամրանայ,
Վահագնեան կամքով թող հզօրանայ,
Իր երդիքներէն թող վեր բարձրանան
Ծուխը ծխանի, ճիչը հայ մանկանց,
Մեր երգերը վառ ուր փառքը Հայկեան
Նոր լուսաբացի երաշխիք դառնայ:
14/12/2024

ԿԵԱՆՔԸ՝ ՈՒԹՍՈՒՆԷՆ ՎԱՐ ԵՒ ՎԵՐ



Այդպէս կըլլայ: Այդ օր, մինչեւ ուշ երեկոյ, երկար ժամեր ուտելէ, խմելէ, խօսելէ, երգելէ, կենացներ «բացագանչելէ» ու մաղթանքներ փոխանակելէ ետք, երբ վերջապէս տարեդարձիդ առթիւ տանդ մէջ խմբուած հարազատներդ ու հիւրերդ ճամբելէ ետք, հակառակ անոր որ երեւոյթը շատ գեղեցիկ ալ էր, բայց եւ այնպէս, վերջապէս առանձնանալու կարիքը կը զգաս: Աւելի ճիշդ, մտքիդ խաղաղութիւնը կ'ուզես փնտռել, թերեւս ինքզինքդ գտնես:

Թէեւ օրերդ կապուած էին առօրեայ զանազան մտահոգութիւններուն, բայց այդ օր, տարեդարձի անուան տակ այդ յիշատակելի երեկոյեան, երբ քու մասիդ խօսիլն ու արտայայտուիլը ծանր եւ քրտինքոտ ալ էր, իրապէս որ ինքզինքդ մոռցած էիր: Ու հիմա, սենեակիդ մէջ, մինակդ, աթոռիդ վրայ ընկողմանած, վարանումի եւ դիմադրութեան այդ պահուն, ճշմարտութիւնը փնտռող պարզ աչքերով, անկեղծ, նոյնքան արդար, կը փորձես վերաքաղ մը ընել կամ աւելի ճիշդ անձդ փնտռել:

Անշշուկ եւ լուռ փնտռտուք: Կորսուած ժամերու երջանկութիւնը որոնող, յոգնած եւ յուսահատ մարդու նման: Նորէն հայու հոգիդ պայքարի մէջ է: Կը զգաս: Լաւատեղեակ ես, թէ յիշողութիւնը մարդուս կու տայ հոգեկան բաւարարութիւնն ալ: Ու յանկարծ դեղնած հին էջերու նման մտքիդ պաստառին վրայ պատկերներ, գունաւոր եւ անգոյն տեսիլքներ կը յայտնուին, մշուշապատ երազներու մէջէն: Կարծես պարզապէս երազի թելեր առած տեսիլքներու յաճախանք մը. որմէ զանազան «պատկերներ» կ'անձրեւեն հոգիիդ մէջ: Եւ ինքնաբերաբար տրամադրութիւնդ քեզ տարբեր ուղիներ կ'առաջնորդէ, գրուած եւ անգիր երգի բառերուն նման: Եզակի եւ քիչ մըն ալ տարօրինակ: Ու սրտիդ վրայ կը ծփայ յիշատակներու ովկիանոսը, գրաւելով մտքիդ եւ սրտիդ հորիզոնները, որոնցմով կ'ուզես չափել ապրած կեանքիդ բոլոր խորհրդաւոր ցուքերը:

Ահա քեզի հրամցուածը: Կարծես երազն է, որ բոյն դրած է մտքիդ մէջ: Վայրկեանին, անկեղծ մտածողի լարերով, չես յիշեր, թէ ինչպէ՞ս մինչեւ հո՞ս, այս տարիքին հասած ես: Դիմագիծ եւ ինքնութիւն տուող դէմքերը կը յիշես ինքնատիպ մտածումներով: Կ'ուզես վերագնահատութեան ենթարկել մտածումներդ, օրերդ, վերջապէս կեանքդ: Ու երկար կը յիշես: Դիմացդ կը բացուի հին եւ սակայն գեղեցիկ անցեալդ, իր զանազան մանրամասնութիւններով: Մտովի կը վերլուծես: Երկար տարիներու «այսչա փ» ծուր կամ շիտակ, ճամբայ կտրած ես: Բարդ եւ երկչոտ զգացում: Գլուխդ ձախ-աջ կը տանիս: Կը զգաս, որ ուղեղդ անտէր հայելի մը դարձած է, որուն մէջէն կը դիտես կեանքդ, շրջապատդ եւ բնութիւնը: Ու կը տեսնես, որ կեանք ըսուածը, կարճ կամ երկար ճամբորդութիւն մըն է, յաճախ խնդուքով, երբեմն լացով եւ երբեմն ալ տաք ու սառ զգացումներով, բայց միշտ



ճակատագրի թելերէն կախուած, երբեմն ալ անախորժ քեզի «հրամցուած» եւ «հիւրասիրուած» իր զգուշաւոր խաղերուն հետ:

Անոր համար օրերուդ ժամերը յաճախ կորսնցուցած են իրենց շրջագիծը: Իսկ հիմա յիշատակն է, որ կապրեցնէ քեզ: Կուզես ապրիլ քաղցրութիւնը մօտիկ եւ հեռու այդ հիներուդ: Կուզես ապրած կեանքդ «չափել»: Նոյնիսկ երբեմն ուրախութիւնդ մնացած՝ իր կէս ճամբան: Երբեմն զիտակցութիւնդ ալ մշուշ բռնած: Բայց միտքերդ երբեք չեն հրաժարած կանգ առնել:

Բացայայտ գնայլանք: Միշտ հնազանդ հետեւած ես կեանքի ընթացքին եւ խաղերուն, եւ փորձած՝ ապրումիդ ջերմութիւնը չկորսնցնել: Յարմարած ես ժամանակակից կեանքի պայմաններուն, օրէնքներուն պահանջներուն: Յաճախ ինքնահաճոյ մօտեցում ունեցած, ուր բանականութիւնդ կանգ առած: Փորձած ես երանելի օրերդ առօրեայիդ շղթաներէն կապել: Շատ յաճախ՝ ձախողած:

Աշխարհը, ամէն առտու քեզի բացուած էր համակարգիչիդ բառերով: Դո՛ւն, արմատներէն մինչեւ յետին տերեւը հայ մը, ամէն բանէ առաջ եւ վերջ: Բոլորին այս մասին խօսած, պատմած եւ բացատրած: Իբրեւ թուղթի եւ գրիչի մոլի, անձո՛ւ գիրքերը եղած են կեանքիդ յենարանը: Ու նկարագրիդ դրօշակը բարձր պահելով, միշտ ուզած ես յոյսեր ցանել բառերուդ եւ տողերուդ մէջ: Անոր համար ապրած ես ազնիւ տառապանքը բառերուդ:

Աշխարհի օրերու ցուրտին մէջ, փնտռած ես ջերմութիւնը ժամերուդ: Հարցերը, ազգիդ եւ հայութեանդ, յաճախ ստիպած են քեզի, որ «երգդ» մոռնաս: Երբեմն վախը գողցած է գիշերներուդ լռութիւնը: Շատեր, այս մասին, շատ բաներ թելադրած են: Բայց չես համոզուած: Բոլոր երգերդ նուիրած ես հայրենի հողին, Մեարոպեան տեսիլքին եւ շունչին, նոր սերունդին արեւուն, ծննդավայրիդ, հայրենիքիդ եւ Արարատին:

Բայց ի՛նչ օգուտ...: Կեանքի նման օրերէն, նաեւ հինցած են օրերդ ալ: Իբրեւ այս բոլորին արդիւնք, աղուոր երազներդ ալ խաւարած: Յաճախ ժամերուդ պատուհանէն լուռ եւ անխօս շուրջդ դիտած ես, եւ ինքզինքդ համոզած, թէ լռութեան համար ականջ պէտք չկար: Միշտ շրթներուդ վրայ նստած պահած ես աղօթքդ ու բարի մաղթանքներդ: Ապա, այս բոլորէն ետք, խոր երազէ մը արթնցողի նման, կորոշես իջնել իրական աշխարհ: Իրական կեանք: Ժպիտ մը գծելով դէմքիդ վրայ, կը մտածես դուրս գալ սենեակէդ: Արդէն, ձեռով մը ինքզինքդ փոխուած կը զգաս:

Քեզի համար ցարդ ապրած կեանքդ, յուշերդ, սերերդ եւ տագնապներդ զարդ եւ հպարտանք ըլլալէ աւելի, հոգեկան բովանդակութեամբ ալ լեցուն տեսած էիր: Կորոշես սենեակէն դուրս գալ, երեսիդ վրայ նոր յոյսի լոյսով մը օծուն: Ճիշդ այդ պահուն ահա, իբրեւ պարզ մարդ, հեռու քարացած մտայնութիւններէ, կեանքիդ նոր էջ մը բացած կը զգաս: Ու գրեթէ երջանիկ ես: Եւ վերջապէս, սենեակիդ դուռը բանալով, իբրեւ նոր յոյսին բացուող միտք, ապրելուն երջանութիւնը կը զգաս:

ԳԷՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ

Ուրբաթ, Նոյեմբեր 22, 2024

ԵՐԿՈՒ ՌՈՒԲԷՆՆԵՐ՝

ԶԱՐԴԱՐԵԱՆ ԵՒ ՌՐԲԵՐԵԱՆ - 150




Ռուբէն Զարդարեան

Հայերէնի մեր դասագիրքերուն մէջ տեղ գտած էին այս երկու անուններն ալ՝ Ռուբէն Զարդարեան եւ Ռուբէն Որբերեան: Երկուքն ալ գաւառացի:

Երկու Ռուբէններէն առաջինը, սակայն, կը թուէր աւելի նշանաւոր ըլլալ, որովհետեւ... նահատակ էր, Մեծ Եղեռնի զոհերէն մին: Միւսը այդ լուսապսակին արժանացած չէր...: Չեմ գիտեր ինչո՞ւ՝ ես այս Ռուբէնները միշտ իրարու հետ կը տեսնէի իմ մտապատկերին մէջ: Տարիներ ետք, երբ որոշ պրպտումներ կատարեցի անոնց կենսագրութեան շուրջ՝ ի յայտ եկաւ որ ի՛րապէս բարեկամներ ու սրտակիցներ եղեր են այս երկուքը...:

Այսօր կ'անդրադառնամ, որ երկու Ռուբէններուն ծննդեան 150-ամեակն է արդէն (1874-2024): Իր վաստակին համեստ տարողութեան բերումով՝ Որբերեանը գրեթէ մոռցուած մըն է շատո՞նց. իսկ Զարդարեանը...: Այսօր մեր դպրոցականներն իսկ կը դժուարանան յստակ բառերով կարճ բնորոշում մը կատարելու իր մասին: Նոյնիսկ չեն ճանչնար զինք իր դիմանկարով: Մինչդեռ, քանի մը տասնամեակ առաջ, ապրիլեան ոգեկոչումներու ընթացքին մենք անպայման կը տեսնէինք Զարդարեանի լուսանկարը ու կը ճանչնայինք զայն: Կրնայինք զատորոշել նահատակ Ռուբէն Զարդարեանը նահատակ Ռուբէն Սեւակէն...:

*



Մեզմէ շատերուն համար Զարդարեանի գրականութիւնը կը նոյնանայ անոր «Զարնուած որսորդը» հեքիաթանման պատմուածքին հետ: Յիշեցէ՛ք ասոր ատաջին տողերը.«Անկոխ ուղիներէ, օձի ճամբաներէ՝ քարերուն վրայէն այծեամ մը կը փախչի. անցած տեղերէն կարմիր արիւն կաթկթած է ու քարերը դեռ թաց են...»:

Զարդարեան գաւառէն կու գար ու ընդհանրապէս ալ ծառայեց գաւառական գրականութեան: Մանկուց հասակ առաւ ու ապրեցաւ Խարբերդի մէջ, վայելելով իր գրագետ ուսուցիչին՝ Թլկատինցիի հոգատարութիւնն ու խրախոյսը: Ինք ալ իր կարգին՝ շուրջ տասը տարի զբաղեցաւ ուսուցչութեամբ, այնուհետեւ, պայմաններու պարտադրանքով, գրեթէ գերի դառնալու համար լրագրական ասպարէզին: Իր հրապարակագրական տասնամեայ վաստակը, որ կ'երկարի 1906-1915, կ'եղրոնացաւ առաւելաբար Ֆիլիպէի (Պուլկարիա) «Ռազմիկ» եօթեային ու Պոլսոյ «Ազատամարտ» օրաթերթին շուրջ, ուր Զարդարեան օրն ի բուն հոգի մաշեցուց ազգը յուզող հարցերուն լուծումներ գտնելու տուայտանքով...:

Լրագրութիւնն ու մամուլոյ սպասաւորութիւնը՝ իրենց անօրեայ հեւքով, անկասկած, վնասեցին Զարդարեանի գրողական ճիգին ու բերքին: Գրագետը, որ արդէն չափազանց բժախնդիր էր իր գեղարուեստական ստեղծագործութիւններուն նկատմամբ, արտադրանքի լայն թափ չունեցաւ: «Յայգալոյս»-ը մնաց իր արձակ գործերուն միակ հատորը (1910): Կ'արժէր, որ այլաբանական շղարշով ծածկուած իր պատմուածքներն ու հեքիաթները մատուցուէին, վերլուծուէին այսօր ալ: Չենք մոռնար անշուշտ «Մեղրագետ» կոչուող հայերէնի իր դասագիրքերն ալ, որոնք հայկական դպրոցներու մէջ կը գործածուէին Եղեռնէն առաջ...:

Զարդարեան ձերբակալուեցաւ, արքորուեցաւ ու սպանուեցաւ 1915-ին, մտաւորականներու փաղանգին հետ: Իր չորս մանչերէն մին՝ Հրաչ, հետագային, քալեց հօր ուղիէն ու դարձաւ Ֆրանսահայ արձակի յայտնի անուններէն մին:

Միւս Ռուբէնը՝ Որբերեանը, մեր գրականութեան մէջ անմահացաւ միակ բանաստեղծութեամբ մը, որ կը կոչուէր «Գիւղիս ճամբան»: Հայկական հին ու նոր գրեթէ բոլոր դասագիրքերուն մէջ տեղ գտաւ ատիկա, իբրեւ դասական քերթուածի նմոյշ մը: Յիշեցէ՛ք առաջին տունը.



Կեանքի նաւակն հետք չթողո՛ւց իր ետին.
Մոռացումը առաւ ինձմէ՛ ամէն բան.
Հին երազներս ամպերու պէս կ'անհետին,
Յիշատակն ալ կ'անցնի երգի՛ մը նման:

Որբերեան Մալաթիայէն էր: Յաճախած էր Խարբերդի նշանաւոր Եփրատ Գուլէճը՝ հմտանալով անգլերէն լեզուին: Լեզուական այս առաւելութիւնը մղած էր զինք բնագրէն կարդալու անգլիական դասական գրականութիւնը, որուն բոլոր դէմքերը քաջածանօթ էին իրեն: Ժամանակակիցն ու մտերիմն էր Ռուբէն Զարդարեանի:

Գաւառի ճնշումներէն հեռանալու դիտաւորութեամբ՝ Որբերեան առջի դարու 90-ականներուն անցաւ Զմիւռնիա, ուր մնաց մինչեւ 1904՝ զբաղելով առետուրով, ի վերջոյ շունչը առնելու համար փրփիկեան ցամաքամասի Ճիպուրի քաղաքը (Ֆրանսական Սումալի, Ատէնի ծոցի ափին), ուր, գրեթէ մեկուսացած, շարունակեց երագել իր ծննդավայրը, հայրենի երդիքը, մանկութեան տարիներու կորսուած գեղեցկութիւնները՝ տխրաթախիծ ապրումներով եւ յաճախակի յոռետեսութեամբ: Ամբողջ 16 տարի մնաց այնտեղ ու իր գրական գործերուն մեծ մասը գրեց հո՛ն: «Ովասիս»-ը իր երեք գիրքերուն լաւագոյնը կը նկատուի, նաեւ ամէնէն ծաւալունը (Փարիզ, 1920, շուրջ 300 էջ, արձակ եւ չափածոյ): Գրագէտ Մինաս Թէօլեօլեան իր «Դար մը գրականութիւն» հատորին մէջ նկատել կու տայ որ «Որբերեանի թախիծը վանող չէ, որովհետեւ թելադրուած է ընդհանրական կարօտանքէ մը, ու մեզմէ իւրաքանչիւրին մէջ ոտքի կը հանէ հին յուշեր, քաղցր անցեալ մը, ցանկալի օրեր»:

Որբերեան մահացաւ Փարիզ, 3 Յունուար 1931-ին: Իր կեանքին ու գրական վաստակին մասին առանձին մենագրութիւն մը ունի հայրենի գրականագէտ Վազգէն Գաբրիէլեան:
ԼԵՒՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ

ԼԵԶՈՒՆ ԵՒ ԱՅԼ ՀԱՐՑԵՐ

Մարուշ Երամեան



Ամէն անգամ որ առիթը կը ներկայանայ, այս հարցումը կու տամ մտաւորականներու՝ բարեկամներ անոնք, կամ այցելու դասախօսներ, որոնց մեծամասնութիւնը սակայն կարծես տակաւին մտածած իսկ չէ անոր մասին. թերեւս անոնք կարիքը չեն զգացած մտածելու, կամ անհրաժեշտ չէ իրենց համար ասիկա:

Բոլորն ալ սակայն հարցումը հետաքրքրական կը գտնեն (թէեւ աւելի շատ էութեանական հարցում է, քան՝ հետաքրքրական) եւ կը փորձեն պատասխանել անոր:

Ի՞նչ է հարցումը:

Եթէ Սփիւռքի նոր սերունդը վերջնականապէս կորսնցնէ լեզուն՝ հայերէնը, ինչո՞վ պիտի արտայայտէ իր ինքնութիւնը, իր «հայ»-ութիւնը, ի՞նչն է որ պիտի արտայայտէ իր ինքնութիւնը:

Առաջինը՝ հիւր դասախօս մը, երկար մտածելէ ետք ըսաւ, թէ role model-ներու մէջ պէտք է փնտռել ատիկա եւ որպէս օրինակ տուաւ Քիմ Քարտաշեանի անունը:

Կ'ընդունինք որ Ք.Ք.-ը այսօր ծանուցողական լաւ միջոցներէն մէկն է մեզի համար, սակայն կրնա՞յ որպէս տիպար ծառայել: Մտածելու նիւթ է:

Երկրորդը, որուն տուի հարցումը, այսպիսի պատասխաններ տուաւ.

«Մեր ներկայ իրականութեան մէջ լաւ հայ երեւալու _ ոչ ըլլալու _ մարմաջը կայ: Ի վերջոյ սփիւռքահայը կ'ուզէ եւ պատրաստ է լեզուին տէր կանգնելու»:

«Գոյութեան քաշկռտութիւն, եւ կտակ՝ Հայաստան թաղուելու»:

Եւ որպէս լուծում առաջարկեց.

«Լեզուն չարաչար գործածել, խօսիլ եւ գրել ներկայի եւ ապագայի մասին հայերէնով, անցեալը յիշել, բայց ոչ ծամծմել, աւելցնել ուսուցիչներու թիւը եւ յատկացուած գումարները, խօսիլ ու գրել թէ հայը ինչպէ՞ս ապրեցաւ _ ոչ թէ միայն ինչպէս ջարդուեցաւ»:



«Արեւմտահայերէնը պէ՛տք է պահպանուի. պէտք չունիմ ո՛չ պետական որոշումի, ո՛չ ալ կաթողիկոսի կոնդակին: Տէր կանգնիլը մէ ր ճիտին պարտքն է»:

Բայց երբ հարցուցի՝ «Ինչպէ՞ս», պատասխան չտուաւ:

Հասկնալի է, որ այս մտաւորականին համար ալ նիւթը ամբողջովին նոր էր եւ տուեալ պահուն էր միայն որ սկսած էր մտածել անոր մասին: Ըսեմ նաեւ, որ իր լրագրական աշխատանքը օտար լեզուով տանող անհատ մըն է:

Երրորդ մտաւորականը, որ հակառակ իր աշխատանքին, կը շարունակէ հայերէն մտածել եւ արեւմտահայերէն գրել (երկու գիրքի հեղինակ), որուն ամերիկեան մտածողութիւնը կ'օգնէ իրեն հարցին ուղղակիօրէն անդրադառնալու եւ կարելի պատասխան մը տալու, առանց անոր շուրջ դառնալու, հետեւեալը ըսաւ.

«Լեզուն ... այո... արեւմտահայերէնին վիճակը լաւ չէ, թէեւ հիմա իմ գաւակներս կը զգան դրականութիւնը ժամանակին հայերէն սորված ըլլալու _ ե՛ս է որ ամէն օր կը դասաւանդէի գրելն ու կարդալը եւ իրենք մի՛շտ կը դժգոհէին _ թէեւ շատ կարելոր է լեզուն, բայց ... ի՞նչ կը մնայ լեզուն վերջ... Տեղասպանութիւնը ... երբ ամէն Ապրիլ 24-ի բոլոր հայերը անխտիր փողոց կ'իջնեն. Տեղասպանութիւնը», կրկնեց արդէն հաստատօրէն:

Մեր ուրախութիւնը մեծ էր, երբ ԱՄՆ-ի Ներկայացուցիչներու Տան կողմէ Հայոց Տեղասպանութիւնը ընդունելու որոշումը յայտարարուեցաւ (405 թեր եւ 11 դէմ): Հակառակ մեր ընդհանուր գիտովութեան, կարգ մը սթափ մտաւորականներ կը գիտակցին եւ կը նշեն, թէ մեր դատը տակաւին շատ երկար ճամբայ ունի կտրելիք:

«Ճամբայ ելլողը կը հասնի» կ'ըսէ ժողովուրդը: Ո՛ր պիտի մնայ մեր ինքնութիւնը, երբ երջանիկ օր մը ազգով-տակով հասնինք: Եւ՝ ո՛ր պիտի հասնինք արդեօք, գիտե՞նք, մտածե՞ր ենք, բայց մանաւանդ ծրագիր ունի՞նք:

Այսօր մեր երիտասարդները, անոնք, որոնք օտար համալսարաններ կ'երթան, մանաւանդ անոնք, որոնք կուսակցական չեն, որեւէ կուսակցութեան չեն պատկանիր եւ որոնց մտածողութիւնը սահմանափակ չէ, անկեղծօրէն՝ ձանձրացեր են մեր սուգի պատմութիւններէն, եւ կը նեղանան մեր՝ «Մենք տարբեր ենք, մենք մեծ ենք» եւ այլ նման խօսքերէ, որովհետեւ կը տեսնեն մեր այսօրուան վիճակը, ըլլայ Հայաստանի, ըլլայ Սփիւռքի մէջ. մանաւանդ Հայաստանի մէջ, ուր պետութեան գործունէութիւնը ո՛չ մէկ ձեռով կը համապատասխանէ մեր պատկերացումներուն, կարծես կ'աշխատի հակառակ մեր ոգիին:

Ա՛յս է ձեր ըսած մեծ հայր ... կ'ըսեն մեր երիտասարդները եւ անդին կը նային:

Երբ անդին կը նային, օտարին հետ ամուսնութիւնը շատ դիւրին կ'ըլլայ, որուն հետեւանքով եկող սերունդները կը սկսին կամաց-կամաց լուծուիլ:

Այսօր Արտեմ Փաթափութեանէն ետք, արդէն ունինք երկրորդ նոպլեան դափնեկիր մը՝ Տարօն Աճեմօղլուն:



Փաթափութեանին հայրը գրագէտ է՝ Սարգիս Վահագն, իսկ Աճէմօղլուին մայրը՝ քանաստեղծուհի Իրմա Աճէմեան: Կը նշանակէ՞ թէ այսօր բոլոր գրագէտ-գրագիտուհիներն ու քանաստեղծ-քանաստեղծուհիները յոյս կրնան ունենալ, թէ օր մը իրենց զաւակը եւս...

Գրագէտ-գրագիտուհիներուն եւ քանաստեղծ-քանաստեղծուհիներուն համար վստահ եմ որ այս չէ հարցը, այլ այն՝ թէ հայութիւնը այս երկու դափնեկիրներուն կեանքին վրայ ի՞նչ ազդեցութիւն ունեցած է եւ կրնայ տակաւին ունենալ:

Փաթափութեան, հակառակ իր դժուար մականունին, որ անսովոր է նաեւ մեզի՝ հայերուս համար, չէ՛ փոխած իր մականունը, իսկ Աճէմօղլուն, հակառակ իր թրքացուած մականունին, կը շարունակէ որպէս հայ ճանչցուիլ:

Այս դափնեկիրները, իրարմէ մէկ տարի տարբերութեամբ, ամբողջովին նոր երեւոյթ են մեզի համար, մեր ազգին համար, որ ճանչցուեր է որպէս մշակութային, ստեղծագործ ժողովուրդ, վաղուց մտոցած ըլլալով իր դիւանագիտական կարողութիւնները, որոնք օր մը Տիգրան Մեծ հօր Արքան տուեր են մեր եւ համաշխարհային պատմութեան:

Կը նշանակէ՞ թէ որակական փոփոխութեան մը սկսած է ենթարկուիլ մեր ծինը, դէպի գիտութիւն, թէեւ ասիկա սկիզբէն իսկ կար, վկայ մեծ թիւը հայերուն, որոնց կը պարտի աշխարհը իր կարեւորագոյն գիտերէն շատեր, ինչպէս MRI-ի գործիքը կամ գունաւոր հեռատեսիլը, թուելու համար երկուքը միայն: Սակայն զգալի է երիտասարդական հոսքը դէպի գիտութիւն:

Եւ ասիկա լաւ երեւոյթ է անկասկած: Կը մնայ ինքնութեան էութիւնը ճշդել, լեզուէն ետք: <http://www.kantsasar.com/news/52741-2/>

ՕԼԿԱ ԲԱՊԱԼ ՄԱՃԿԱԼԵԱՆ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՄԱՍԻՆ

ՌԱՖՖԻ ԳԻՐԻՃԵԱՆԻ ԷԶԷՆ



Ձեզի կը ներկայացնեմ հա՛յ կնոջ պայքարը իր ընտանիքի հանդէպ: Եւ իր հոգատարութիւնն ու բարեսրտութիւնը հայ ժողովուրդի եւ հայ որբերու հանդէպ:

__Օլկա Բադալ Մաճկալեան (Թումանեան)

(1871 - 1971) _ Հասարակական գործիչ:

Եղած է Յովհաննէս Թումանեանի տիկինը:

Ծնած է 22 Դեկտեմբեր 1871-ին՝ (այդ ժամանակուայ Ռուսական կայսրութեան, Ելիզաւետինկայի նահանգի, Թիֆլիսի Խարխուփ թաղամասին մէջ) :

__ Օլկայի հայրը Բադալ Մաճկալեանը՝ կ'ապրէր Աղստեի մէջ՝ Արեւելեան Հայաստան որ (այժմ կը կոչուի Աղստաֆա Ռայոնու , եւ կը գտնուի Ազրպէյճանի հանրապետութեան մէջ) :

__ Ուրեմն այս պատճառով ընտանիքի հոգը իր վրայ առած էր Օլկայի հորաքրոջ ամուսինը՝ Յովհաննէս քահանայ Մարտիրոսեանը, որ դժբախտաբար կորսնցուցած էր կնոջը եւ իբրեւ քահանայ իրաւունք չունէր երկրորդ անգամ ամուսնանալու: Այնպէս որ ան իր կեանքը կապած էր Օլկայի մօր՝ Շուշանիկ Մաճկալեանի հետ ու որդեգրած անոր մէկ հատիկ աղջիկը: Անոնց ընտանիքի նկատմամբ Տէր Յովհաննէսի մտերմութիւնը՝ շարունակուած է նաեւ Օլկա Թումանեանի ամուսնութենէն յետոյ :

Յովհաննէս Թումանեանը ըլլալով գրագիր յաճախ թուղթեր կը տանէր Յովհաննէս քահանայ Մարտիրոսեանի տունը:

Յետագային Օլկա Մաճկալեանը կ'իմանայ որ մայրը՝ Տէր Յովհաննէսի եւ Ներսէս քահանայ Աբովեանի հետ, առանց իր իմացութեան որոշած են զինք նշանել եւ ամուսնացնել Յովհաննէս Թումանեանի հետ, նշանուելէ ետք՝ Յովհաննէս Թումանեանը ամէն օր ներկայ կը գտնուէր անոնց տան մէջ, կը ճաշէր եւ կը մնար մինչեւ ուշ իրիկուն:

__ 1 Դեկտեմբեր 1888 թուականին տասնըիննամեայ Յովհաննէս Թումանեանը կ'ամուսնանայ տասնեօթամեայ Օլկա Մաճկալեանի հետ:

Անոնք կ'ունենան տասը զաւակ՝



Առաջնեկը Մուշեղ Թումանեան, Արտաւազդ Թումանեան, Համլիկ Թումանեան, Արեգ Թումանեան, Աշխէն Թումանեան, Նուարդ Թումանեան, Թամար Թումանեան, Անուշ Թումանեան, Արփենիկ Թումանեան եւ Սեդա Թումանեան:

— Ամուսնանալէն յետոյ՝ ինչպէս ամէն հայ տիկին կամ կին, հոգատար կ'ըլլայ իր ամուսնոյն նկատմամբ, Օլկա Թումանեանը նոյնպէս հոգատար եղած է Թումանեանի նկատմամբ, օգնած է անոր հնարաւորին դէպքերուն մէջ: Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմեան Հայրիկը հաշուի առնելով Օլկայի հոգատարութիւնը Թումանեանի նկատմամբ՝ կատակով Յովհաննէս Թումանեանին կոչած է Օլկայի 11-րդ զաւակ: Օլկա Թումանեանը իր տան մէջ ամիսներով հիւրընկալած է հայ մտաւորականութեան ներկայացուցիչներու, իր տանը մէջ պահած եւ ինսամած է նաեւ Ալեքսանդրապոլի որբանոցէն ամուսինի՝ Յովհաննէս Թումանեանի բերած որբ մանուկներն ու աղջիկները:

— Իր ամուսնոյն՝ Յովհաննէս Թումանեանի եւ հինգ երեխաներու մահէն յետոյ՝ Թումանեաններու Թիֆլիսեան տան ունեցուածքի մեծ մասը եւ իր ամուսնոյն Յովհաննէս Թումանեանի ձեռագիր ժառանգութիւնը Երեւան կը տեղափոխէ եւ իր աղջիկներուն հետ կը ստեղծէ Յովհաննէս Թումանեանի թանգարանը: Այդ գործընթացքներուն անոր օգնած ու աջակցած է Անաստաս Միկոյեանը:

Օլկա Թումանեանը 1969-ին Երեւանի մէջ Ներկայ եղած է իր ամուսնոյն՝ Յովհաննէս Թումանեանի 100 Ամեակի տօնակատարութեան :

Օլկա Թումանեանը մահացած է 100 տարեկանին 1971 թուականին Երեւանի մէջ՝ ՀԽՍՀ ԽՍՀՄ . Թաղուած է Երեւանի Քաղաքային Պանթէոնին մէջ:

— Օլկա Թումանեանի թոռնուհիի՝ Իրմա Սաֆրազբէկեանի հեղինակութեամբ լոյս տեսած է << Օլկա Թումանեան >>-ի կենսագրական գիրքը:

— Այս գիրքը նուիրուած է Օլկա Թումանեանին ազգային մեծ բանաստեղծի տիկնոջը: Անոր՝ մէկ դար տեւած կեանքը կը ներառէ ամէն տեսակ կատարելագործումի վերելքներ՝ մեծագոյն սերէն մինչեւ դժուարագոյն կորուստներ ու զրկանքներ: Այս ուժեղ հայ տիկինը՝ ո՛չ միայն իր տան օճախի պահապանն էր եւ տասը երեխաներու մայր, այլեւ բանաստեղծի մուսան էր, որ կը ինսամեր անոր եւ արուեստի ստեղծագործութեան համար կը ստեղծէր բոլոր հնարաւոր պայմանները: Ան էր որ պահպանեց Թումանեանի ձեռագիրներն ու անոր արխիւը, ինչպէս նաեւ անոր թանկարժէք գրադարանն ու աշխատասենեակը, Երեւանի մէջ ան յղացած է ա՛յն միտքն ու զաղափարը իր ամուսնոյն հանճարեղ ազգային բանաստեղծի Յովհաննէս Թումանեանի նուիրուած թանգարանի բացման գործը:

— Գիրքին մէջ տեղ գտած են Օլկա Թումանեանի յուշերը, անոր կեանքի պատմութիւնը, ընտանեկան լուսանկարները, իր հարազատներուն անոր ուղարկած նամակները, թոռներու յիշողութիւնները:



ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Եթէ ՀԱՅ ես, պիտի շալկես հայոց պատմութեան ամբողջական բեռը...

Եթէ ՀԱՅ ես, հայրենիքդ պիտի ըլլայ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ, իր Երեւանով, Ստեփանակերտով ու Շուշիով, իր Վանով, Անիով ու Կարսով, իր Պիթիսով, Մուշով, Մասունով եւ հայկական Կիլիկիայով, որպէս մէկ ու անքակտելի ճակատագիր...

Եթէ ՀԱՅ ես, հոգւոյդ մէջ պիտի կրես ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ երազը, ոգին, շունչը...

Եթէ ՀԱՅ ես, քուկդ պիտի ըլլայ Հայաստանի հասցուած մէն մի հարուածը...

ՀԱՅԱՍՏԱՆԸ պիտի ապրի քու մէն մի բջիջիդ մէջ, նեարդերուդ մէջ, հոգւոյդ ու սրտիդ մէջ, եութեանդ մէջ...

Եթէ ՀԱՅ ես, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ մէկ անքակտելի մասնիկն ես եւ վերջ:

.....

Աղմուկ-աղաղակի դար է...Երբ փոքր էինք, մեծերը կը յուշէին.- «Լուռ կեցէ՛ք, հրեշտակներուն ձայնը լսէ՛ նք»...Եւ իրաւամբ ալ, լռութեան մէջ կարելի է որոնել Աստուծոյ, հրեշտակներուն ձայնը...լռութեան մէջ կրնանք լսել բնութեան, տիեզերքի թրթիռը, սրտի տրոփիւնը, ճշմարտութեան ներքին ձայնը...Իսկ աղմուկ-աղաղակը խանգարիչ հանգամանք են միայն:

.....

Դարուս փիլիսոփայութիւնը կամ մտայնութիւնը կ'արհամարհէ ՈԳԻՆ...կարծէք ամէն ինչ օգուտ քաղելու, գործնական նպատակ հետապնդելու, շահ ու մակերեսային հաճոյք ստանալու համար ըլլար...Բայց ի՞նչ օգուտ կամ գործնական նպատակ կրնայ ունենալ ԳԵՂԵՑԻԿԸ...Ի՞նչ շահ կրնայ տալ ԲԱՐԻՆ...Ի՞նչ հաճոյք կրնանք ստանալ ՃՇՄԱՐԻՏԷՆ: Մարդ էակը այսքա՛ն չէր ստորնացած, անոր կեանքին նպատակը այսքա՛ն չէր նսեմացած: Ոգին անտեսելով, մարդը կը վերածուի սոսկ հաշուիչ մեքենայի, ուտել-խմելու համար ապրող անասունի...Գուցէ սա չէ՞ ներկայ մարդուն ապրած ՀՈԳԵԿԱՆ ԱՆՋԿՈՒԹԵԱՆ բուն պատճառը՝ ՈԳԻԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ:

.....

Ժողովրդական առածը կ'ըսէ՝ «Քամի ցանողը փոթորիկ կը հնձէ»...Այդպէս ալ, բարիք ցանողը անպայմանօրէն բարիք կը ստանայ՝ ա՛յս կամ ա՛յն կերպով, վատութիւն ցանողը՝ վատութիւն կը հնձէ...Բարին կը վերադառնայ քեզի՝ ուրախութեան, սրտի գոհունակութեան, խղճի



հանդարտութեան եւ այլ եղանակներով: Անկախ այս հանգամանքէն, ԲԱՐԻՆ ԻՆՔՆ ԻՐ ՄԷՁ ԱՐԺԷՔ Է:

.....

ՀԱՅՐԵՆԻՔԸ ՀՈԳԵԻՈՐ ՏԱՐԱԾՔ Է ԳԵՐԱԶԱՆՑՕՐԷՆ: Եթէ զայն պարպես իր հոգեւոր-բարոյական-մշակութային ԱՐԺԷՔՆԵՐԷՆ, որոնք դարե-դար եւ սերունդէ-սերունդ կերտուէր են ՀՈԳԻԻ եւ ՈԳԻԻ տքնութեամբ, յայնժամ ՀԱՅՐԵՆԻՔԸ կը վերածուի սոսկ աշխարհագրական տարածքի, կամ սովորական բնակավայրի, գոր կարելի է փոխարինել մէկ այլ տարածքով: Մեր անկախութեան աւելի քան երեսնամեայ տարիներուն, ՀՀ քաղաքական վերնախաւը հայրենիքը դիտարկեց սոսկ որպէս իր սեփական ազարակը, գոր պիտի անխնայ շահագործել յանուն միայն սեփական շահերուն...Այս նպատակին կենսագործման համար, անհրաժեշտ էր նաեւ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀՈԳԵԶՐԿՈՒՄԸ, անոր ԱՊԱՄՇԱԿՈՒԹԱՅՈՒՄԸ...Արդե՞ք սա ծրագրաւորուած գործընթաց չէ՞, որ կը միտի ՀԱՅՐԵՆԻՔԸ ԽՈՐՀՐԴԱԶՐԿԵԼՈՒ, ՈԳԵԶՐԿԵԼՈՒ, որպէսզի հնարաւոր ըլլայ անոր ԿԵՂԵՔՈՒՄՆ ու ՅՕՇՈՏՈՒՄԸ:

.....

«Հարցումները աւելի կարելոր են, քան անոնց տրուած պատասխանները», կ'ըսէ նշանակալից կերպով Հելլէն փիլիսոփան...Հարցադրումներն են որ կ'ընդլայնեն մեր խորհրդածութեան դաշտը, մեր մտահորիզոնը, տուն կու տան հոգեմտաւոր փնտռութի, որոնումներու, լարուած կը պահեն միտքը, հոգին, կամքը, չեն թողուր որ մտային ինքնագոհութեամբ լճանանք, ճահճանանք...Մտքի, հոգիի ծուլութիւնը դուրը կը գոցէ ամէն զարգացման դէմ, կամ տեղի կու տայ ուրիշինը ընդօրինակելու, կապկելու գայթակղութեան: Մարդ-անհատն ու ազգը տեսաբար պիտի միտք ածեն, մտածեն, որոնեն, հարցադրեն, քննեն ու վերաքննեն...Սա չէ՞ իրաւ յառաջդիմութեան ուղին:

.....

Հոգիով կը շնչէ ամէն ինչ: Առանց հոգիի, արուեստը կը մեռնի, առանց հոգիի, մեռեալ տառ կ'ըլլայ բառը, խօսքը, քարը առանց հոգիի չի դառնար խաչքար, կամ վանք ու եկեղեցի: Հոգեզուրկ երգը չառիւնքներ բնաւ, գեղանկարը առանց հոգիի կը դառնայ չոր զարդարանք միայն, իսկ առանց հոգիի ու հոգեւորի, հայրենիքը կը դառնայ սոսկ բնակավայր...Հոգիով կը բարբախտ ամէն կեանք ու արուեստ ճշմարիտ...

.....

Ներկայ դարի փիլիսոփայութիւնը՝ ԿՈՂՈՊՈՒՏՆ է, պաշտօնական թէ անպաշտօն, թաքուն թէ բացայայտ, ուղղակի թէ անուղղակի, գիտութեամբ թէ անգիտութեամբ, կամայ թէ ակամայ, քիչ թէ շատ չափերով...Կողոպտուի խաղին մէջ են բոլորը, բայց կան նաեւ սակաւ ընտրեալներ, որոնք դուրս են այս խաղէն եւ կը պատկանին հոգեւոր-բարոյական արժէքներու կամաւորագրեալներու տակաւ նօսրացող բանակին:

.....

Տարիներու թաւալումով, ճիշդ է որ կ'իմաստնանաս կեանքի փորձով, փորձառութեամբ կ'աճիս, սակայն յանդգնութիւնը տակաւ կը նահանջէ մէջդ եւ տակաւ առ տակաւ ծերացած խոհեմութիւնը տեղ կը գտնէ...Իսկ ես կը սիրեմ յանդուգն, խիզախ եւ գեղեցիկ արարքներն ու կեցուածքները...Թող իմաստնութիւնը չձեռքբերուի երբեք յանդգնութեան նահանջով:

.....



Հայ կեանքին մէջ, տարիներու կենսափորձս կը վկայէ որ այնտեղ լուսանցքի վրայ կը մնան՝ իրապէս հայեցի, գիտակից, պատրաստուած, սկզբունքի տէր հայ մարդիկ, եւ հրապարակի վրայ կ'ըլլան ընդհանրապէս միջակութիւններ, քծնողներ, յարմարողներ եւ մանաւանդ կուսակցական կադապարներու մէջ կուրաբար մտնող եւ այնտեղ հլու-հնազանդ ծառայող մարդիկ...Միւսները հայ կեանքի մայր երակէն հեռանալու դատապարտուած են...

.....

ՀԱՅ ՀԻՒԱՆԴ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ...Որքա՛ն սուր ՄԱՐՄԱԶԸ կայ շատերու մօտ՝ ՄԵԾԱՐՈՒԵԼՈՒ, ՓԱՌԱԻՈՐՈՒԵԼՈՒ, ՊԱՏԻՒ ՄՈՒՐԱԼՈՒ՝ այս կամ այն կերպով՝ աշխատանքի մը համար, որուն համար վարձատրուած են ըստ արժանւոյն...Մինչդեռ անդին, ՔԱՆԻՆԵՐ կան, որոնք տարիներու, տասնամեակներու ԱՆՎԱՐՁԱՀԱՏՈՅՑ ՆՈՒԻՐՈՒՄ, ԱՇԽԱՏԱՆՔ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ ունին, բայց ՈՉ ՈՔ կը յիշէ անոնց անունը, ՈՉ ՈՔ թերեւս գիտէ այդ մասին եւ որքան շատ են ՈՒՐԱՅՈՂՆԵՐԸ, ԺԽՏՈՂՆԵՐԸ՝ օրը ցերեկով, աշխարհին ի տես, աչքի տակ Աստուծոյ...ՍԱ Է՞ ՄԵՐ ՆԵՐՔԻՆ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ, զոր կը պահանջենք ՕՏԱՐԷՆ միայն:

.....

ԶԱՐՄԱՆԱԼԻ ՀԱՅ...իբօք որ: Այլոց համար «անհանդուրժելի», ինչպէս յայտնի հայատեաց Lawrence of Arabia-ն կը բնութագրէ զայն, իսկ մենք շատ անգամ անկարող ենք զիրար հանդուրժելու՝ մեր մասնատուածութեամբ, անմիաբանութեամբ, նախանձով, գոռոզամտութեամբ, եսամոլութեամբ...Իսկ եթէ կարենայինք ՀԱԻԱՔԱԿԱՆ ՈՅԺ դառնալ, յայնժամ օտարին համար կրնայինք իսկապէս ալ սպառնալիք դառնալ՝ մեր ստեղծագործական մտքով, հնարամտութեամբ, արարելու եւ մաքառելու ոգիով եւ բազում-բազում այլ կարողականութեամբ...Բայց ես դեռ կը հաւատամ որ այդ օրը պիտի գայ, երբ տակաւ թօթափելով մեր ազգային-հաւաքական մարմնէն մեզ ջլատող տկարութիւնները, պիտի դառնանք ՀԱԻԱՔԱԿԱՆ ՈՅԺ վերջապէս եւ մեր լիարժէք խօսքը պիտի կարենանք ըսել աշխարհին:

Երան Գույումճեան

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Այս աշխարհին մէջ անցողիկ,
Հիւր ենք միայն կեանք-հեքիաթին,
Գոնէ իրար ցաւը զգանք,
Լաւին, վատին ընկեր դառնանք:
.....

Պատռէ՛ դիմակն արդարութեան,
Որով սքողես կեղծիքդ լիբբ,
Պոռնի՛ կ'աշխարհ, չմարդացար,
Դար ու դարեր, նոյնը մնացիր:
.....

Երկընտրանքին մէջ բարդագոյն՝
Բարեկամի՞ն թէ՞ ճշմարիտն,
Ընտրութիւնդ տուր ճշմարիտն,
Ան է սէրը միշտ գերագոյն...
.....

Գաղջ մի ըլլար, գաղջն ոչինչ է,
Ո՛չ տաք, ո՛չ պաղ, անորոշ է,
Զգուշաւոր, վախկոտ մարդն է
Որ այդ վարքը դրսեւորէ...
.....

Հրաշք է կեանքը մեզի տրուած
Լոյսով պայծառ, խորհուրդով մեծ,
Բայց դեռ հրաշքը մենք կ'որոնենք
Մինչեւ մեկնինք անվերադարձ...
.....



Հոգին մարդուն կը վերթէւէ
Կապանքներէն բիր ձերբազատ,
Կ'ուզէ ճախրել անհունին մէջ,
Տիեզերքն է իր բնակարան...

.....

Թէ կարենաս փշրել շղթան մութ գերութեան,
Փոխարինել մի փորձեր զայն այլ գերութեամբ,
Գերութիւնը գերութիւն է, ինչ ալ ըլլայ,
Իսկ դուն հոգւոյդ զուլալ շունչը վայելէ ազատ..

.....

Աշուններս կը թրթռան,
Աշուններս կը դողդղան,
Տերն՝ ի-տերն՝ ի կը մերկանան,
Հոգիիս պէս մնան անզարդ..

.....

Ըրածներս ոչինչ էին
Չըրածներուս ովկեանին մէջ,
Ինչպէս կեանքս ակնթարթ մ'էր
Ժամանակի անհունին մէջ...

.....

Քիչեր միայն սիրտը ընտրեն
Իրենց կեանքի լոյս ուղեկից,
Նենգ հաշիւը ու շիլ շահն են
Որ սահմանեն կեանքի ուղին...

.....

Խաժամուժին մէջ կատարեալ,
Ինչպէ՞ս պիտի գտնես ճամբադ,
Երբ թշնամի ու բարեկամ
Նոյն դիմակով ներկայանան...

.....

Պտղունց մը յոյս թէ չունենաս,
Քիչ մը երագ ու պատրանք ալ,
Կը խեղդուիս առօրեայ ծանր
Մանրութիւններու բիրտ լուծին տակ...

.....

Երազը որքան ալ բարձր ճախրէ,
Նիւթը գետնամած մարդը կը գրաւէ,
Իր ակռաներով երագ կը խժռէ,
Պողպատովն իր բիրտ հոգի կը սպաննէ..



.....

Թղթեայ շերեփնէ՛ր, դուք մեզ օրրեցիք
Դարեր ու դարեր, ժանգ չկապեցիք,
Ձեզմով միշտ արբշիռ, մենք չձուլեցինք
Երկաթեայ շերեփ մեր բաժին ճաշին:

Երան Գույումճեան